



Foreign Language Teaching and Research Press (Beijing)

Գրքի հրատարակությունն իրականացվել է
«Օտար լեզուների ուսուցման եւ հետազոտությունների
հրատարակչության» (Պեկին, Չինաստան) աջակցությամբ:



中华思想文化术语

第8辑，亚美尼亚语版

**Key Concepts in Chinese
Thought and Culture**

(Volume 8, Armenian Version)

Translator - Astghik Atabekyan

Stepanakert 2021

**ՉԻՆԱԿԱՆ ՄՏՔԻ
ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ
ՀԻՄՆԱԿԱՆ
ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

հատոր 8

Թարգմանիչ՝
Ասողիկ ԱԹԱԲԵԿՅԱՆ

ՀՏԴ 1/14:008

ԳՄԴ 87+71

Չ 590

«Գեդարմ» հանդեսի մատենաշար

Չ 590 Չինական մտքի և մշակույթի հիմնական

հասկացություններ: Հատոր 8:

Թարգմ. անգլ.՝ Ա. Աթաբեկյան:

Ստեփանակերտ, «Ոգի-Նաիրի» հր., 2021, 140 էջ

Հայ ընթերցողներին է ներկայացվում չինական միտքն ու մշակույթը հատկանշող հիմնական հասկացությունների հանրագիտարանային մատենաշարի ութերորդ գիրքը: Հատորաշարն աննախադեպ ու բազմաձևավալ մի աշխատություն է, որ հետաքրքիր ու օգտակար կարող է լինել ոչ միայն փորձագետների եւ «Երկնատակի» երկրի սիրահարների համար, այլեւ կգրավի բոլոր նրանց ուշադրությունը, ովքեր ցանկանում են բացահայտել չինական ժառանգության նշանակությունը համաշխարհային քաղաքակրթության մեջ:

Original Chinese-English Text

© Foreign Language Teaching and Research Publishing Co., Ltd.(FLTRP)

Armenian Translation © Foreign Language Teaching and Research Publishing Co., Ltd.

All rights reserved.

ՀՏԴ 1/14:008

ԳՄԴ 87+71

ISBN 978-9939-1-1210-7

© «Ոգի-Նաիրի»/թարգմանության համար, 2021/

**Չինական մտքի և մշակույթի
հիմնական համայնություններ.
Թարգմանական և հաղորդակցական նախագծի
փորձագետներ**

Խորհրդատուներ

Լի Սյունցին
Տրորընս Չյա-ին

Լին Ուսուն
Յե Ջան Ցիչի

Փորձագետների խորհուրդ

Ղեկավար

Հան Ջեն

Անդամներ

Չաո Ֆուլին, Չեն Դեչան, Չեն Մինմին, Ֆեն Ջիվեյ, Հան Չինթայ, Հուան Յուի, Չին Յուանփու, Լի Չիանչժուն, Լի Չաոգո, Լոու Յուլի, Մա Ցյանֆեյ, Նե Չանշուն, Փան Գունքայ, Վան Բո, Վան Նին, Յե Լան, Յուան Չիսի, Յուան Սինփեյ, Ջան Լիվեն, Ջան Սիփին, Ջեն Շուփու

Չինագետներ

Գայ Սալվատորե Ալիթո, Ռոջեր Թ.Էյմս, Մարթին Ջ.Փաուլըս, Բ.Ր.Դիփակ, Վոլֆգանգ Քուբին, Հարի Անդերս Հենսոն, Փոլ Քրուք, Մայքլ Քրուք, Դոն Սթար, Ջան և Ալվրն Ուոլդ, Չարլզ Ուիլմեն

Գիտական խորհուրդ

Բայ Ջենքույ, Ցայ Լիցյան, Չեն Հայյան, Չեն Շաոմին, Ֆու Ջիբին, Գուո Սիաոդոն, Մայքլ Հոար, Հե Շիձյան, Հու Հայ, Հու Չժիֆեն, Հուան Չունյան, Չյա Դեչուն, Չյան Հայլոնգ, Չյան

Հատշու, Լի Ցունշան, Լի Չինլին, Լի Սյուեյթաո, Լին Ման-Չիու, Լյու Յին, Լյու Ջեն, Լյու Յուեհուա, Մեն Սինյուան, Մեյ Ցուանյուե, Մեն Յիննան, Թորսթըն Փեյթերգ, Ջոշուա Մեյսոն, Ցյաո Յուն, Ռեն Դալուան, Շեն Վեյսին, Լինեյ Շի, Սուն Յիֆեն, Թաո Լիլին, Թուն Սյաոհուա, Վան Գանի, Վան Հուեյմին, Վան Բեփին, Վան Լիլի, Վան Լին, Ուան Մինձիե, Վանգ Վեյդոն, Վեյ Յուշան, Վեն Հայմին, Վու Գենյու, Վու Ջիձյե, Սիա Չիսյուան, Սյու Մինցյան, Սյու Յանան, Սյու Ին, Յան Վենբին, Յան Սյուեձյուն, Յան Սյուեդոն, Յան Իրուեյ, Յույ Վենթաո, Յու Լայմին, Ջան Ցյանմին, Ջան Չին, Ջան Սիլին, Ջաո Թուն, Ջեն Բայ, Ջոու Յունֆան, Ջու Լյանցի, Ջու Յուան, Յուո Լի

**Վշտալի տեսարան պատկերի՝ երջանկություն
արտահայտելու համար
այ ձին սին լե 哀景写乐**

Երջանկություն արտահայտելու համար վշտալի տեսարաններ պատկերելը տեխնիկա է, որում համադրվում է հույզն ու պատկերը, և որը տեսարանի նկարագրության միջոցով անուղղակիորեն արտահայտում է հույզերը: Չնայած ուրախ տեսարանների միջոցով տխրությունն արտահայտելը շատ տարածված մեթոդ է, նկարիչները հազվադեպ են վշտալի տեսարան պատկերում ուրախություն արտահայտելու նպատակով: Այսպիսով, մենք կարող ենք ավելի լավ հասկանալ վերջին տեխնիկան՝ այն համեմատելով առաջինի հետ: Երկուսն էլ բնապատկերի նկարագրության միջոցով հույզերն անուղղակիորեն արտահայտելու տեխնիկական միջոցներ են: Հույզերն ու բնապատկերը հրաշալիորեն լրացնում են իրար և փայլուն համադրվում են՝ այդպիսով ստեղծագործություններին հաղորդելով գեղագիտական նրբագեղություն և յուրօրինակ ու մնայուն հմայք:

Մեջբերումներ 引例.

«Երբ հեռանում էի այստեղից, ուռենիները մեղմ օրորվում էին քամուց: Հիմա վերադարձել եմ, և օդում պար են բռնել ձյան փաթիլները»: Այս բանաստեղծն ուրախ տեսարան է նկարագրում՝ տխրությունն արտահայտելու, և վշտալի տեսարան՝ երջանկությունն արտահայտելու համար՝ այդպիսով ուժեղացնելով երկու հույզերն էլ: (Ուան Ֆուչի. «Կցկփուր մեկնաբանություններ պոեզիայի մասին. Ginger Studio»)

Թվում է՝ հույզերն ու բնապատկերը տարբերվում են միմյանցից, բայց իրականում հնարավոր չէ առանձնացնել դրանք: Լավ բանաստեղծը գիտի՝ ինչպես աննկատ միավո-

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

րել այդ երկուսը: Հույզի ու բնապատկերի հմուտ համադրությունը նշանակում է, որ բնապատկերը լի է հույզերով և՛ հակառակը: (Ուան Ֆուչի. «Մեկնաբանություններ պոեզիայի մասին. Ginger Studio»)

**Սիրիր երկիրն այնպես, ինչպես ընտանիքն են սիրում
այ գուտ ու օրհա 爱国如家**

Ի սկզբանե, գաղափարը նշանակում էր, որ թագավորները, արքայազնները և այլ կառավարիչներ պետք է սիրեն իրենց թագավորություններն ու իրենց ժողովրդին, ճիշտ այնպես, ինչպես սեփական ընտանիքն են սիրում: Պատճառն այն է, որ Հին Չինաստանում ընտանիքն ու պետությունը կառուցվածքային առումով նույնն էին: Հետագայում այս հասկացությունը վերածվեց բարոյական արժեքի, որը փայփայում էր ողջ հայրենասեր ժողովուրդը: Սա նշանակում է, որ բոլոր նրանք, ովքեր սիրում են իրենց հայրենիքը, սերտ կապված են միմյանց հետ, ասես նույն ընտանիքից են, ուստի պիտի սիրեն իրենց երկիրն ու ժողովուրդն այնպես, ինչպես ընտանիքն են սիրում: Երկիրը սիրելը չինացիների վաղեմի ավանդույթն է, նրանց հոգու խորքում է և բոլոր չինացիների ամուր համոզմունքն է, ինչը նրանց տալիս է պատկանելության ընդհանուր զգացում:

Մեջբերումներ 引例.

Ֆեոդալ ղեկավարներ նշանակելն ու նրանց պաշտոնները ժառանգական դարձնելը նրա համար էր, որ սիրեն իրենց ժողովրդին այնպես, ինչպես սեփական երեխաներին են սիրում, սիրեն իրենց թագավորությունն այնպես, ինչպես սեփական ընտանիքն են սիրում: (Սուն Յուն. «Հան դինաստիայի ժամանակագրություն»)

Ազնիվ մղումներով մարդը սիրում է իր երկիրն այնպես, ինչպես իր ընտանիքն է սիրում: (Գե Հուն. «Բաոփուցի»)

Քոնապետական կառավարում բադաո 霸道

Եզրույթը վերաբերում է պետության կառավարմանը ուժի ու իշխանության միջոցով՝ ի հակադրություն «բարեգութ կառավարման»։ Ջոու դինաստիայի կառավարող արքունիքը սկսեց անկում ապրել Գարնան և աշնան ժամանակաշրջանում, մինչդեռ վասալ պետություններից մի քանիսն ուժեղացավ։ Որոշ պետությունների կառավարիչներ՝ դքսեր կամ արքայազններ, պահպանում էին սոցիալական կարգը՝ մանիպուլյացիայի ենթարկելով գահին ու այլ պետական կառավարիչների։ Որոշ պետություններ ավելի հզոր էին, քան մյուսները։ Նրանց կառավարման սկզբունքներն ու քաղաքականությունը դիտարկվում էին որպես բոնապետական կառավարում։ Կառավարման մեջ նրանք արժևորում էին ոչ թե բարեգործությունն ու բարոյական սկզբունքները, այլ շահն ու իշխանությունը։ Առաջնորդվում էին ոչ թե բարոյական սկզբունքներով, այլ՝ բիրտ ուժով, կառավարում էին ոչ թե բարոյական խրատներով, այլ՝ հարկադրանքով։ Արհամարհում էին էթիկան ու մարդկանց ստիպում ապրել վախի մթնոլորտում։ Միակ բանը, որի մասին մտահոգվում էին, իրենց պետությունների շահն էր։ Այս պրակտիկան դեմ էր չինացի ազգի փիլիսոփայությանը, որն իր պատմության ողջ ընթացքում խրախուսել է խաղաղությունն ու ներդաշնակությունը, այլ ոչ թե ուժը։ Հնագույն ժամանակներից ի վեր Չինաստանը կարևորում է բարեգործ կառավարումը և մերժում դեսպոտիկ կառավարումը։ Սա հեգեմոնիային և իշխանության քաղաքականությանը հակադրվող չինական գաղափարի պատմական ու մշակութային հիմքն է։

Մեջբերումներ. 引例.

Միապետը, որն արժևորում է բարոյական և արդար կառավարումը, կկարողանա հասնել բարեգործ կառավարման.

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

միապետը, որը հմուտ սաղրիչ է և իշխանություն է ձեռք բերում պատերազմի միջոցով, իրականացնում է բռնապետական կառավարում: (Գուանցի)

Նրան, ով գահին տիրանում է ուժով՝ բարեգործության ու արդարության անվան տակ, պետք է մեծ պետություն՝ որպես իշխանության հիմք: Նա, ով գահ է բարձրանում՝ խրախուսելով բարոյականությունն ու բարեգործությունը, մեծ պետության կարիք չունի... Մարդկանց ուժով հնազանդեցնելու դեպքում անհնար է ստիպել, որ նրանք իրենց կամքով ենթարկվեն օրենքին: Նրանք ուղղակի չափազանց թույլ են ու չեն դիմադրի: Մարդկանց բարոյականությամբ հնազանդեցնելու դեպքում նրանք կամավոր կենթարկվեն օրենքին: Այն, թե Կոնֆուցիոսի 7 աշակերտներն ինչպես էին մեծարում իրենց վարպետին, լավ օրինակ է: (*«Մենցիու»*)

Մարդը, ով կառավարում է պետությունը՝ պահպանելով բարոյականությունն ու արդարությունը, կարող է դառնալ ամբողջ երկրի հարգված կառավարիչ: Անկեղծորեն և ազնվությամբ նա կղեկավարի նաև վասալ պետությունները, մինչդեռ սաղրանքներն ու դավադրությունները միայն կհանգեցնեն կործանման: (Մունցի)

**Բենուու / Նախաստեղծ չ-էություն
բենվու 本无**

Բենուու կամ նախաստեղծ չ-էություն եզրույթը նշանակում է դատարկություն: Արևելյան Չին դինաստիայի փիլիսոփայական դպրոցներն այն օգտագործում էին՝ Պրաժնապարամիտայի գրականության («Իմաստության կատարելությունը») դատարկության դոկտրինը հիշատակելիս՝ պնդելով, որ իրերն ըստ էության անգո են: Սեն Ջաոյի (384 կամ 374-414) և մյուսների կարծիքով՝ այս հայեցակետի ծուղակն այն է, որ ընդգծելով բացարձակ դատարկությունը՝ այն հակ-

ված է նիհիլիզմի (որը կտրականապես մերժում էին բուդդայական դոկտրինները): Մեն Ջաոն, այսպիսով, քննադատում էր այն իր ստեղծագործություններում. հաստատվում էր ոսկե միջինը (որը հեռու էր նիհիլիզմի և հավերժականության երկու ծայրահեղություններից)՝ այսպիսով մեկնաբանելով դատարկությունը՝ որպես կախյալ ծագում: Բենուու եզրույթը հանդիպում է նաև հետագա սերունդների աշխատություններում: Որոշ դեպքերում, սակայն, այն ընկալվում էր որպես «դատարկությունը՝ որպես կախյալ ծագում», այլ ոչ թե «բացարձակ դատարկություն»: Այսպիսով, պետք է զգույշ լինել տարբեր պատմական համատեքստերում:

Մեջբերում 引例.

«Նախաստեղծ չ-էություն» ուսմունքի քննարկման հիմնական թեման «ոչինչն» է: Նրանք մերժում են «էությունը», որովհետև այն անգո է: Նրանք նաև մերժում են «չ-էությունը», որովհետև այն նույնպես անգո է: Բայց եթե ուսումնասիրենք այն գրերը, որոնց նրանք հղում են անում, պարզ կլինի, որ այս տեքստերն ըստ էության մերժում են իրական «էությունը»՝ այն անվանելով «չ-էություն», մինչդեռ մերժում են իրական «չ-էությունը»՝ որպես նյութականացված չ-էության հերքում: Այդ դեպքում ինչո՞ւ են պնդում, որ «էության» հերքումը բացարձակապես անգո է, իսկ «չ-էության» հերքումն իրականում գոյություն չունի: Որքա՞ն դատարկություն կա դրանցում: Ինչպե՞ս կարող են անարգել մուտք գործել իրականություն և մոտենալ իրերի ճշմարիտ էությանը (Մեն Ջաո. «Մեն Ջաոյի քննախոսությունը»):

**Չորքերը պիտի առաջ շարժվեն հոսող ջրի պես
բին սին սիան շույ 兵形象水**

Չորքերը պետք է առաջ շարժվեն հոսող ջրի պես: Այս ռազմական կոնցեպտը ձևակերպել է հնագույն ռազմագետ

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

Մունցին (մթա. 545-470): Սա նշանակում է, որ ճակատամարտ վարելիս պետք չէ կառչել նախապես որոշված ծրագրից: Կախված հատուկ իրադրությունից՝ հապճապ շտկումներ պետք է արվեն՝ սեփական ուժերը լավագույնս օգտագործելու և թուլությունները շրջանցելու համար, ինչպես ջուրն է տարբեր ձև ընդունում, երբ հոսում է երկրի մակերեսով: Այս գաղափարն այսօր հայտնի է որպես ճկուն մարտավարության և ռազմավարության կիրառում՝ ռազմաճակատում նախաձեռնողականություն ձեռք բերելու համար:

Մեջբերում 引例.

Ջորջերը պետք է առաջ հոսեն ջրի պես: Ջուրը որոշակի ձև է ստանում բարձրությունից ցած հոսելիս. գորքերը հարձակվում են թույլ կետերի վրա և խուսափում են ուժեղ կետերից: Ջուրը հոսում է՝ ստանալով հողի ձև. գորքերը հաղթանակի են հասնում՝ կախված թշնամու իրավիճակից: Այսպիսով, չկա գորքերի սահմանված ձև և ջրի հստակ ձև: Նա, ով կհաղթի՝ հասկանալով թշնամու իրավիճակը, կարող է կոչվել աստվածային հրամանատար (*«Պատերազմի արվեստը»*):

**Պատերազմը մղում են՝ բռնությունը կանխելու և չարիքն արմատախիլ անելու համար
բին ջե, սուոյի ձին բաո չու հայ յե 兵者, 所以禁暴除害也**

Պատերազմի նպատակն է՝ կանխել բռնությունն ու վերացնել չարիքը: Հին Չինաստանում մարդիկ պատերազմը համարում էին բռնի գործողություն, որը դեմ է մարդկային էությանը, և որին դիմում են՝ որպես ծայրահեղ միջոցի: Եթե պատերազմն անխուսափելի է, այն պետք է մղել արդարությունը պահպանելու համար: Պատերազմի մասին այս տեսակետը պահպանվել է մինչ օրս:

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

Մեջբերումներ 引例.

Ձինվորները մասնակցում են պատերազմին՝ բռնությունը կանխելու և չարիքը վերացնելու, այլ ոչ թե գծտուքանը մասնակցելու և ամեն ինչ ուժով գրավելու համար (Սուն Ցզի):

Պատերազմը մղում են՝ բռնությունը դադարեցնելու և չարիքը ճնշելու համար (Հուայնանցի):

Հին ժամանակներում հինգ տեսակ զենք էին պատրաստում՝ ոչ թե միմյանց վնասելու, այլ բռնությունը կանխելու և չարիքը ճնշելու համար (*Հան դինասարիսյի պարմությունը*):

Չտարվել պատկերված առարկաներով,

բայց և չանջատվել դրանցից

բու նիան բու տուտ, բու ջի բու լի 不黏不脱, 不即不离

Պոեզիա գրելիս բանաստեղծները չպետք է լիովին կառչեն և միևնույն ժամանակ չպետք է չափազանց շեղվեն պատկերված առարկաներից: Այս եզրույթը ներառում է երկու կողմ՝ բառերի, պատկերների և պատկերված առարկաների հարաբերությունը և բանաստեղծության թեմայի և պատկերված առարկաների հարաբերությունը: Սա ընդգծում է, որ եթե պատկերված առարկաները շատ նման են սուբյեկտին, ապա բանաստեղծությունը ձանձրալի ու միապաղաղ է հնչում, բայց եթե պատկերված օբյեկտները չափազանց հեռանան սուբյեկտից, բանաստեղծությունը մակերեսային ու հորինված կթվա: Բացի պատկերից, առարկաներին նվիրված ներբողները պետք է հաղորդեն ներիմաստ, որը չի կարելի պարտադրել: Հակառակ դեպքում, ամենայն հավանականությամբ, դրանք կվերածվեն կարծրատիպի: Առարկաներին նվիրված գերազանց ներբողներ կարող են ստեղծվել միայն այն ժամանակ, երբ առարկաների պատ-

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

կերման և ներիմաստային հույզերի միջև պատշաճ հավասարակշռություն պահպանվի:

Մեջբերումներ 引例

Առարկաներին նվիրված ներբողներ գրելու դժվարությունն այն է, որ պետք է խուսափել, մի կողմից՝ պատկերված առարկաներից կառչելուց, մյուս կողմից՝ դրանցից լիովին անջատվելուց: Այսպես ստեղծված բանաստեղծությունը կլինի չքնադ, բնական ու նրբագեղ (Յուան Մեյ. «*Լրացուն պոեզիայի մասին Սույյուանի դիպարկումներին*»):

Առարկաներին նվիրված լավագույն ներբողները, ըստ Ջեն փիլիսոփայության, չպետք է չափազանց նման լինեն իրական կյանքի առարկաներին, և միևնույն ժամանակ նաև չպետք է շատ հեռու լինի դրանցից: Հին ժամանակներից ի վեր բազմաթիվ բանաստեղծություններ են գրվել ծաղկած սալորենիների մասին: Օրինակ, Լին Հեջինի բանաստեղծական եզրույթները, ինչպիսիք են ծաղկած սալորենիների «նուրբ բույրը» և «ցրված ստվերները», դարեր շարունակ փոխանցվել են սերնդեսերունդ, բայց Հուան Շանգուն նշել է, որ Լինի այս տողերն ավելի լավն են. «Կիսով չափ ծաղկած սալորենիների այգում ձմռան ձյունից հետո, գետակի ափին՝ ցանկապատի վրայով երևում է թեք ճյուղը»: Խորաթափանց մարդիկ հավատացած են, որ Սու Շիի բանաստեղծական տողը՝ «Սքանչելի է միակ ճյուղը, որ կախվել է բամբուկի պուրակում», հավասարը չունի, և միայն նրանք, ովքեր իսկապես գիտեն գնահատել պոեզիան, հասկանում են, թե ինչու է այդպես (Ուան Շիջեն. «*Հուան Կունչենի «Ներբող ծաղկած սալորենուն» բանաստեղծության հերգրություն*»):

**Գործիւր առանց տեսութեան ու տրամաբանութեան:
Աշխատիւր չընկնել լեզվի ծուղակները
բու շե լիւու, բու լուտ յանչուան 不涉理路, 不落言筌**

Լեզուն կիրառելիս բանաստեղծները չպետք է մտահոգ-վեն տեսութեամբ, տրամաբանութեամբ կամ որևէ այլ պայ-մանականութեամբ: Յյուանը (筌), որն ի սկզբանե բանբու-կով ձկնորսական գործիք էր, ավելի ուշ օգտագործվել է որ-պէս բանաստեղծական ստեղծագործութեան լեզվաբանա-կան սահմանափակման ցանկացած ձև: «Լեզվական ծու-ղակ» եզրույթն առաջին անգամ առաջարկել է Սուն դիմաս-տիայի պոետիայի տեսաբան Յան Յուն իր «Յանլանի պոե-զիայի քննադատություն» ստեղծագործութեան մեջ՝ աշխա-տություն, որը նվիրված է պոետիայի ուսումնասիրութեանն ու ստեղծմանը: Սա կարելի է նմանեցնել «նորը խորաթափան-ցություն» գաղափարին: Պոետիան ենթադրում է մտածողու-թեան հստակ միջոցներ և գեղագիտական պահանջներ: Ըստ էութեան, այն պետք է արտահայտի բանաստեղծի զգաց-մունքներն ու տրամադրությունը և ընդգծի վայրկեանական զգացմունք, այլ ոչ թէ տեսություններ բացատրի կամ ցու-ցադրի սեփական գիտելիքները: Պոետիա ուսումնասիրողնե-րը պետք է նաև խուսափեն լեզվի օգտագործման մեջ իրենց տեսություններով կամ պայմանականություններով շղթայվե-լուց:

Մեջբերումներ 引例.

Պոետիան ունի հստակ խնդիր. այն գրքի ուսումնասիրու-թյունն է: Այն նաև ունի հստակ գեղարվեստական ճաշակ և չի սահմանափակվում տեսություններով: Այնուամենայնիվ, եթե բանաստեղծները շատ չկարդան և չհետևեն բանակա-նութեանը, նրանց բանաստեղծությունները երբեք չեն հասնի կատարելութեան: Բարձրակարգ պոետիան չի սահմանա-փակվում տեսութեամբ, տրամաբանութեամբ կամ պայմանա-

կանություններով (Յան Յու. «Յանլանի պոեզիայի քննադատություն»):

Բամբուկից պատրաստված ձկան թակարդն օգտագործվում է ձուկ բռնելու համար, բայց հենց որ ձուկը բռնվի, ծուղակի մասին կմոռանան: Ծագարների ցանցն օգտագործվում է ճագարներ բռնելու համար, բայց հենց որ ճագարը բռնվի, ցանցի մասին կմոռանան: Բառերն օգտագործվում են իմաստ արտահայտելու համար, ուստի պիտի մոռանաք բառերը, հենց որ ըմբռնեք իմաստը (Ջուանցի):

**Չևով տարբեր, բայց հոգով՝ նման
բուսիջիսի 不似之似**

Սա պատահում է, երբ նկարիչները միտումնավոր չեն ձգտում կրկնօրինակել արվեստի գործերը և պատկերված առարկաները, այլ ամեն ջանք գործադրում են՝ հոգևոր նմանության հասնելու համար: Սա նաև հայտնի է որպես «ձևով տարբեր, բայց հոգով նման» սկզբունք: Գեղանկարչության չինական տեսությունը Թան, Սուն և Յուան դինաստիաներում ընդգծում է հոգու և ձևի նմանության կարևորությունը: Ստեղծագործական վերնախավը, որը ներկայացնում է Շի Թանն (1641-1718?) Սին դինաստիայից, չէր ընդունում թե՛ այն գաղափարը, որ նկարիչը պետք է առաջնահերթություն տա խոր գեղարվեստական մթնոլորտին՝ ձևական նմանության հաշվին, թե՛ այն միտքը, որ նկարչի միակ պարտականությունն է՝ կուրորեն կրկնօրինակել ձևը: Նրանք համոզված էին, որ արվեստի իդեալական ստեղծագործությունը «տարբեր է, բայց միևնույն ժամանակ՝ նման»: «Տարբեր» նշանակում է, որ նկարիչը պետք է նկարի ազատորեն, հրաժարվի հնացած մեթոդներից և չձգտի չափազանց մեծ ձևական նմանության: «Նման» նշանակում է, որ նկարը պետք է հիմնված լինի իրական կյանքի վրա, իսկ նկարիչները պետք է ձգտեն ոգու նմանության: Նման ոգու մեջ տար-

բեր ձևեր թույլ տալու այս սկզբունքը հետաքրքիր հավասարակշռություն է ստեղծում գեղարվեստական իրականության և առօրյա կյանքի իրականության միջև:

Մեջբերումներ 引例.

Այսօր որոշ նկարիչներ որոշ վրձնահարվածների միջոցով անվտոգորեն ցույց են տալիս իրենց թեթև վարպետությունն ու նուրբ պարզությունը, մինչդեռ այլք հիմարաբար ծանրաբեռնում են իրենց ստեղծագործությունները խճճված կառույցներով ու անտեղի մանրամասներով: Նրանք մշտապես ասում են, որ առանձնապես չեն մտահոգվում ձևական նմանությամբ՝ չիմանալով, որ հնում, երբ նկարիչներն ասում էին, թե չեն ձգտում ձևի նմանության, իրականում ձգտում էին ոգու նմանության: Նրանք, որ չեն տիրապետում ոչ պարզությանը, ոչ բարդությանը, ինչպես՞ են համարձակվում համեմատվել մեծ նկարիչների հետ (Ուան Ֆու. *«Ինչպես սրեղծել գեղանկարչական և վայելչագրական սրեղծագործություն»*):

Հայտնի սարեր կարելի է այցելել, բայց չի կարելի նկարել դրանք: Եթե գեղանկարը չափից շատ նման լինի սարին, նկարում սարն անբնական տեսք կունենա: Երբ սարերը պատկերեք առեղծվածային ու խճճված, ձևով տարբեր, բայց ոգով նման, ձեր վրձնի տակ դրանք ճնշված ու վիատ տեսք կունենան (Շի Թաո. *«Դադիցիի՝ գեղանկարների նկատմամբ բանաստեղծությունների մեկնաբանություն»*):

Երկինքն ու երկիրը միաձուլվում են ներդաշնակ ամբողջության մեջ և միմյանցից առանձնանում են տարվա չորս եղանակների ցիկլով: Նկարիչները պետք է օգտագործեն ավելի մուգ կամ բաց գույներ, որպեսզի առարկաները համապատասխանաբար երևան բարձր կամ ցածր, մոտ կամ հեռու: ԾՂգրիտ նմանությունը նյութական նմանություն է՝ անկախ ձևի նմանությունից: (Շի Թաո. *«Դադիցիի՝ գեղանկար»*):

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

ներին մակագրված բանաստեղծությունների մեկնաբանություններ»):

**Դատարկությունը՝ որպես աննյութականություն
բուջենկուն 不真空**

«Դատարկությունը» բացարձակ ոչինչ չէ: Ավելին, այն ընդգծում է այն փաստը, որ գոյությունը հավերժ չէ: Այս եզրույթն ամենայն մանրամասնությամբ բացատրում է Սեն Ջաոն (384 կամ 374-414), որը դեմ էր այն տեսակետներին, որոնք բխում են նախաստեղծ չ-էության գաղափարի տարրնթերցումից Արևելյան Չին դինաստիայում: «Դատարկությունն աննյութականություն է» գաղափարի մեկնաբանություններին հիմնականում մոտենում են երկու ճանապարհով. առաջին, իրերը դատարկ են, որովհետև իրական չեն, հետևաբար՝ բոլոր դիարմաների աննյութականությունը ստեղծելու համար են, և երկրորդ, դատարկությունն ինքնին իրական չէ, հետևաբար՝ կեղծիքը բացարձակ ստից տարբերակելու համար է:

Մեջբերում 引例.

Քանի որ էությունն իրական չէ, մենք այն անվանում ենք «աննյութական», ու քանի որ այն ոչ իրական է, անվանում ենք դատարկություն: (Շի Յուանքան. «Սեն Ջաոյի քննախոսության մեկնաբանություններ»:)

**Բնության կոնստանտ օրենքները
չան 常**

Եզրույթը վերաբերում է բնության օրենքների կոնստանտ կամ օրինաչափ լինելուն: Հին չինացիները հավատացած էին, որ տիեզերքում ու մարդկային հասարակության կյանքում երևույթները կառավարվում են իրենց շարժման կոնստանտ օրենքներով: Մարդիկ այս օրենքները բնութագրում

են որպէս «կոնստանտ» և երբեմն անվանում են «կոնստանտ միջոցներ» կամ «կոնստանտ սկզբունքներ»: «Կոնստանտը» փոփոխության հակադրությունն է, բայց մաս սերտորեն կապված է «փոփոխության» հետ: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ սրանք բնական օրենքներ կամ օրինաչափություններ են, որոնց ենթարկվում են բոլոր երևույթները, դրանք կայուն են ու անփոփոխ: Բայց այս կայուն բնական օրենքները դրսևորվում են հազարավոր փոփոխվող երևույթների միջոցով: Շարունակական փոփոխությունների մասին իմանալով՝ մարդիկ կարող են որոշել և հասկանալ դրանց հիմքում ընկած կոնստանտ օրենքները կամ սկզբունքները:

Մեջբերումներ 引例.

Բնության երևույթները կոնստանտ են: Դրանց գոյությունը պայմանավորված չէր Յաոյի գահ բարձրանալով, իսկ անհետացման պատճառն էլ այն չէր, որ կառավարիչը Չիեն էր (Մուն Յզի):

Բնության մեջ իրերը բազմաթիվ են ու բազմազան և ի վերջո վերադառնում են իրենց արմատներին: Արմատին վերադառնալը նման է հանդարտություն վերագտնելուն: Հանդարտությունը նման է կյանքի նախնական վիճակին վերադառնալուն: Կյանքի նախնական վիճակին վերադառնալ՝ նշանակում է վերադառնալ կոնստանտին: Իմանալ, թե ինչ է կոնստանտը, իմաստություն է: (Լաոցզի)

Պոեզիա գրիր՝ զգացմունքներդ ու ձգտումներդ արտահայտելու համար
չեն շի ջան յի 陈诗展义

Այս եզրույթը, որը վերաբերում է պոեզիա ստեղծելու համար անհրաժեշտ մոտիվացիային, առաջին անգամ կիրառել

է Հարավային դինաստիայի պոեզիայի տեսաբան Ջուն Ռուն (468?-518) իր «Պոեզիայի քննադատության նախաբան» գրքում: Նա ընդգծել է, որ եղանակային փոփոխություններն ու մարդկանց հանդիպումներն ազդում են բանաստեղծի ստեղծագործական գործունեության վրա՝ պնդելով, որ բանաստեղծն իր ստեղծագործության միջոցով ցույց է տալիս իր ներքին զգացմունքներն ու ձգտումները: Ջունի բանաստեղծական գեղագիտությունը, ընդունելով արտաքին աշխարհի դերը բանաստեղծներին ոգեշնչելու գործում, նաև արժևորում էր պոեզիայի յուրօրինակ գեղագիտական արժեքը: Այս տեսակետն ակնհայտորեն ավելի հասուն էր, քան «բանաստեղծություններ գրել միայն բարոյագիտական դաստիարակության համար» գաղափարը, որը պաշտպանում էին Հան դինաստիայի կոնֆուցիական գիտնականները:

Մեջբերում 引例.

Բանաստեղծներին ոգեշնչում են գարնան քամին ու թռչունները, աշնան լուսինն ու ճպուռները, ամառվա ամպերն ու անձրևը, ձմեռվա լուսինն ու սառը եղանակը, տարվա եղանակների ու եղանակային պայմանների ցիկլերը, և նրանք պոեզիա են ստեղծում: Գրում են նրանք գեղեցիկ հավաքույթների ընթացքում՝ պատկերելով մարդկային մտերմությունը, կամ, եթե միայնակ են ապրում, արտահայտելով իրենց վիշտը: Ինչ վերաբերում է Ցու Յուանին, ով ստիպված էր լքել Չու թագավորության մայրաքաղաքը, Ռան Ջաոչունին, որ հարկադրված էր հրաժեշտ տալ թագավորական արքունիքին, դիերին, որոնք հյուսիսում ընկած էին ամենուր, կամ ուրվականներին, որ հետապնում էին օդում թևածող օշինդրը... այս ամենը հուզում է հոգին՝ բանաստեղծին ստիպելով բանաստեղծություն գրել ու արտասանել՝ որպես զգացմունքներն ու ձգտումներն արտահայտելու միջոց: (Ջուն Ռուն. «Պոեզիայի քննադատության առաջաբան»)

**Ծեծված արտահայտությունների վերացման
անհրաժեշտություն**

չեն յան վու ցու 陈言务去

Այս եզրույթն ունի երկակի նշանակություն: Նախ, այն վերաբերում է էսսեն ծեծված բառապաշարից ազատելու անհրաժեշտությանը: Երկրորդ, այն հեղինակներին խրախուսում է ստեղծագործելիս ազատվել միջակ, անանցյալ գաղափարներից: Այս եզրույթն առաջադրել է Թան դինաստիայի գրող Հան Յուն (768-824) արձակ գրելու մասին: Հանն ընդգծում էր, որ էսսեները պետք է գրվեն նորարարական ձևով: Նա խուսափում էր կարծրատիպային արտահայտություններից ու փաստարկներից և դեմ էր պայմանականություններին: Այս տեսակետը «գրել՝ մեկնաբանելով Դաոն» գաղափարի արձագանքն է, որն առաջադրել է Հան Յուն Դասական արձակի շարժման ընթացքում, որի առաջնորդն էր նա, շարժում, որ նպատակ ուներ ի օգուտ Հան դինաստիայի հնագույն արձակի հրաժարվել ռիթմիկ արձակից, որին բնորոշ էր զուգահեռականությունը և ճոռոմաբանությունը:

Մեջբերումներ 引例.

Որքա՞ն բարդ ու հոգնեցուցիչ է բոլոր ծեծված բառերն ու փաստարկները հեռացնելը, երբ մարդը գրում է այն, ինչ զգում է (Հան Յու. «Պարասիսան նամակ Լի Յիին»):

Դու Ֆուի պոեզիան չի տարբերվում Հան Յուի արձակից. երկուսն էլ մերժում են կարծրատիպային բառամթերքը: Հուան Թինձիանը և Չեն Շիդաոն այդ առումով համակարծիք էին Դու Ֆուի տեսակետի հետ: (Լիու Սիցայ. «Գրական րե-ստությունների ակնարկ»)

**Չենի տան դարպասի մոտ, ձյան տակ կանգնած
չենմեն-լիսյուն 程门立雪**

Հյուսիսային Սուն դինաստիայում Յան Շին (1053-1135) իր ընկերոջ՝ Յու Յուոյի (1053-1123) հետ այցի գնաց ականավոր գիտնական Չեն Յիին (1033-1107), որպեսզի ստանա իր որոշ հարցերի պատասխաններ: Չենը ննջում էր: Որպեսզի չխանգարեն նրան, սպասեցին դարպասից դուրս, առատ տեղացող ձյան տակ: Երբ Չենն արթնացավ, շատ հուզված էր և մանրամասն պատասխանեց Յան Շիի հարցերին: Հետագայում Յանը դարձավ մեծ գիտնական: Նրա պատմությունն ուսանողներին ստիպում է դասեր քաղել իրենց ուսուցիչներից: Նմանատիպ մի պատմություն էլ պատմում է Չեն բուդդիստական մի տեքստ: Բուդդիստական վանական Հույկեն խորհրդի համար դիմում է Հոդիդիարմային, որը, ըստ ավանդության, Չեն ուսմունքը տարածել է Չինաստանում: Հույկեն նույնպես երկար ժամանակ զիջերն առատ ձյան տակ սպասում էր Հոդիդիարմայի կացարանի մոտ: Այս պատմությունները ցույց են տալիս, որ ուսուցիչների հանդեպ հարգանքը դեռևս հնագույն ժամանակներից եղել է չինացիների մեծագույն ավանդույթներից մեկը:

Մեջբերումներ 引例.

Մի օր Յան Շին գնաց Չեն Յիին այցի: Վերջինս ննջում էր, ուստի Յան Շին և նրա ուղեկիցը՝ Յու Չուոն, դրսում սպասեցին: Երբ Չենն արթնացավ, դրսում՝ իր դարպասի մոտ, ձյան բարձր շերտ էր: *(Սուն դինաստիայի պատմությունը)*

Եվ այսպես, Հույկեն այցի էր գնում Բոդիդիարմային և արևածագին ու արևամուտին խնամում էր նրան: Վարպետը մշտապես նստում էր դեմքով դեպի պատը, ոչ մի խորհուրդ չէր տալիս ու չէր քաջալերում... Այդ տարվա տասներկու-

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

րորդ ամսվա իններորդ օրվա գիշերն առատ ձյուն տեղաց: Հուլյեն մնաց Բողհիդիարմայի կողքին, ու մինչև լուսաբաց ձյունն արդեն հասել էր նրա ծնկներին: (Շի Դաոյուան. *Բուդդիստական ուսմունքները Սուն դինաստիայի Ջենցուն կայսեր Չինդե քազավորության օրոք*):

Ընդհանուր որակների գնահատում չենցի 程器

Այս եզրույթը վերաբերում է գիտնականի ունակությունների և գրական տաղանդի համակողմանի գնահատմանը: Այն առաջադրել է Լիու Սիեն (465?-520) Հարավային դինաստիաներից՝ «Գրական միտքն ու վիշապներ քանդակելը» գրքի իր գրախոսության մեջ: Այստեղ չեն-ը (程) նշանակում է գնահատել. ցի (器) եզրույթը վերաբերում է մարդու բարոյական կերպարին, կառավարելու կարողությանն ու գրական տաղանդին: Լիուի կարծիքով՝ Հան և Ուեյ դինաստիաներից ի վեր որոշ գիտնականների կշտամբում էին վատ վարքի կամ քաղաքական ու ռազմական գործերը կարգավորելու անկարողության համար: Մա նաև վնասում էր նրանց գրական հեղինակությանը: Այսպիսով, նա գիտնական-պաշտոնյաներին խորհուրդ էր տալիս ոչ միայն ունենալ գրողական հմտություններ, այլև գերազանցության հասնել բարոյական տեսանկյունից և արժանի գործեր անել երկրի համար: Նա հավատացած էր, որ առաքինի մարդը պետք է կառչի վեհանձն իդեալներից, լինի իրազեկ և խորաթափանց, բազմակողմանի զարգացած, և այդ դեպքում կհասնի իր նպատակներին: Նա ընդգծում էր, որ անհրաժեշտ է գիտնական պաշտոնյային դատել ըստ իր խոսքերի և բարոյական կերպարի, ինչպես նաև մատուցած ծառայությունների:

Մեջբերումներ 引例.

Տաղանդավոր մարդկանց հավաքագրելուց հետո Հան դի-

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

նաստիայի Վու կայսրն անմիջապես ստուգեց նրանց ունակությունները. անհամբեր սպասում էր, թե երբ նրանց կնշանակի կարևոր պաշտոններում (*Հան դինաստիայի պատմություն*):

Գրելու ակտը պետք է տեղի ունենա այնպես, ասես դա խոշոր ռազմական կամ պետական գործ է: Նրանք, ովքեր ծանր պատասխանատվություն են կրում իրենց ուսերին, պետք է գործեն որպես հասարակության սյուներ: Թերագնահատված լինելու դեպքում նրանք պետք է պահպանեն իրենց բարոյականությունը և հարատև փառքի հասնեն գրավոր երկերի շնորհիվ: Որպես պաշտոնյա ծառայելիս պետք է օգտվեն մեծ նպատակներ իրականացնելու հնարավորությունից: Այսպիսի գիտնականները համապատասխանում են «ականավոր տաղանդ» բնութագրին, որը քննարկվում է «Պատմության գրքում» (Լիու Սյե. «Գրական միտքն ու վիշապներ քանդակելը»):

Մաքրի միտքը, որ վայելես պատկերը չեն հուայ վեյ սյան 澄怀味像

Այս միտքը նշանակում է դատարկել միտքը, ազատվել աշխարհիկ միջամտությունների բոլոր տեսակներից և վերացնել փառքի ու հարստության ձգտումը: Լիուվին պարզ ու հանդարտ վիճակում կարելի է դիտարկել և վայելել ֆիզիկական առարկաները, ինչպես դա արվում է Դաոյում: «Միտքը մաքրելը» գեղագիտական պատկերները վայելելու նախապայման է: Գեղեցկությունը գնահատող մարդիկ կարող են մոտենալ անսահման Դաոյին միայն աշխարհիկ սահմանափակումներից և բիրտ ազդեցություններից ազատվելու դեպքում: Հենց այդ պահին քո և արտաքին առարկաների միջև սահմանն անհետանում է: Դիտողը, հիանալով գեղեցիկ սարերով, գետերով ու լճերով, հասնում է Դաոյի հետ շփման և այդպիսով պահպանում է ճշմարիտ մտավոր ազատություն

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

ու գերազանցությունը: «Մաքրիր միտքը, որ վայելես պատկերը» կարևոր եզրույթ է ավանդական չինական բնանկարչության տեսության մեջ. այն պատկանում է գեղարվեստական ինտուիցիոնիզմի կարգին: Այն շարունակում ու զարգացնում է Լաոցզիի՝ բոլոր շեղող մտքերը ցրելու և աշխարհին մաքուր, խաղաղ մտքով նայելու գաղափարը, որը ոգեշնչում է ստեղծարարության տեսությունը վայելչագրության, գրականության և արվեստի այլ ոլորտներում:

Մեջբերումներ 引例.

Իմաստունները լուսավորում են առարկաները՝ ընդունելով Դաոն, իսկ առաքինի մարդիկ մաքրում են միտքը, որ վայելեն պատկերը (Ցուն Բին. «Բնանկարչության առաջացման մասին»):

Ցուն Բինը հիվանդանալուց հետո վերադարձավ տուն՝ Չյանլին: Հոգոց հանելով ասաց. «Հիմա ես ծեր եմ ու լավ չեմ զգում, ուստի այլևս ի վիճակի չեմ ճանապարհորդել և տեսնել հայտնի սարերը: Միակ բանը, որ կարող եմ անել հիմա, ազատություն տալ իմ հոգևոր ես-ին և գնահատել Դաոն: Անկողնում պառկած կհետևեմ բնապատկերներին գրեթե այնպես, ինչպես եթե այնտեղ լինեի» (Հյուսիսային դինաստիաներից Սուն դինաստիայի պատմությունը):

Մոլեգնություն, չինացություն, տարակուսանք չի 痴

Այս եզրույթը նշանակում է հիմարություն, տխմարություն կամ խելագարություն, իսկ տարածվելով՝ ավելի մոտենում է հիացմունքին, հաստատակամությանն ու տարօրինակությանը մարդկանց և իրերի հետ հարաբերություններում: Խորամանկ, հաշվենկատ աշխարհիկ մարդկանց համեմատ՝

գաղափարներով տարված մարդիկ այնքան մվիրված ու կրքոտ են, ասես հիմար լինեն: Նրանք ջերմորեն սիրում են, գեղեցիկ խոսք ու հրաշալի վարքագիծ ունեն, գնահատում են անմեղությունը, իրական են ու անհատական կերպարը, բայց չեն ձգտում փառքի, հարստության կամ իշխանության և չեն վախենում աշխարհիկ դատողություններից: Չին (մոհա) նաև բուդդիստական եզրույթ է, որը նշանակում է անգիտություն կամ տարակուսանք: Սա խավարամտություն է, աշխարհի իրականության մասին անտեղյակություն: Բուդդիզմն անգիտությունը համարում է երեք թույներից մեկը, իսկ մյուս երկուսն ազահությունն ու դժգոհությունն են, ինչից էլ սկիզբ են առնում բոլոր (մյուս) չարիքները:

Մեջբերումներ 引例.

Չիա Դաոյի բանաստեղծական ձգտումը ճախրում է, իսկ նրա բանաստեղծական տաղանդը նման է Հան Յուին: Երբեմն քայլելիս ճոճվում է, ինչպես նիհար Ձեն վանական: Ի՞նչ ավստս, որ Լի Բայն ու Դու Ֆուն մահացան ու չկարողացան տեսնել, թե ինչ տեսք ունի այս մարդը (Մեն Չիաո. «Բանաստեղծություն, կատարելով գրված՝ Չիա Դաոյին ներկայացնելու համար»):

Ի՞նչ է տարակուսանքը: Այն մարդու իրական էության կորուստն է և ամեն ինչ ճշմարիտ լույսի ներքո տեսնելու անկարողությունը: Տարակուսանքը կանխում է ճիշտ ընկալումը, ուստի դա բոլոր երկրային հոգսերի պատճառն է (*Բանականահեն բուդդիզմի մեկնաբանությունների հավաքածու*):

Անճոռնիություն / Չոու

չոու 丑

Հին չինարեն չոու (酉鬼) տառը նշանակում է «գարիուրելի տեսքով, հարբեցողի նման»: Լայն իմաստով այն վերաբե-

րում է նաև այն մարդկանց և առարկաներին, որոնք անճոռնի են, վատ կամ արհամարհելի: Եզրույթն ունի երկու իմաստ: Առաջին, որպես չինական մտքի ու մշակույթի հասկացություն, այն հակադրվում է «գեղեցկությանը» և նշանակում է անճոռնի արտաքին, ինչպես նաև թափփված, փնթի, ոչ ներդաշնակ կամ բանականությունից զուրկ վիճակ: «Անճոռնիություն» եզրույթով երբեմն նկարագրվում է այնպիսի արտաքին, որ հակասում է տարածված գեղագիտական չափանիշներին և, հետևաբար, չի ընդունվում ընդհանուր հանրության կողմից: «Անճոռնիություն» գաղափարը հասկանալով և ընկալելով կարելի է ընդլայնել ու տարածել «գեղեցկության» սահմանումը: Երկրորդ, եզրույթը նաև վերաբերում է ծաղրածուներին, որոնք ծիծաղելի արտաքինով զվարճալի կերպարներ են մարմնավորում ավանդական չինական օպերայում` քթի վրա սպիտակ կավճով փոքր խալ նկարելով:

Մեջբերումներ 引例.

Հին Չինաստանի բռնարար կառավարիչ Չիեն երբեմն նաև լավ գործեր էր անում, մինչդեռ բարեգործ Յաոյի կառավարման օրոք որոշ հարցեր ցավալիորեն անտեսվում էին: Անճոռնի Մոմուն ուներ որոշակի գրավչություն, իսկ գեղեցիկ Միշին երբեմն անճոռնի էր թվում: Նույն կերպ նաև նախորդ դարերում ընդունված օրենքները, որոնք հիմա անհետացել են, գուցե ունեցել են որոշ արժանիքներ, մինչդեռ մեր օրերում բարգավաճող որոշ երկրներում գործող բազմաթիվ օրենքներ կարող են ունենալ թերություններ (Հուայնանցի):

Ավելի լավ է լինել անճոռնի ու պարզ, քան խելացի ու սիրունիկ: Ավելի լավ է լինել վանող ու կոպիտ, քան վուլգար ու գրավիչ: Ավելի լավ է լինել հղկված, քան թեթևամիտ: Ավելի լավ է բնական ու ինքնաբուխ, քան նախապես կազմակերպված: Միայն այդպես վայելչագրական ոճը, որը կարծես դատապարտված է ոչնչացման, կգոյատևի ու կպահպանվի (Ֆու Շան. «Վայելչագրական սրեղծագործություն» խոր-

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

հուրդ իմ երեխաներին ու թոռներին» բանաստեղծության հեղինակություն):

Մաքուր և անպաճույճ չունսու 纯素

Եզրույթը նշանակում է բնական, անպաճույճ գեղեցկություն: «Մաքուր»՝ նշանակում է անբիծ, մաքրամաքուր և անխառն: Սու(素) ի սկզբանե նշանակում է «ներկված անմշակ մետաքս»: Հետագայում բառը ձեռք բերեց նաև «սպիտակ, բնական, անեղծ կամ չզարդարված» իմաստը: Ըստ դաոսական մտքի, որ ներկայացնում էին Լաոցզին և Ջուանցզին (369-286մթա.), Դաոն ամեն ինչի գեղեցկության սկիզբն է: Դաոն բնական է, համեստ, պարզ ու անպաճույճ: Այսպիսով, դաոսականները համարում էին, որ բնական, անպաճույճ ու մաքուր լինելը գեղեցկության բարձրագույն ձևն է: Հին Չինաստանում համոզմունք կար, որ «մաքուրն ու անեղծը» էության բնական վիճակ է, որն իր նախաստեղծ ճշմարիտ կարգավիճակը զերծ է պահում արտաքին առարկաներից: Նույնիսկ երբ խառնվում է վերջիններիս, անեղծ է պահում իր բնական էությունն ու միջուկը: Այս գաղափարը լրջագույն ազդեցություն է ունեցել գրական ոճի և հին չինական գրականության ու արվեստի գեղագիտական որոնումների վրա: Հին Չինաստանում ընդունված էր պարզ ու հանդարտ պոեզիան և պարզ ու բնական գեղանկարչությունը, ինչն արտացոլում է մաքուր ու անեղծ գեղագիտական ձգտումները:

Մեջբերում 引例.

Հոգևոր էության հիմքում ընկած է պարզ մաքրության արժեքը: Եթե անխախտ պահեք հոգին, մեկ միասնություն կդառնաք դրա հետ: Այդ միասնությունը գտնելով՝ կապ կհաստատեք Երկնի օրենքի հետ: «Պարզ» նշանակում է

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

անխառն, մաքուր, անեղծ հոգի: Միայն պարզության դեպքում կարող եք կոչվել իսկական մարդ (Ջուանցզի):

Բարություն ցի 慈

Բարությունն առաքինություն է, որ պաշտպանում էին հին չինացիները: Ընդգծելով որդիական բարեպաշտության կարևորությունը՝ կոնֆուցիական դպրոցը նաև խրախուսում էր ծնողական խնամքն ու սերը երեխաների նկատմամբ, որ կոչվում էր բարություն: Բարությունը կառավարչին հնարավորություն էր տալիս պետություն կառավարելիս իր ժողովրդին վերաբերվել այնպես, ինչպես իր իսկ երեխաներին: Դասուսիզմում բարություն էին անվանում կառավարչի սերն իր ժողովրդի հանդեպ:

Մեջբերումներ 引例.

Որպես կառավարիչ՝ պետք է բարեգթություն դրսևորել: Որպես ենթակա՝ հարգել կառավարչին: Որպես որդի՝ դրսևորել որդիական բարեպաշտություն: Որպես հայր՝ բարի լինել երեխաների հանդեպ: Այլ մարդկանց հետ շփումներում գործել բարեխղճորեն (*«Շեսեթի գիրքը»*):

Երեք բան կա, որ պահպանում ու փայփայում են: Առաջինը բարությունն է, երկրորդը խնայողությունը, իսկ երրորդը՝ չանել այն, ինչ որիչ ոչ ոք չի արել (Լաոցզի):

Մեծ պետությունը չպետք է գոռոզանա դա գուո ջե սյա լիու 大国者下流

Մեծ պետությունը չպետք է գոռոզանա. խոշոր գետերը կլանում են անթիվ-անհամար աղբյուրների ջրերը: Սա պե-

տությունների միջև հարաբերությունները կառավարելու կարևոր կոնցեպտ էր, որն առաջադրել էր հին չինացի փիլիսոփա Լաոցզին: Հիմնական գաղափարը ցիանսիան (謙下) է՝ որիչների հետ հարաբերություններում հավասարություն պահելու առաքինությունը: Լաոցզիի կարծիքով՝ այն հարցը, թե արդյո՞ք պետությունները կարող են խաղաղ գոյակցել թե ոչ, կախված է նրանից, թե արդյո՞ք մեծ պետությունները կկարողանան խուսափել փոքր պետություններին ճնշելուց: Եթե համեստ լինեն ու բարյացակամորեն վերաբերվեն փոքր պետություններին, ցույց կտան, որ ունակ են իրենց մեջ տեղավորել ամբողջ աշխարհը: Արդյունքում փոքր պետությունները կվստահեն ու կհարգեն նրանց, այնպես, ինչպես բոլոր վտակներն են հոսում դեպի մեծ գետեր: Եթե մեծ պետություններն ընդունեն ու կլանեն ավելի փոքր պետություններին, իսկ փոքր պետությունները հարգեն ու լսեն մեծ պետություններին, ներդաշնակություն կպահպանվի, և բոլորը կհասնեն իրենց նպատակներին: Սա կապված է «ընդհանուր ապագա մարդկության համար» ժամանակակից գաղափարի հետ:

Մեջբերում 引例.

Մեծ պետությունը համեստություն է դրսևորում: Հենց այստեղ է, որ հանդիպում է աշխարհում ամեն բան, հենց այստեղ է, որ հավաքվում են աշխարհի կանացի ու նուրբ տարրերը: Կանացի ու նուրբ տարրերը հաճախ հաղթում են առնական ու հզոր տարրերին հանդարտության միջոցով, և հանդարտությունը թույլ չի տալիս գոռոզանալ: Այսպիսով, երբ մեծ պետությունը հարգանքով է վերաբերվում փոքր պետությանը, արժանանում է փոքր պետության վստահությանն ու հավատին: Երբ ավելի փոքր պետությունը համեստորեն է վերաբերվում ավելի մեծ պետությանը, արժանանում է նրա հարգանքին ու հանդուրժողությանը: Այսպիսով, չափավորություն դրսևորելով՝ մեծ պետություններն արժա-

նանում են փոքր պետությունների վստահությանն ու հավատին, իսկ փոքր պետությունները՝ մեծ պետությունների հարգանքին ու հանդուրժողությանը: Մեծ պետությունները միայն ցանկանում են իրենց շուրջ հավաքել փոքր պետություններին և աջակցել նրանց. փոքր պետությունները միայն ցանկանում են կցվել և ծառայել մեծ պետություններին: Այսպիսով, թե՛ մեծ, թե՛ փոքր պետությունները կարող են իրագործել իրենց նպատակները, իսկ մեծ պետությունները չպետք է գոռոզանան (Լաոցզի):

**Արհեստավարժ բժիշկը պետք է գերազանց
հմտություններ և անկեղծություն ունենա
դա յի ձինչեն 大医精诚**

Արհեստավարժ բժիշկը պետք է ունենա թե՛ գերազանց բժշկական հմտություններ, թե՛ աշխարհին օգնելու ցանկություն: Ահա թե ինչպես է Թան դինաստիայի հայտնի բժիշկ Սոն Սիմիան (581-682) նկարագրում բժշկի մասնագիտությունն իր «Արտակարգ իրավիճակների հիմնական բանաձևեր» գրքում: «Արհեստավարժ բժիշկը» բացառիկ ու հրաշալի բժիշկ է, որն արժանանում է մյուսների հարգանքին: *Չին* (精) կամ «գերազանց»՝ նշանակում է աչքի ընկնող բժշկական հմտություններ և կատարելության ձգտում: *Չեն* (诚) կամ «անկեղծ»՝ նշանակում է նվիրում հիվանդներին ու վիրավորներին բուժելու գործին: Սա ներառում է չինական բժշկության թե՛ մասնագիտական, թե՛ էթիկական կողմերը, և բժշկական ու մարդասիրական տարրերի օրգանական համադրությունն է: Ինչպես «բժշկի սիրող սիրտ» և «գբաղվել բժշկությանը՝ աշխարհին օգնելու համար» գաղափարները, սա նույնպես դարեր շարունակ կարևորվել է բժիշկների կողմից ու մինչ օրս էլ արդիական է:

Մեջբերում 引例.

Բժշկություն ուսումնասիրող մարդը պետք է խորասուզվի բժշկության սկզբունքների մեջ և անխոնջ սովորի ու սովորի... Երբ արհեստավարժ բժիշկն ինչ-որ հիվանդություն է բուժում, հոգին պետք է հանդարտ լինի ու ցանկություններից զերծ. նա պետք է ունենա, նախ՝ կարեկից սիրտ ու տառապանքը թեթևացնելու ցանկություն: Նա պետք է հավասարապես բուժի բոլորին, ինչպես իր ամենամոտ հարազատին: Նա չպետք է անընդհատ աջ ու ձախ նայի՝ մտահոգվելով իր անձնական շահի ու կորուստների, իր իսկ կյանքի ու մարմնի մասին: Ուրիշի տառապանքին պետք է վերաբերվի այնպես, ինչպես սեփական տառապանքին... Պիտի մտածի միայն հիվանդին օգնելու և ոչ թե իր հեղինակությունը բարձրացնելու մասին: Այսպես կդառնա արհեստավարժ բժիշկ և կարժանանա բոլորի հարգանքին (Սուն Սիմիաո. «Արդարակարգ իրավիճակների հիմնական քանաչևեր»):

**Կարդա տասը հազար գիրք և ճամփորդիր
տասը հազար լի**

դա ուան ջուան շու, սին ուան լի լու 读万卷书, 行万里路

Սա նշանակում է զրքերից հնարավորինս շատ գիտելիք ձեռք բերել՝ այդպիսով դաս քաղելով ուրիշների փորձառությունից: Միևնույն ժամանակ պետք է նաև հնարավորինս հաճախ անմիջական շփում ունենալ աշխարհի հետ՝ այդպիսով հարստացնելով սեփական փորձառությունը և լայնացնելով հորիզոնը: Տեսությունը գործնականում կիրառելով՝ թե՛ ուղղակի, թե՛ անուղղակի փորձառության վրա հենվելով, կկարողանաս ճշմարիտ գիտելիք ձեռք բերել:

Մեջբերումներ 引例.

Ի՞նչ ձգտում պետք է ունենա մարդը: Ճանապարհորդել

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

տասը հազար լի՝ աշխարհը տեսնելու համար, և կարողալ տասը հազար գիրք (Գաո Շիցի. «Տարբեր դիրարկումներ ճանապարհորդությունների ընթացքում»):

**Սկսիր զգացմունքներով և վերահսկիր դրանք
վայելչությամբ**

նա հու ցին, ջի հու լիյի 发乎情，止乎礼义

Բանաստեղծություններն ու երգերի խոսքերը բխում են իսկական զգացմունքներից, որոնք, սակայն, չպետք է չափից շատ լինեն, այլ պիտի վերահսկվեն ծիսական պատշաճությամբ և արդարամտությամբ, որպեսզի բարեկիրթ ու հանդիչ լինեն: Այս եզրույթն առաջին անգամ օգտագործվել է Երգերի գիրքը մեկնաբանելիս, իսկ հետագայում զարգացել ու վերածվել է առհասարակ գրական ստեղծագործության առաջնորդող սկզբունքի: Այն ոչ միայն ճանաչում է մարդկանց բնագրային ցանկությունները և այդ ցանկություններն արտահայտելու և նկարագրելու անհրաժեշտությունը, այլև ընդգծում է, որ կոնֆուցիական էթիկան պետք է կիրառվի՝ զսպելու և կառավարելու այն զգացմունքները, որոնք չի կարելի հենց այնպես արտահայտել, և որոնք չեն կարող դուրս գալ հասարակության, քաղաքականության և էթիկայի սահմաններից: Այսպիսով, պոեզիայի միջոցով արտահայտված զգացմունքները թե՛ անհատական են, թե՛ սոցիալական:

Մեջբերումներ 引例.

Ջոու դինաստիայի պաշտոնական պատմաբանները տեղյակ էին քաղաքական շահերի ու վնասների մասին դասերին, տխրում էին մարդկային հարաբերությունները կառավարող օրենսգրքերից հրաժարվելու համար, զանգատվում օրենքների խիստ պահպանումից ու կառավարությունից, երգում կամ արտասանում էին՝ արտահայտելով իրենց

զգացմունքները, որպեսզի խրատեն միապետին: Բոլորը լավ գիտեին աշխարհիկ գործերի փոփոխականության մասին և կարոտով հիշում էին անցած-գնացած սովորույթները: Բանաստեղծական ոճերը բանաստեղծների ներքին զգացմունքներն արտահայտելու միջոցներ են և, հետևաբար, պարզ մարդկանց բնական հակումներն արտահայտելու տարբերակ, բայց դա պետք է արվի վայելչության և արդարության սահմաններում, որ ժառանգել ենք հանգուցյալ թագավորներից (Երգերի գրքի Մաոյի տարբերակի նախաբան):

Չզգացմունքները բնական ձևով չարտահայտելը չի համապատասխանում վայելչությանն ու արդարությանը. բանաստեղծություններում պետք է լինի թե՛ ուրախություն, թե՛ տրտմություն: Պարտադիր չէ, որ արտահայտված զգացմունքները համապատասխանեն պատշաճությանն ու արդարամտությանը, ուստի բանաստեղծություններում տխրությունն ու բերկրանքը պետք է մնան պատշաճության ու արդարամտության շրջանակներում (Լիու Սիցայ. «Գրական փեսությունների ակնարկ»):

**Բարդություն՝ պարզության մեջ, և լարվածություն՝
լռության տակ
Ֆա սյաննուն յու ձիանգու, ձի ջիուեյ յու դանբո
发纤秣于简古, 寄至味于淡泊**

Հարստությունը պարզության մեջ է, նուրբ խորությունը՝ հանդարտության մեջ: Ահա թե ինչպես էր Հյուսիսային Սուն դինաստիայի գրող Սու Շին (1037-1101) գովերգում Ուեյ Յինուտի (737?-791) ու Լիու Յունյուանի (773-819) բանաստեղծական ոճը: Պարզության ու ինքնագազապման վրա այս շեշտն արտացոլում է պոեզիայի մասին Սու Շիի տեսակետը, որը Հին Չինաստանի կարևոր գեղագիտական հասկացություն է: «Սքանչելի երաժշտությունն անձայն է, իսկ սքանչելի պատկերը դժվար է գտնել», - գրում էր Լաոցզին իր «Դաո Դե

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

Չինում»։ Սա ցույց է տալիս Լաո Յզիի մեծ հարգանքը պարզ ու բնական գեղեցկության հանդեպ, որը Մու Շիի գեղագիտական տեսակետի սկզբնաղբյուրն է։

Մեջբերում 引例.

Չնայած Լի Բայից և Գու Ֆուից հետո եղել են այլ բանաստեղծներ, նրանք գրեթե չեն կարողացել հասնել այնպիսի բարձրության, որն անհրաժեշտ է՝ իրենց բանաստեղծությունների բովանդակությունն արտահայտելու համար։ Քչերն են ունեցել իրենց բանաստեղծ նախորդների սրամտությունը։ Միայն Ուեյ Յինվուն և Լիու Յունյուանը գերազանցեցին մյուսներին, որովհետև նրանց պոեզիան, հարուստ նրբագեղությունը պարզության, իսկ նուրբ խորությունը՝ անվրդով հանդարտության մեջ է (Մու Շի. «*Հուան Յիսիի քանաստեղծությունների ժողովածուի վերջաբան*»)։

**Օրենքը բռնությունը դադարեցնելու և լավ վարքագիծը խրախուսելու համար է
Ֆա ջե, սուռյի ձին բաո էր շուայ շանրեն յե
法者，所以禁暴而率善人也**

Օրենքը գործարկվում է բռնությունն ու չարիքը կասեցնելու և լավ վարքագիծը խրախուսելու համար։ Սա նշանակում է, որ օրենքի գերակայությունն ու բարոյական կրթությունը պետք է լրացնեն միմյանց։ Օրենքի նպատակն է՝ պատժել չարիքն ու փառաբանել բարությունը, ինչը բարոյական տեսանկյունից կարևոր է։ Օրենքի իրականացումն օրինակ է ծառայում և ունի առաջնորդելու գործառույթ, հետևաբար՝ նաև կրթական արժեք։ Օրենքի այս մեկնաբանությունը համաշխարհային նշանակություն ունի։

Մեկնաբանություններ 引例.

Օրենքը ղեկավարում է կառավարման գործընթացը, իսկ

Չինական ստորի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

դա նշանակում է՝ կանխել բռնությունն ու քաջալերել լավ վարքագիծը (Պատմաբանի արձանագրություններ):

Պատիժները բռնությունն ու չարիքը կասեցնելու և լավ վարքագիծ խրախուսելու համար են: Դրանց նպատակը սպանելը չէ (*Մին դինասարիայի պատմությունը*):

**Քլեսա / Չարչարանք
Ֆաննաո 烦恼**

Բուդդիզմում այս եզրույթը նշանակում է շփոթված կամ ընկճված վիճակ, որը պայմանավորված է մարդու ֆիզիկական կամ մտավոր անկայունությամբ: Իրականում սա կամավոր կախվածություն է, որը բխում է տարրըկալումներից: Սովորական մարդն իր չիմացության պատճառով իրեն համարում է իրական, ապա կառչում է երևույթներից, որպեսզի իրականություն դարձնի իր ցանկությունները: Պահվածքի ու վարքագծի տարատեսակ ձևերը պայմանավորված են այդ ցանկություններով, ինչն էլ հանգեցնում է կարմայի և վերածննդի ցիկլում մարդու մասնակցությանը: Այս իմաստով չարչարանքն ըստ էության մարդային ստրկության ձև է: Կա չարչարանքի երեք հիմնական ձև. ազահություն, դժգոհություն և արհամարհանք, որոնք միասին մաս կոչվում են երեք թույն: Բուդդիզմում կա չարչարանքների տարբեր տեսակների մանրամասն դասակարգում, քանի որ համարվում է, որ միայն ուշադիր դիտարկման և յուրաքանչյուր տեսակի սահմանման դեպքում կարելի է ազատվել այդ կապանքներից:

Մեջբերումներ 引例.

Ֆաննաոն (չարչարանք) կազմված է համապատասխանաբար ֆան և ցաո բառերից. ֆանը խախտվում է, մառյի կարգ ու կանոնը՝ նույնպես: Եզրույթն այսպես է կոչվում, որովհետև այն խառնաշփոթ է ստեղծում կենդանի արարած-

Չինական մտքի եւ մշակույթի հինական հասկացություններ

ների մտքում (Շի Քուիձի. «*Գիրակցության կարարելության մեկնաբանությունների ժողովածուի ծանոթագրություններ*»):

Միտք, Բուդդա, արարածներ, բողիկ և չարչարանքներ. այս եզրույթները տարբեր են, բայց վերաբերում են նույն երևույթին: Պետք է իմանաք, որ ձեր իսկ միտքն իսկապես կործանման կամ հավերժության ենթակա չէ: Այն իր էությանը ոչ մաքուր է, ոչ էլ կեղտոտ: Այն պարզ է ու կատարյալ: Այս իմաստով հասարակ մարդն ու ազնվական մարդը լիովին հավասար են: Սա (նույն միտքը) գործում է ամենուր (Շի Դաոյուան. «*Բուդդիստական ուսմունքները Սուն դինաստիայի Ձենցուն կայսեր Չինդե կառավարման օրոք*»):

Փարթամ գեղեցկություն

Ֆենյու 丰腴

Փարթամ գեղեցկությունը ոճ էր, որը գերակշռող դեր ուներ հին Չինաստանի գրականության և արվեստի մեջ: Այստեղ փարթամ բառը ենթադրում է ճոխություն, հարստություն և լիություն: Վայելչագրական գեղագիտության մեջ այն նշանակում է թմբիկություն, հասունություն և ճոխություն: Բանաստեղծական ստեղծագործություններում փարթամ բառը զուգորդվում է բանաստեղծության հարուստ նրբերանգների և տևական գրավչության հետ: Սակայն փարթամ գեղեցկությունն առանձին որևէ իմաստ չունի. այն պետք է համադրվի կամ լրացվի վտիտության գաղափարի հետ: Միայն այդպես կարելի է լիարժեք արտահայտել հին չինական պոեզիայի և գեղարվեստական գեղագիտության երկակիությունը: Հյուսիսային Սուն դինաստիայի գրող Սու Շին (1031-1101) բարձր էր գնահատում Թաո Յուանմինի պոեզիայի գեղարվեստական առանձնահատկությունները (365-427)` ասելով, որ «այն սքանչելի է, գեղեցիկ, հարուստ ու բազմազան` իր մակերեսային պարզության քողի ներքո»:

Մեջբերում 引例.

Ես առանձնապես չեմ սիրում որևէ այլ բանաստեղծի, բացի Թաո Յուանմինից: Նա շատ բանաստեղծություններ չի գրել, բայց նրա ստեղծագործությունները չքնաղ են, գեղեցիկ: Ու թեև թվում է, թե պարզ են, այնուամենայնիվ հարուստ ու բազմազան են թվացյալ ու մակերեսային պարզության քողի ներքո: Մյուս բանաստեղծներից և ոչ մեկը, այդ թվում Ցաո Ցաոն, Լիու Ջենը, Բաո Ջաոն, Սիե Լինյունը, Լի Բայը և Դու Ֆուն, չեն հասնի նրան (Սու Ժե. «Սու Շիի պարսպախանները. Թաո Յուանմինի բանաստեղծությունների ժողովածուի նախաբան»):

Չոհաբերություն / Ներբող զոհաբերական արարողությանը ֆենշան 封禪

Այս եզրույթն ունի երկու իմաստ: Մեկը նշանակում է մեծ զոհաբերության արարողություն, որն իրականացվում էր հին ժամանակներում կայսեր կողմից, Թայշան սարից իջնելուց հետո՝ հարգանքի տուրք մատուցելով երկնքին ու երկրին, հայտարարելով իր ձեռքբերումների մասին, աստվածներին շնորհակալություն հայտնելով իրեն բերելու, ժողովրդին՝ բարեախտության համար, և հսկայական քարի վրա իր ձեռքբերումները փորագրելու համար: Նա արարողություն էր կատարում՝ աշխարհին հայտարարելով, որ իշխանությունն իրեն շնորհված է Երկնքից: Երկնքի երկրպագման արարողությունն իրականացվում էր հողե տաղավարի վրա, Թայշան լեռան ստորոտին: Երկրի երկրպագման արարողությունը կատարվում էր Լիանֆու բացատում կամ Յունյուն բլրի վրա, Թայշան սարի մոտակայքում: Ըստ լեգենդի՝ Երեք սուվերեն կառավարիչներն ու հինգ կայսրերը, հերոս Յուն, որը կառավարում էր հեղեղները, Շան դինաստիայի Թան արքան, Ջոու դինաստիայի Ուու արքան այսպիսի արարողու-

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

թյուններ էին կատարում իրենց կառավարման օրոք: Յին դինաստիայի հիմնադրումից հետո միայն Յինի առաջին կայսրը (մթա. 259-210), Արևմտյան Հան դինաստիայի կայսր Ուուն (մթա. 156-87) և Արևելյան Հան դինաստիայի կայսր Գուանուուն (մթա. 5-մթ.57թթ.) էին այսպիսի արարողություններ կազմակերպում Թայջան լեռան վրա:

Այս եզրույթի մյուս իմաստը ներբողն է, որը գրվում էր՝ կայսերը հորդորելով զոհաբերության արարողություն կազմակերպել կամ արձանագրել այդ գործընթացը, եթե զոհաբերության արարողությունը կազմակերպվում էր նրա ձեռքբերումները փառաբանելու համար: Այսպիսի ներբող առաջին անգամ գրել է Սիմա Սիանուուն (մթա. 179-118) Արևմտյան Հան դինաստիայից: Լիու Սյեն (465-520թթ.) Հարավային դինաստիաներից նշում էր, որ ներբողը՝ որպես իր դարաշրջանում կայսերական ձեռքբերումների հռչակագիր, պետք է լինի հանդիսավոր, շքեղ, բովանդակալից, պերճախոս և վայելչագեղ: Կայսեր մեծությունն ու երկնքի ու երկրի հրաշակերպ իշխանությունը փառաբանելու համար հեղինակը պետք է ընտրի հին, բայց ջինջ խոսքեր դասական հեղինակներից կամ օգտագործի ներիմաստներով հարուստ նոր բառամթերք: Նա պետք է ազատություն տա իր երևակայությանը: Չոհաբերությանը նվիրված ներբողները հետագայում դարձան հիշատակի սովորական ելույթներ: Լիու Սյեի պահանջները պահպանելու դեպքում կարելի է բարձրացնել ընկերության, կառավարական կամ մշակութային հաստատության, տարածաշրջանի կամ նույնիսկ ամբողջ երկրի հեղինակությունը կամ բարոյական նկարագիրը: Արարողակարգային հրաշալի ելույթները, ստեղծագործությունները կամ էսսեները կարող են դառնալ որոշակի դարաշրջանի գրական երկերի վառ օրինակ:

Մեջբերումներ 引例.

Սիմա Սիանուուի «Չոհաբերության արարողությունը» հրաշալի կառուցվածք ունի, բայց բավականաչափ վայելչա-

Չինական ստրի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

գեղ չէ: Յան Սյունի «Բռնակալ Յինը և բարեգութ նոր վարչակարգը» վայելչագեղ է, բայց բավականաչափ բովանդակալից չէ: Սակայն երկու ստեղծագործություններն էլ սերնդեսերունդ են փոխանցվել որպես դասական գործեր (Բան Գու. «Չոհաբերության արարողությունների մեկնաբանություններ»):

Չոհաբերության արարողությանը նվիրված ներբողը ներկայացնում է մի ամբողջ դարաշրջան: Միտքը թղթին հանձնելուց առաջ պետք է հասկանալ բուն էությունը: Նախ պետք է հենվել Պատմության գրքի սկզբունքների վրա՝ գրավոր ստեղծագործության հիմնական կառուցվածքը զարգացնելու, և հին ժամանակների գլուխգործոցների եզրույթները՝ արտահայտչամիջոցները հարստացնելու համար՝ այդպիսով ստեղծագործությունը դարձնելով հղկված, բայց միևնույն ժամանակ հասկանալի, նորարարական, բայց ոչ մակերեսային: Եթե զոհաբերության արարողությանը նվիրված ներբողը գրավիչ բովանդակություն և հրաշալի ոճ ունի, այն իսկապես փայլուն ստեղծագործություն կդառնա (Լիու Սյե. «Գրական միտքն ու վիշապներ քանդակելը»):

Արտասանել զգացմունքներով Ֆենյուն 讽咏

Եզրույթը վերաբերում է հին ժամանակներում դասական չինական պոեզիան գնահատելու պատշաճ ձևին: Մասնավորապես բանաստեղծությունը բարձրաձայն կարդալիս ենթադրվում էր, որ այն պետք է արտասանել որոշակի ռիթմով ու հնչերանգով՝ հետևելով բարձրացող ու իջնող տոնայնությունների օրինաչափությանը և դրանց միջև ընկած դադարներին: Կրկնվող վանկարկման և արտասանության միջոցով որսում էին բանաստեղծության ռիթմը, հանգը, թաքնված իմաստն ու հույզերը, և ի վերջո հասկանում էին հեղինակի արտահայտած առանցքային միտքը: Այդ հիմքի վրա կարե-

լի էր նույնիսկ ուզած ձևով մեկնաբանել բանաստեղծությունը: Ռիթմիկ արտասանությունը կարևոր դեր էր խաղում բանաստեղծության գնահատման հարցում, հատկապես չինական դասական պոեզիայի երաժշտականության շնորհիվ: Ընթերցողները ոչ միայն կարդում էին, այլև երգում էին բանաստեղծությունը:

Մեկնաբանություններ 引例.

Նախ և առաջ, պետք է որպես հիմք ուսումնասիրել «Չուի ներբողները», ամեն առավոտ արտասանել ու երգել դրանք... և բարձի մոտ դնել Լի Բայի և Դու Ֆուի բանաստեղծությունների ժողովածուները, որպեսզի ցանկացած ժամանակ կարողալու հնարավորություն լինի, ճիշտ՝ ինչպես ժամանակակից գիտնականներն են ուսումնասիրում ոչ բանաստեղծական դասական գործերը: Դրանից հետո պետք է կարդալ Թան դինաստիայի ծաղկուն շրջանի հայտնի ստեղծագործությունները: Երբ խորհրդածեք այդ բանաստեղծությունների շուրջ, բնականաբար կլուսավորվեք (Յան Յո. «Յանլիանի պոեզիայի քննադատությունը»):

Բայլադներ պետություններից, Մեծ պալատական հիմներ, Փոքր պալատական հիմներ և Գովեստի հիմներ. սրանք միասին հայտնի են որպես Չորս բանաստեղծություն: Հաճախ նախատեսված էին արտասանելու և երգելու համար (Երեք տառանշանով դասական երկեր):

Բուդդիստիստու / Բուդդա-էություն

Ֆոսին 佛性

Բուդդայի էությունը թաքնված սերմ է կամ հնարավորություն, ներուժ, որը հատուկ է կենդանի արարածներին, որոնք հասունանալուն պես հասնում են բուդդայի վիճակի: Բուդդայի էությունը կամ բուդդայի տարրը ամենուր ներկա է բո-

լոր կենդանի արարածների մեջ, ինչի շնորհիվ նրանք, ովքեր իրենց կյանքի ընթացքում կարողանում են դիմակայել (բուդդիստական) ուսմունքով զբաղվելու դժվարություններին, ի վերջո իրականացնում են լուսավորության իրենց նպատակը: Կոնցեպտուալ առումով, այն սերտորեն կապված է մեկ այլ եզրույթի՝ տաթագատագարբհայի հետ (բառացի՝ Տաթագատայի արգանդ), ինչն ընդգծում է մաքրության գաղափարը, որն ի ծնե կա բոլոր բանական արարածների մտքում, և որը կարող է դրսևորվել համապատասխան հանգամանքներում:

Մեկնաբանություն 引例.

Ես հաճախ նշել եմ բուդդայի էության ունիվերսալությունը բոլոր բանական արարածների, այդ թվում և՛ իքշանտիկաների մտքում (բառացի՝ նրանց, ովքեր ենթարկվում են ցանկություններին, հետևաբար, ըստ որոշակի դպրոցների պետք է զրկված լինեն բուդդայի վիճակին հասնելու բոլոր հնարավորություններից): Իքշանտիկաները թեև զուրկ են նախորդ կյանքերի ընթացքում կուտակված արժանիքներից, դեռևս օժտված են բուդդա-էությամբ և այդպիսով ի վիճակի են ապագայում զբաղվել օգտակար գործունեությամբ:

Բարեբախտությունն ու դժբախտությունը միահյուսված են ֆու հուտ սյան յի 福祸相倚

Բարեբախտությունն ու դժբախտությունը միահյուսված են: «Բարեբախտություն և դժբախտություն» եզրույթը վերաբերում է ընդհանուր առմամբ հակադիր բևեռների, օրինակ՝ բարենպաստ և անբարենպաստ, առավելություն և թերություն, ձեռքբերում և կորուստ, լավ և վատ: Հին չինացիները համոզված էին, որ այդպիսի հակադրությունները հարաբերական են, դրանք նաև ունեն ընդհանրություններ: Դիալեկ-

տիկայի առումով դրանք համադրվում են իրադարձության ընթացքում. երբ դեպքերը զարգանում են, պայմանները փոխվում են, և լավ երևույթները կարող են հանգեցնել վատ հետևանքների: Այս դիալեկտիկան հիշեցնում է այն մասին, որ երբ հանգամանքները բարենպաստ են, պետք է խուսանավել վատ զարգացումներից. նույն կերպ նաև, երբ հանգամանքները բարենպաստ չեն, պետք է հույսի շող տեսնել և ճիշտ պահին իրավիճակը փոխել դեպի լավը: Այնպիսի գաղափարներ, ինչպիսիք են «ծայրահեղության հասնելով՝ վերադարձիր մեկնակետին», «խաղաղ ժամանակներում զգուշացիր վտանգից» և «ձին կորցնելը գուցե թաքնված օրհնություն է», կապված են այս դիալեկտիկական մոտեցման հետ:

Մեջբերումներ 引例.

Բարեբախտությունը դժբախտության կողքին է. դժբախտությունը թաքնված է բարեբախտության մեջ (Լաոցզի):

Բարեբախտությունը կարող է վերածվել դժբախտության, իսկ դժբախտությունը՝ բարեբախտության: Այսպիսի փոփոխություններն անկանխատեսելի են և չափազանց խորն են հասկանալու համար (Հոսայնանցի):

Արհեստավորը պիտի սրի իր աշխատանքային գործիքները, որ աշխատի գուն յու շան ցի շի, բի սիան լի ցի ցի
工欲善其事，必先利其器

Կոնֆուցիոսի (մթա. 551-479) այս արտահայտությունն արձանագրված է «Անալեկտներում»: Սրանով Կոնֆուցիոսն ի սկզբանե նկատի ուներ, որ բարձր դասի տաղանդավոր և առաքինի մարդիկ բարեգործության իդեալներն իրա-

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

կանացնելու գործիք են: Այս մարդկանց համար աշխատելն ու նրանց հետ ընկերություն անելը ի շահ երկրի և հասարակության բարեգործության իդեալներն իրականացնելու գործիք են: Ավելի ուշ այս գաղափարն օգտագործվում էր որպես փոխաբերություն, որ նշանակում էր՝ ինչ-որ գործ լավ անելու համար պետք է պատրաստվել: Այս ասույթի ենթադրյալ իմաստը հետևյալն է. նպատակներն են որոշում մեթոդների ընտրությունը, և մեթոդներն են որոշում նպատակների իրականացումը:

Մեջբերումներ 引例.

Կոնֆուցիոսն ասում էր. «Արհեստավորը պետք է սրի իր գործիքները, որ աշխատի»: Պետությունը պետք է ծառայի իր ունակ պաշտոնյաներին և ընկերանա առաքինի մարդկանց հետ (*Տարեգրքեր*):

Հին ասույթն ասում է. «Արհեստավորը պիտի սրի իր աշխատանքային գործիքները, որ աշխատի»: Ջինվորները մնան են արհեստավորների, իսկ նրանց զենքը՝ գործիքների: Լավ գործիքները թույլ են տալիս լավ գործ անել, լավ զենքն օգտագործողներին հնարավորություն է տալիս գերիշխող դիրք գրավել ճակատամարտում: Սա ստուգված ճշմարտություն է (Յեն Գունլիան և Դին Դու. «*Ռ-սզմակսան գործ*»):

Հեքսագրամներով տեքստեր գուայսոցի 卦爻辞

Մրանք գրավոր պնդումներ են, որոնք ավելացվում են յուրաքանչյուր հեքսագրամի և հեքսագրամներով յուրաքանչյուր տողի: «Հեքսագրամով տեքստերը», որոնք վերցված են գուշակություններից, հետագայում լրացվել ու առանձին-առանձին կցվել 64 հեքսագրամներից յուրաքանչյուրին և հեքսագրամների յուրաքանչյուր տողին: Ընդհանրապես տեքս-

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

տերը բաժանվում են երկու կարգի. առաջինը հիշատակում է բարենպաստ կամ անբարենպաստ իրադարձությունների մասին, իսկ մյուսը կազմված է պատմություններից: Այս տեքստերն արձանագրում են Հին Չինաստանի հասարակական կյանքի բազմաթիվ կողմեր և արտացոլում են, թե հնում մարդիկ ինչ պատկերացումներ ունեին աստծո, ոգիների և աշխարհի մասին:

Մեջբերումներ 引例.

Իմաստունները ստեղծում էին ութ եռագրամներից և 64 հեքսագրամից կազմված համակարգեր՝ հեքսագրամային պատկերներն ուսումնասիրելու համար: Տեքստերը կցված են բոլոր հեքսագրամներին ու հեքսագրամների տողերին, որի նպատակն է՝ կանխագուշակել աղետները կամ ոչ բարենպաստ իրադարձությունները և այն փոփոխությունները, որոնք տեղի են ունենում փափուկ և կոշտ առարկաների փոխազդեցությունից (*«Փոփոխությունների գիրքը»*):

Կոնֆուցիոսն ասում էր. «Իմաստունները ստեղծեցին հեքսագրամային պատկերները՝ ամեն ինչ լիարժեք հասկանալու համար, սահմանեցին 64 հեքսագրամ, որպեսզի որոշեն սուտն ու կեղծիքը, կցեցին հեքսագրամային տեքստեր, որպեսզի ուժգնացնեն խոսքային արտահայտությունը, օգտագործեցին 64 հեքսագրամների համադրությունները՝ դրանց իմաստի ու նշանակության լիարժեք հետազոտման համար, և բոլորին հորդորեցին փոփոխություններ մտցնել՝ հեքսագրամների մոզական ուժը գիտակցելու համար» (*«Փոփոխությունների գիրքը»*):

Ուսումնասիրել պատկերները

գուանայան 观象

Այս եզրույթը նշանակում է ուսումնասիրել երևույթների կամ հեքսագրամների պատկերները: «Պատկերը» երևույթի

արտաքին տեսքն է, որը երևում է, բայց չունի ամրագրված ձև: Բնության պատկերները, օրինակ, երկնքի կամ եղանակի պատկերը, ներկայացնում են մարդկանց և իրադարձությունների առանձնահատկությունները և դրանց փոփոխությունները կառավարող օրենքները: Հին Չինաստանում մարդիկ ստեղծում էին ամենատարբեր պատկերային համակարգեր, ինչպիսիք են, օրինակ, հեքսագրամային պատկերները, որոնց նպատակը բնական երևույթների նկարագրությունն էր: «Ուսումնասիրիր պատկերները» սկզբունքը հորդորում է ավելի մանրամասն ուսումնասիրել պատկերները՝ հասկանալու համար բնությունն ու հասարակությունը կառավարող օրենքները:

Մեջբերումներ 引例.

Հին ժամանակներում, երբ Ֆուսին կառավարում էր աշխարհը, հաճախ նայում էր վեր՝ ուսումնասիրելու երկնքում երևացող պատկերները, նայում էր վար՝ դիտարկելու երկրի օրենքները, նայում էր թռչուններին ու կենդանիներին՝ նրանց փետուրների ու մորթու վրա զննելով այն նախշերը, որոնք արդեն հարմարվել էին շրջակա միջավայրին: Ընտրելով թե՛ մոտ, թե՛ հեռու առարկաներ՝ նա ստեղծում էր հեքսագրամային պատկերներ, որպեսզի բացահայտի իրերի առեղծվածային, բայց միևնույն ժամանակ փայլուն մեխանիզմը, որպեսզի տարբերակի բոլոր առարկաների ձևերը (*«Փոփոխությունների գիրքը»*):

Իմաստունները ստեղծեցին ութ եռագրամների և 64 հեքսագրամների համակարգը, որպեսզի ուսումնասիրեն հեքսագրամային պատկերները: Տեքստերը կցվում են բոլոր հեքսագրամներին ու հեքսագրամային տողերին՝ աղետները կամ ոչ բարենպաստ իրադարձությունները կանխագուշակելու համար, իսկ փոփոխությունները կատարվում են փափուկ ու պինդ առարկաների փոխազդեցության միջոցով (*«Փոփոխությունների գիրքը»*):

Ներդաշնակություն

հեսիե 和谐

Եզրույթը ենթադրում է փոխադարձ համակարգում և ընկերություն: Չինարեն *հեսիե* (和谐) եզրույթն ի սկզբանե նշանակում էր տարբեր հնչերանգների համաժամանակյա համադրություն, որը հիմք էր դառնում երաժշտական ստեղծագործության համար: Ավելի ուշ այն ստացավ այլ նշանակություն՝ կառավարման վիճակ, որտեղ կան համատեղ գոյակցության բարենպաստ սոցիալական հարաբերություններ, որոնք հիմնված են տարբերությունների և բազմազանության հանդեպ հարգանքի վրա: Այսպիսի հասարակության մեջ բոլոր մարդիկ կարող են ազատություն տալ իրենց տաղանդին ու պատշաճ տեղ գտնել ներդաշնակություն, կարգ ու կանոն, առողջ հասարակական մթնոլորտ ունեցող համատեղ բնակության վայրում: *Հեսիեն* առանցքային կոնֆուցիական էթիկական սկզբունք է, որը կապված է միջանձնային հարաբերությունների և սոցիալական ու քաղաքական գործունեությունը ղեկավարելու հետ: Հիմա այն ընդհանրապես նշանակում է ներդաշնակ, խաղաղ ու ընկերական հարաբերություններ մարդկանց, խմբերի և երկրների միջև: Ներդաշնակությունը բռնությանը և հակամարտություններին դիմադրելու և խաղաղությունն ու կարգուկանոնը պահպանելու չինական մշակութային արժեք է:

Մեջբերումներ 引例.

Երբ զանգերը, երաժշտական քարերն ու այլ երաժշտական գործիքներ հնչում են հին չինական տաղաչափության օրենքներով, ստեղծվում է ականջահաճո ներդաշնակ երաժշտություն (*Չին դինաստիայի պարմությունը*):

Խաղաղությունը կփթթի, երբ լինի ներդաշնակություն, իսկ քառսը կգերիշխի, երբ փոխադարձ դիմադրություն լինի (*Ջուն Չանթուն. «Կառավարության մասին»*):

Չինական ստորի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

Կայսեր և նախարարների միջև համակարգումն ու պատշաճ քաղաքականությունը հիմնարար նշանակություն ունեն լավ կառավարման համար (Ֆեն Մենլուն. «Արևելյան Ջոու քազավորությունների ժամանակագրություն»):

Կայսր

հուանդի 皇帝

Կայսերական Չինաստանի գերագույն կառավարչին կոչում էին հուանդի, ինչը նշանակում էր «կայսր»: Այս բառը ծագել է հին կայսերի մասին մի լեգենդից, որը հայտնի է որպես երեք հուան (皇 միապետ) և հինգ ֆի (帝 կայսր): Ասում են՝ երեք հուաններն էին՝ Ֆուսի, Շեննուն և Մույեն, իսկ ոմանց կարծիքով նրանք Ֆուսին, Շեննունը և Նյուվանն էին: Կարծիք կա, որ հինգ դի ասելով նկատի ունենք Հուանդիին, Ջուանսուին, Կուին, Յաոյին և Շունին: Հին ժամանակներում, իրականում նրանք ուղղակի ցեղերի կամ ցեղային դաշինքների առաջնորդներ էին: Քանի որ նրանք բացառիկ ներդրումներ ունեին (Ֆուսին, օրինակ, մարդկանց որս և ձկնորսություն էր սովորեցնում), նրանց շնորհիվ էին հուան կամ դի տիտղոս: Հուան ի սկզբանե նշանակում էր վսեմ ու վեհ, իսկ դին վկայում էր խորաթանցության ու զգոնության մասին: Երբ Յին Ջենը (մթա. 259-210 թթ.)՝ Յինի արքան, միավորեց Չինաստանը, նա համարեց, որ իր ձեռքբերումներն ավելի մեծ են, քան երեք հուանի և հինգ դիի ձեռքբերումները: Հետևաբար, նա միավորեց հուան և դի եզրույթները և ինքն իրեն անվանեց «առաջին Հուանդի (կայսր)»: Դրանից հետո հուանդին դարձավ Չինաստանի բարձրագույն կառավարչի տիտղոս:

Մեջբերում 引例.

Ամբողջ երկիրը միավորելուց հետո Յին պետության քազավոր Յին Ջենն իրեն անվանեց Հուանդի (կայսր), որով-

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

հետև համոզված էր, որ իր ձեռքբերումները շատ ավելին են, քան երեք հուանի և հինգ դիի ձեռքբերումները (Պատմությունը՝ որպես հայելի):

Ոչ նյութական էություն

հուանհու 恍惚

Եզրույթը գոյության այն ձևն է, որ դժվար է տեսնել և հաստատել: Լաոցզիի ստեղծագործություններում այն օգտագործվում է՝ Դաոյի էկզիստենցիալ բնութագիրը նկարագրելու համար: Ըստ Լաոցզիի՝ Դաոն անձն է, անորոշ, որևէ ֆիզիկական կամ նյութական ձևով չբնութագրվող: Մինևույն ժամանակ այն ամբողջությամբ դատարկ չէ, բայց ազդում է տիեզերքում ամեն ինչի վրա: Այս ոչ նյութական էությունը բնորոշ է Դաոյին:

Մեջբերում 引例.

Մեծ Առաքինությունը բխում է Դաոյից, ինչը նյութական չէ: Դաոն մարմնավորում է ֆիզիկական առարկաներն ու մարդկանց իր աննյութական գոյության մեջ և ճշմարտացիորեն արտացոլում է նրանց էությունը խորաթափանց, իմաստալից ու արժանահավատ ձևով: Դաոն գոյություն ունի հնագույն ժամանակներից: Այն լույս է սփռում իրերի ծագման վրա: Ինչպե՛ս իմանամ ամեն ինչի սկզբնական վիճակը: Դաոն ուսումնասիրելով (Լաոցզի):

Չոհաբերական արարողություն

ձիլի 祭礼

Չոհաբերական արարողությունը չինացիների կյանքի խոշոր ծեսերից է: Հին ժամանակներում Չոհաբերական արարողություններն իրականացնում էին՝ երկնքի, երկրի,

արևի, լուսնի, սարերի, գետերի կամ նախնիների հանդեպ իրենց հարգանքը ցույց տալու համար: Այս ամենի կամ նախնիների համար զոհաբերություն անելով՝ մարդիկ ցույց էին տալիս իրենց հարգանքն ու ակնածանքը նրանց նկատմամբ, և հույս ունեին, որ արարողությունը կպաշտպանի ու օրհնություն կբերի իրենց: Չոհաբերության համար կատարվող ծեսերն արտացոլում էին արարողության մասնակիցների հասարակական կարգավիճակը: Չոհաբերության արարողությունները կատարվում են դեռևս այսօր, բայց մեծապես փոխվել է թե՛ դրանց իրականացման ձևը, թե՛ կարևորությունը:

Մեջբերումներ 引例.

Երբ ինչ-որ մեկի համար զոհ ես մատուցում, գործիր այնպես, ասես նա հենց քո առջև է: Երբ զոհ ես մատուցում աստծուն, գործիր այնպես, ասես աստված ներկա է: Կոնֆուցիոսն ասում էր. «Եթե ես անձամբ ներկա չեմ զոհաբերության արարողությանը, համարեք, որ զոհաբերություն չի եղել» (*Տարեգրքեր*):

Չոհ մատուցելը պարտադրված չէ արտաքին գործոններով. ավելի շուտ այն կառավարվում է ներքին զգացմունքներով: Ակնածանքն է մարդուն ստիպում զոհ մատուցել: Այսպիսով, միայն առաքինի մարդն է լիովին հասկանում զոհաբերության նշանակությունը («*Մեսերի գիրքը*»):

Պրաժնապտի / Նշում

ձիամին 假名

«Նշումը» ժամանակավոր անվանում է, որը վերաբերում է առարկաներին, որոնք զուրկ են ներքին էությունից: Բուդդիզմում որոշ գիտնականներ պնդում են, որ տիեզերքում

ոչինչ գոյություն չունի: Իրերը միմյանցից տարբեր են թվում, և պատճառն այն է, որ երբ դրանց տարբեր անվանումներ են տրվում, իմաստները սխալմամբ գուգորդվում են իրականության մեջ գոյություն ունեցող տարբեր օբյեկտների հետ: Բայց ճշմարտությունն այն է, որ երևույթները ստեղծվում են որոշակի պայմանների ու հանգամանքների համադրությամբ և իրենց անունը ստանում են կոնցեպտների վերագրման միջոցով: Քանի որ այդ անվանումները չեն կարող համապատասխանել որևէ իրական երևույթի, դրանք կոչվում են պարզապես «նշումներ»:

Մեջբերում 引例.

Երեք ոլորտները բացատրելիս կան միայն անվանումներ: Երբ առարկան, օրինակ, շիշը արդեն ճանաչված է, տեսնում ենք, թե եզրույթի շնորհիվ ինչպես է ի հայտ գալիս առարկայի էությունը: Նրանք, ովքեր ամենայն մանրամասնությամբ դիտարկել ու հասկացել են այս հարցը, չեն վախենա(կեղծ իմացությունից, օրինակ) օձից, եթե իրենց առաջ ընդամենը պարան լինի (Դինագա. «Քննախոսություն կյրված շեռքի մասին»):

Խնայողություն ձիան 俭

Խնայելը հին չինացիների առաքինությունն է: Սակայն մտքի տարբեր դպրոցներում այն ունի բազմազան իմաստներ: Կոնֆուցիական դպրոցի համաձայն՝ խնայողություն նշանակում է հրաժարվել շռայլությունից և վատնումից: Արարողություն իրականացնելիս կամ առօրյա կյանքում պետք է խուսափել շռայլությունից: Շռայլությունը ստիպում է վատնել: Ավելին, այն մարդկանց մղում է հարստության որոնումների՝ այդպիսով շեղելով արարողության կամ գոր-

Չինական մտքի և մշակույթի հիմնական հասկացություններ

ծողության նպատակից: Դառասական դպրոցի համաձայն՝ խնայողություն ակնկալվում էր նախ և առաջ կառավարչից: Կառավարիչը չպիտի հագուրդ տա իր ցանկություններին՝ ժողովրդի հարստությունը խլելով և վատնելով: Փոխարենը՝ պետք է զսպվածություն դրսևորի, որպեսզի ավելորդ բեռ չդնի մարդկանց ուսերին:

Մեջբերումներ 引例.

Լին Ֆանը Կոնֆուցիոսին հարցրեց ծիսական արարողությունների հիմնական նշանակության մասին: Կոնֆուցիոսը պատասխանեց. «Լուրջ հարց է: Ծեսերի դեպքում միշտ ցանկալի է լինել պարզ, այլ ոչ թե ավելորդ շռայլ: Ինչ վերաբերում է սգո արարողություններին, ապա դրանք պետք է որոշվեն ըստ սգի աստիճանի, այլ ոչ թե ծեսերի հանդեպ չափից դուրս ուշադրության (*Տարեգրքեր*):

Կա երեք բան, որոնք պահպանում ու փայլախոյուն են: Առաջինը բարությունն է, երկրորդը՝ շռայլությունը, իսկ երրորդը՝ չփորձել անել այն, ինչ ոչ ոք չի արել (Լաոցզի):

**Խիզախորեն գործի հանուն արդար գործի
ձիանյի-յունուեյ 见义勇为**

Երբ գործը արդար է, գործի խիզախորեն: Այս հրաշալի ավանդույթը, որ չինացիները ողջունում են դեռևս հին ժամանակներից, սահմանում է, որ ցանկացած մարդ պետք է պաշտպանի արդարությունը և սոցիալական պատասխանատվություն կրի: Այսօր այդպիսի գործողությունները պաշտպանված են օրենքով: Որոշ վարչական կարգավորումներ նախատեսում են, որ «արդար գործի համար խիզախորեն գործելը» վերաբերում է քաղաքացուն, որը պայքարում է որևէ քրեական գործողություն դադարեցնելու համար, կամ գործում է արտակարգ իրավիճակներում՝ պետության

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

ունեցվածքը, հանրային շահերը, մարդկանց կամ նրանց ունեցվածքը վտանգից պաշտպանելու համար՝ անտեսելով սեփական անվտանգությունը: Թե՛ հնում, թե՛ մեր օրերում հանուն արդարության խիզախորեն գործելը մշտապես գովելի էթիկական արարք է, ինչպես նաև սոցիալական առաջընթացի կարևոր ցուցիչ:

Մեջբերումներ 引例.

Նա, ով ոչինչ չի անում անարդարության հանդիպելիս, վախկոտ է (*Տարեգրքեր*):

Խիզախություն չի կարելի կոչել այն, երբ մարդը չի վախենում մահից կամ երբ անարդար է վարվում (Յուտյի մեկնաբանությունները Գարնան և աշնան տարեգրքերի մասին):

Ճշմարիտ մարդը պետք է խիզախաբար գործի հանուն արդարության՝ անտեսելով իր իսկ ճակատագիրը (*Յուան դինաստիայի պատմությունը*):

Պասականների իմացություն ձինսյուե 经学

Այս գաղափարը վերաբերում է կոնֆուցիական դասականների ուսումնասիրությանը: Այն նաև կոչում են «վեց արվեստի ուսումնասիրություն», մասնավորապես Երգերի գիրքը, Պատմության գիրքը, Ծեսերի գիրքը, Երաժշտության գիրքը, Փոփոխությունների գիրքը և Գարնան և աշնան տարեգրքերը, ինչպես նաև դասական երկերի ծանոթագրություններ ու մեկնաբանություններ, դասական երկերի սկզբունքների պարզաբանումներ և այնպիսի թեմաների քննարկումներ, ինչպիսիք են տեքստային ժառանգությունն ու ավանդույթները, ինչպես նաև տարբեր դպրոցների ծագումը:

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

Դասականների իմացությունն օգնում է արտահայտել կարգուկանոնի և աշխարհի արժեքների մասին սեփական հիմնարար ընկալումը դասական ստեղծագործությունների հիմքում ընկած ներիմաստների շարունակական հետազոտության միջոցով:

Մեջբերում 引例.

Այն բանից հետո, երբ Հան դինաստիայի կայսր Լիու Բանը հաղթեց Սիան Յուին, իր բանակով պաշարեց Լու պետությունը: Կոնֆուցիական գիտնականները Լու պետությունում, սակայն, շարունակեցին իրենց ուսումնասիրությունը՝ բարձրաձայն կարդալով և անցկացնելով ծիսակատարություններ, երաժշտություն նվագելով և երգելով: Այնհայտ է, որ իմաստունի ժառանգության շնորհիվ կրթությունն այդքան բարձր էր գնահատվում Լու պետությունում: Ուստի բոլոր կոնֆուցիական գիտնականները սկսեցին ուսումնասիրել և օգտագործել դասական ստեղծագործությունները, պատրաստվելով աղետից նետահարելու մեծ մրցույթին և խմելու արարողակարգային ծեսերին: Շուտով թուրք պաշտոնականություն հաղորդեց ծեսերին Հան դինաստիայում, իսկ հետո դարձավ նախնիների տաճարներում ծիսակատարությունների անցկացման պաշտոնական պատասխանատու: Այն բոլոր աշակերտները, որոնք մասնակցում էին պալատական ծեսերի կազմակերպմանը, առաջ էին գնում պաշտոնեական սանդուղքով: Սա հանգեցրեց դասական երկերի ուսումնասիրության ծաղկման (*Հան դինաստիայի պատմությունը*):

Մուխավաթիվյուեա / Մաքուր երկիր

ձինթու 淨土

Մաքուր երկիրը Բուդդայի դաշտն է, զերծ ապականությունից ու տառապանքից: Գաղափարն ի հայտ է եկել բուդ-

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

դակսետրա հասկացությունից, որը բառացի նշանակում է բուդդա-դաշտ. այն Լուսավորյալի բնակավայրն է: Այն, որ բազմաթիվ աշխարհներից յուրաքանչյուրում Բուդդա կա, Մահայանա բուդդայականության առանցքային դոկտրինն է: Այսպիսի մաքուր ու զարդարուն դաշտը պայմանավորված է այնտեղ բնակվող Բուդդայի մաքուր մտքով, մաքուր՝ ի հակադրություն եղկելի բանական արարածների աշխարհի: Մաքուր աշխարհի դպրոցի հիմնական մեխն է՝ ազատագրվել արտասանելով Բուդդայի, օրինակ՝ Ամիտաբայի (բառացի նշանակում է անչափելի սքանչություն) անունը և վերածնվել նրա մաքուր երկրում՝ Բուդդայի ողորմած երդումների օգնությամբ:

Մեջբերումներ 引例.

Երբ ես դառնամ Բուդդա, բողիսատտվաներն իմ երկրում կտեսնեն Բուդդայի անչափելի հողերը տասը ուղղությամբ, զարդարուն ու մաքուր, որքան որ կցանկանան: Երբ բոլոր երդումներս իրագործվեն, թանկարժեք զարդերով պատված ծառերը կարտացոլեն այս բարգավաճ վայրը, ինչպես պայծառ հայելին է արտացոլում մարդու դեմքը: Այլապես ես կընդունեմ, որ չեմ հասկացել բուդդայականությունը *(Ավելի մեծ Սուխավասրիվյուհա սուտրան)*:

Եթե բողիսատտվային հաջողվի մաքրագործել իր միտքը, իր երկիրն էլ կմաքրվի: Այդ դեպքում ինչո՞ւ է աշխարհը դեռ ախտով լի, ինչպես Շակյամունին (մի ժամանակ բողիսատտվա) մինչև Բուդդայի վիճակին հասնելը: Գուցե նրա միտքը մաքուր չէր... Սարիպուտրա: Բանական մարդկանց բոլոր չար արարքների պատճառով նրանք չեն կարողանում տեսնել Բուդդայի դաշտի ողջ շքեղությունը: Դա Տաթազատայի (Բուդդայի մակդիր) մեղքը չէ: Սարիպուտրա: Իմ հողը մաքուր է, բայց դուք այն չեք տեսնի *(Վիմալակիրի փի ռամունքը)*:

**Ազնվականը գործիք չէ
ձունցի-բուցի 君子不器**

Իսկական ազնվականը գործիք չէ, որն ունի որոշակի սահմանված ձև և օգտագործվում է ըստ իր հատկությունների: Այս եզրույթն առաջացել է Կոնֆուցիոսի «Անալեկտներից» (մթա. 551-479թթ.): Կոնֆուցիոսը նկատի ուներ հետևյալը. նախ, գործիքն ունի հստակ ձև և հատկություններ: Սակայն ազնվական մարդու տեսլականը չպիտի սահմանափակվի դրա ձևով ու հատկություններով. փոխարենը նա պետք է իմանա բոլոր հիմնական գործառնությունները և լայն ու բազմակողմանի գիտելիքներ ունենա: Երկրորդ, ազնվականը չպետք է կանգ առնի միայն գործիքներ պատրաստելու մեկ հմտության վրա: Փոխարենը պետք է զննի դրանց աշխատանքը կառավարող բոլոր հիմնական օրենքները, այն է՝ տեսնի ու հասկանա նյութական երևույթների սահմաններից դուրս ու տիրապետի օգտագործման բոլոր ոչ նյութական օրենքներին: Հետագա շրջանի գիտնականներն ընդունեցին և էլ ավելի զարգացրին այս հեռանկարը: Գաղափարն օգտագործվում է մինչ օրս: Այլ կերպ ասած՝ չի կարելի բավարարվել միայն սեփական պարտականությունների կատարմամբ, այլ պետք է մտքում պահել համայնապատկերը և ավելի լավ հասկանալ հիմնական սկզբունքներն ու համընդհանուր օրենքները և պահպանել դրանք:

Մեջբերումներ 引例.

Յիսիան ասաց. «Բոլոր արհեստավորներն առաջադրանքները կատարում են իրենց արհեստանոցներում քրտնաջան աշխատելով: Ազնվականը պետք է տիրապետի համընդհանուր օրենքներին՝ ջանասիրությամբ ուսումնասիրելով դրանք» («Անալեկտներ»):

Ազնվականն ասում էր. «Բարձր առաքինությամբ մարդը

չի սահմանափակվի միայն մեկ պաշտոնում աշխատելով: Համընդհանուր ճշմարտությունը չի վերաբերվում միայն մեկ երևույթի: Բարեխղճությունը չի պահանջում խոստումներ: Տարվա եղանակների փոփոխությունը չի կատարվում նույն ձևով: Նա, ով լիովին գիտակցում է այս չորս օրենքները, կկարողանա տիրապետել հիմնական օրենքներին («*Շեսերի գիրքը*»):

Պրեֆեկտուրաներ և նահանգներ

ձունսիան 郡县

Պրեֆեկտուրաների և նահանգների երկնակարգակ տեղական կառավարման համակարգը ձևավորվեց Գարնան և աշնան շրջանի ավարտին և Յին դինաստիայի սկզբում: Դեռևս Գարնան և աշնան և Պատերազմող պետությունների շրջաններում որոշ թագավորություններ նահանգներ կամ պրեֆեկտուրաներ էին հիմնում նոր բռնակցված տարածքներում, բայց այդ երկուսը իրավասությունների տարբեր մակարդակ ունեին: Երբ Յինի առաջին կայսրը (մթա. 259-210թթ.) միավորեց Չինաստանը, վերացրեց ֆեոդալական համակարգը, որ հիմնված էր արյունակցական կապի վրա, և հիմնեց ուղղահայաց կառավարման համակարգ, որը կազմված էր պրեֆեկտուրաներից և նահանգներից, որոնց ներքո կենտրոնական կառավարությունն իր իրավասությունն էր սահմանում պրեֆեկտուրաների վրա, իսկ պրեֆեկտուրաները՝ նահանգների վրա: Պրեֆեկտուրաների և նահանգների ղեկավարներին նշանակում ու հեռացնում էր կենտրոնական կառավարությունը: Չինարենում «կատարյալ» նշանակում էր *շու* (守, որը Հան դինաստիայի Չին կայսրը փոխեց թայշուի՝ 守, իսկ նահանգի ղեկավարին անվանում էին լին (令) կամ ջան (长): Հան դինաստիայի սկզբում կիրառվում էր թե՛ ավատատիրական, թե՛ պրեֆեկտուրա-նահանգ համակարգը: Վերջինս աստիճանաբար գերիշխող դեր ստացավ:

Չինական ստրի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

Պրեֆեկտուրա-նահանգ համակարգն ուժեղացրեց ավտոկրատական-կայսերական կառավարումը և դարձավ իշխանության կենտրոնացված համակարգի առանցքային տարր:

Մեջբերումներ 引例.

Հետագայում գիտնականները համոզված էին, որ ավատատիրական կարգի վերացումը և պրեֆեկտուրաների ու նահանգների հիմնումը կատարվեց Յինի առաջին կայսեր կողմից, բայց ես այդ կարծիքին չեմ (Գու Յանուու. «*Առօրյա ուսումնասիրությունների արձանագրություններ*»):

Շան և Ջոու դինաստիաներից առաջ գոյություն ուներ հինգ կարգի թագավորություն. յուրաքանչյուրն ուներ իր բանակը, և ուժեղ դինաստիան գերիշխում էր թույլին ու բռնակցում նրա հողերը: Յինի առաջին կայսրը վերացրեց ֆեոդալական համակարգը և սահմանեց պրեֆեկտուրաներ: Բոլոր հետագա դինաստիաները հետևեցին այս մոդելին՝ որդեգրելով պրեֆեկտուրաների և նահանգների կառավարման համակարգերը (Գու Յոու. «*Հասարակությունների հանրագիր-տարանային պատմություն*»):

Քան. Չրի խորհրդանիշը
քան 坎

Քանը (坎) ութ տրիգրամներից մեկն է, որը ներկայացված է դիագրամով: Այն նաև 64 հեքսագրամներից մեկն է, կազմված է երկու տրիգրամից: Քանը խորհրդանշում է ջուրը, որը թրջում է երկրի վրա ամեն ինչ: Քանի որ ջուրը մշտապես հոսում է ինչ-որ տեղ կամ հավաքվում է ավելի ցածրադիր վայրում, բառն ունի նաև «ճահիճ» կամ «վտանգ» նշանակությունը: Տառանշանը կազմված է մեկ չընդհատվող և երկու ընդհատվող գծից: Այն համարվում է յան տրիգրամ և խորհր-

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

դանշում է տղամարդկային սկիզբը: Եթե չընդհատվող գիծը մեջտեղում է, այն նաև ներկայացնում է ընտանիքի միջնեկ որդուն:

Մեջբերումներ 引例.

Քան նշանակում է ճահիճ («Փոփոխությունների գիրքը»):

Երբ ջուրը շարունակ հոսում է ցած ու կանգ առնում, ճահիճ է առաջանում: Այսպիսի միջավայրում առաքինի մարդը պետք է մշտապես պահպանի էթիկական ամբողջությունն ու զարգացնի բարոյական չափանիշներ («Փոփոխությունների գիրքը»):

Լի. Կրակի խորհրդանիշը **լի 离**

Լին (离) ութ տրիգրամներից մեկն է, որը ներկայացված է դիագրամով: Այն նաև 64 հեքսագրամներից մեկն է և կազմված է երկու տրիգրամից: Լին խորհրդանշում է կրակը, որը ենթադրում է նաև ամեն ինչի չորացում: Քանի որ կրակի տարածումը կախված է բռնկումն նյութից, այն ենթադրում է կախվածության վրա հիմնված հարաբերություններ: Եզրույթը կազմված է մեկ ընդհատվող և երկու անընդհատ գծերից: Սա համարվում է յին տրիգրամ և խորհրդանշում է կանացի սկիզբը: Ընդհատվող գիծն ընկած է մեջտեղում, հետևաբար ցույց է տալիս ընտանիքի միջնեկ դստերը:

Մեջբերումներ 引例.

Լի նշանակում է կախվածություն («Փոփոխությունների գիրքը»):

Ինչպես արևն է բարձրանում երկնքում ու պայծառու-

Չինական ստորի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

թյուն բերում ամեն ինչին, այնպես էլ առաջնորդը պետք է մշտապես իր առաքիլությունը բաշխի բոլորին («*Փոփոխությունների գիրքը*»):

Էթիկա լունլի 伦理

Ի սկզբանե եզրույթը վերաբերում էր իրերի բնական կարգին: Աստիճանաբար իմաստը փոխվեց՝ վերածվելով էթիկական սկզբունքների, այն է՝ հարաբերություններ մարդ արարածների միջև և այդ հարաբերությունները կարգավորող հիմնարար օրենքներ, սկզբունքներ և նորմեր: Հին ժամանակներից ի վեր չինացիները մշտապես գնահատել են պատշաճ միջանձնային հարաբերությունները: Կոնֆուցիական դպրոցը համարում էր, որ էթիկական նորմերը ծառայում են որպես մարդ լինելու հիմնական ուղեցույց: Այսպիսով, Կոնֆուցիոսի ժամանակներում գերակշռող էր այդպիսի փիլիսոփայությունը: Սա չինական մշակույթի գլխավոր առանձնահատկություններից մեկն է: Արդի ժամանակներում այն թարգմանվում է անգլերեն «էթիկա» եզրույթի, իսկ նախնական իմաստը՝ «իրերի կարգ», կորել է:

Մեջբերումներ 引例.

Երաժշտությունը բխում է մարդկանց ներքին աշխարհից: Երաժշտական նոտաները, ինչպես իրերի կարգը, ունեն իրենց դասավորությունը («*Ծեսերի գիրքը*»):

Մոտ հարազատների միջև սեռական հարաբերությունները և ավագի ու կրտսերի միջև հարաբերությունների կարգի անտեսումը հատուկ է գազաններին: Գազանները վարվում են առանց խղճի խայթի և ոչինչ չզգիտեն էթիկայի մասին (Ուան Չուն. «*Կրթության փարթեր դպրոցների համեմատական ուսումնասիրություն*»):

Փաստարկված և համոզիչ երկեր լունշուո 论说

Այս եզրույթը վերաբերում է փաստարկների և համոզելու մասին գրավոր ստեղծագործություններին հին ժամանակներում: Փաստարկի ու համոզելու մասին էսսեն գրում էին՝ տեսական հիմնախնդիրը խորությամբ ուսումնասիրելու (լուն) և փաստարկի միջոցով մարդկանց համոզելու համար (շուո): Ըստ Հարավային դինաստիաներից Լիու Սյեի (465?-520)՝ փաստարկող և համոզիչ էսսե գրելիս չի կարելի կուրորեն կրկնօրինակել ավելի վաղ շրջանի գիտնականների զարգացրած տեսությունները: Դրա փոխարեն պետք է ունենալ սեփական կարծիք ու տեսակետ: Անհրաժեշտ է տեսության կամ թեմայի վերաբերյալ սեփական համոզիչ եզրափակիչ խոսք գրել բազմաթիվ փաստերի հիման վրա արված դատողություններից հետո: Գիտնականը պետք է հենվի դասական գործերի և այլ հասանելի աղբյուրների, իրեն նախորդած գիտնականների խորհրդածությունների վրա և հիմնախնդիրը քննի բազմակողմանիորեն և ամենայն մանրամասնությամբ: Այսպիսի էսսեի բառամթերքը, որի նպատակն է համոզել իր ընթերցողին, պետք է լինի անկեղծ ու անխառն. այսպիսի էսսեն պետք է պարզաբանի ճշմարտություններ և պաշտպանի արդարամտության գլխավոր սկզբունքը: Այն պետք է ավելացնի իր համոզիչ ուժն ու զգացմունքային գրավչությունը՝ օգտագործելով հռետորաբանության արտահայտչամիջոցներ և մեջբերելով կոնկրետ օրինակներ: Բայց այսպիսի էսսեն չպիտի գրվի՝ ընթերցողներին հաճոյանալու համար և սեփական կամքին հակառակ, և ոչ էլ պետք է գրվի նրանց թյուրիմացության մեջ զգելու համար: Նա, ով փաստարկված ու համոզիչ էսսե է գրում, ինչպես նշում էր Լիու Սյեն, ճշմարտության է հասնում անկախ մտածողության միջոցով՝ դատողությունները հիմնելով սեփական տեսակետների և խղճի վրա: Նա պետք է կտրուկ լինի ձևակերպումների մեջ և մանրամասն հիմնավորի իր փաստարկները: Այս բոլոր տեսակետները դարձել են էսսեների

Չինական ստորի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

արժանիքները գնահատելու հիմնական չափանիշ և գրավոր ստեղծագործությունն առաջնորդող կարևոր օրենք:

Մեջբերումներ 引例.

Ճշմարիտ խոսքեր արտաբերում են իմաստունները, որոնց անվանում են դասականներ (ճին): Դասականների մեկնաբանությունները, որոնք բացատրում են հավերժական ճշմարտությունները, կոչվում են գրավոր փաստարկներ (լուն) (Լիու Սյե. «Գրական միտքն ու վիշապներ քանդակելը»):

Գրավոր փաստարկների նպատակն է՝ տարբերել ճիշտը սխալից, քննել կոնկրետ հիմնախնդիրներ՝ վերացական սկզբունքին հանգելու համար, ամենայն խորությամբ լուծել ինչ-որ բարդ խնդիր և կատարել սպառիչ ուսումնասիրություն՝ վերջնական ճշմարտությունը պարզելու համար (Լիու Սյե. «Գրական միտքն ու վիշապներ քանդակելը»):

Համոզիչ ու փաստարկված էսսե գրելու բանալին հետևյալն է. օգտվել հարմար պահից և համոզվել, որ փաստարկը հիմնավոր է: Եթե փաստարկն այսպիսով ընդունվում է, այն մեծացնում է մարդու հանդեպ վստահությունը: Հակառակ դեպքում այն չի վնասում մարդու հեղինակությունը: Խորհրդածել չի նշանակում խաբել ընդդիմախոսներին: Հետևաբար, փաստարկներ անելիս պետք է արժանահավատ ու վստահելի լինել (Լիու Սյե. «Գրական միտքն ու վիշապներ քանդակելը»):

Կայսրերի տաճարային տիտղոսներ

միահառ 庙号

Տաճարային տիտղոսները (միահառ 庙号) շնորհվում էին մահացած կայսրերին, օգտագործվում էին նախնիների

պատվին արվող գոհաբերությունների ընթացքում: Տեսակետ կա, որ այս երևույթն առաջացել է Շան դինաստիայում: Այսպիսի անունների վերջին տառանշանը սովորաբար լինում էր ցու (祖 նախահայր) կամ ցուն (宗 նախնի): Տաճարային անունները տրվում էին խիստ կանոններով: Կյանքում մեծ ձեռքբերումներ ունեցածների անուններին ավելանում էր *ցու* վերջավորությունը, իսկ բարձր առաքինություն ունեցողներին՝ *ցուն*: Օրինակ, դինաստիայի հիմնադրին կարող էին անվանել թայցու (太祖) կամ թայցուն (太宗), իսկ նշանակալի ձեռքբերումներ ունեցողին՝ գաոցու (高祖) կամ գաոցուն (高宗): Ինչպես կայսրերի հետմահու անունները, տաճարային տիտղոսները նույնպես չինական մշակույթի կարևոր քաղաքական ավանդույթն էին: Պաշտելով անցյալի կայսրերին՝ դրանք չափանիշներ էին սահմանում հետագա սերունդների կառավարիչների համար: Չինական ազդեցության շնորհիվ Կորեան և Վիետնամը հետևեցին այս պրակտիկային:

Մեկնաբանություն 引例.

Հին ժամանակներում կայսրերին տալիս էին տաճարային տիտղոսներ, որպեսզի հետագայում կառավարիչներն իմանան նրանց մեծ ձեռքբերումների և բարձր արժանիքների մասին: Այս պրակտիկան սկսեց կիրառվել երեք դինաստիաներում՝ Սիա, Շան և Ջոու, և շարունակվեց Արևմտյան և Արևելյան Հան դինաստիաներում: Այս շրջանի կայսրերն արժանի էին իրենց տաճարային տիտղոսներին, քանի որ մեծ ձեռքբերումներ և բարձր առաքինություն ունեին: Դա է պատճառը, որ այս պրակտիկան որդեգրեցին նաև հետագա դինաստիաները (Լիու Ջիձի. «Ամեն ինչ պատմագիտության մասին»):

**Թագավորական տիտղոս
նյանհաո 年号**

Այս եզրույթը վերաբերում է այն ժամանակաշրջանի անվանը, որով իշխող կայսրն արձանագրում է կառավարման իր շրջանի տարիները Հին Չինաստանում: Երբ նոր կայսրը գահ էր բարձրանում, իր նախորդի թագավորական տիտղոսը փոխարինում էր նոր թագավորական տիտղոսով՝ նշանավորելով նոր դարաշրջանի սկիզբը: Այս պրակտիկան սկսեց կիրառել (Լիու Չեն մթա. 156-84թթ.) Հան դինաստիայի Ուու կայսրը: Նա իր թագավորության շրջանն անվանում էր *ձիան յուան* (建元, մթա. 140-135թթ.): Ավելի ուշ այս պրակտիկան դարավ կանոն: Կայսրը կարող էր նաև փոխել իր թագավորական տիտղոսը, եթե հանկարծ տեսնում էր մի բան, որը նրա կարծիքով չափազանց բարենպաստ էր, կամ կարևոր նշանակություն ունեցող իրադարձության դեպքում: Իր կառավարման ողջ ընթացքում կայսրը կարող էր օգտագործել մեկ տիտղոս կամ տասնյակ անգամ փոխել այն: Մարդիկ կառավարման առաջին տարին անվանում էին ձի յուան (纪元): Եթե կայսրը փոխում էր իր թագավորական տիտղոսն ինչ-որ տարում, այդ տարին կոչվում էր գայ յուան (改元): Երբ 1912 թվականին հիմնադրվեց Չինաստանի Հանրապետությունը, թագավորական տիտղոսի պրակտիկան հանվեց, և ժամանակը սկսեց արձանագրվել Հանրապետության առաջին տարվանից սկսած: Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունը, որը հիմնադրվել է 1949 թվականին, որդեգրել էր քրիստոնեական օրացույցը: Հին Չինաստանի ազդեցության տակ Կորեան և Վիետնամը նույնպես ունեին թագավորական տիտղոսներ: Ճապոնիան մինչ օրս օգտագործում է թագավորական տիտղոսը:

Մեջբերում 引例.

Հան դինաստիայի Չին կայսեր թագավորությունից առաջ բոլոր կայսրերն իրենց կառավարման տարիները նշում էին

թվերով՝ տարի մեկ, տարի երկու և այդպես շարունակ, մինչև իրենց կյանքի վերջ: Երբ Ուու թագավորը գահ բարձրացավ, սկսեց թագավորական անուններով տարանջատել իր կառավարության ժամանակաշրջանները: Իր կառավարման առաջին շրջանն անվանեց ձիան յուան (Ջան Շուոձիե. «Պատմաքանի արչանագրությունների ծանոթագրություններ»):

Նիրվանա նիեփան 涅槃

Եզրույթը վերաբերում է սանսարայից՝ վերածննդի ցիկլից դուրս գալու վիճակին: Նիրվանայի բառացի իմաստը մարելը կամ անհետանալն է՝ ի տարբերություն չարչարանքների, որոնք բռնկվում են հրդեհի նման: Սա այն մաքրագործված վիճակն է, որին մարդը հասնում է լուսավորության միջոցով, և որտեղ արմատախիլ է անում չարչարանքները, ծնունդն ու մահը: Սա բոլոր բուդդիստական ուսմունքների առաջին նպատակն է: Գոյություն ունի նիրվանայի երկու տեսակ. մնացորդով և անմնացորդ: «Մնացորդով նիրվանայում» ծեսն իրականացնողի մարմինը, պայմանավորված իր նախորդ կյանքերի կարմայի արդյունքով, մնում է նույնիսկ լուսավորությունից հետո: «Մնացորդով նիրվանայի դեպքում», որտեղ կարման ամբողջությամբ հեռացված է, նրա ֆիզիկական ձևն ու գիտակցությունը դադարում են գոյություն ունենալ, և նա ընդմիջտ ազատվում է սանսարայից: Մահայանայի գրերը նորովի են հայտնագործում «նիրվանա» գաղափարը՝ այն մեկնաբանելով որպես բարձրագույն իրականության կատարյալ տիրապետում՝ հռչակելով, որ ըստ էության նիրվանան և նյութական աշխարհը բացառիկ չեն միմյանց համար:

Մեջբերում 引例.

Հետևաբար, բուդդաներին հնարավոր չէ գտնել ոչ նյու-

թական աշխարհում, ոչ էլ նիրվանայի վիճակում: Նրանք լուսավորության եւ հասնում իրենց սեփական ճշմարիտ մտքի գիտակցման միջոցով, որը ձև չունի: Ինչպե՞ս կարող է անձն երևույթը ներկա կամ բացակա լինել: Բուդդայի մարմնի ձևավոխումները երևում են միայն այն մարդկանց, որոնց միտքը պատրաստված է: Այսպիսով, Բուդդայի բոլոր դրսևորումները ոչ այլ ինչ են, եթե ոչ պատկերներ կենդանի արարածների մտքում (Շի Յանշու. «Աղբյուր-հայելու արձանագրությունները»):

Ուսմունքների դասակարգում փանձիառ 判教

Եզրույթը վերաբերում է մեկնաբանության դասակարգմանը, որում բուդդիստական դպրոցը, զանազան ուսմունքների թեոլոգիական տարբերությունները հաղթահարելու կամ իր իսկ դիրքն ու իշխանությունը հաստատելու համար սահմանում է տարբեր սուրբ գրերի նշանակությունն ու կարգավիճակը: Այն նաև հայտնի է ձիառ փան անունով (սկզբունքների դասակարգում): Տարբեր դպրոցներն ու սեկտանները որդեգրում են դասակարգման տարբեր համակարգեր: Սովորական պրակտիկայի համաձայն՝ պետք է սկսել հեշտից և աստիճանաբար շարժվել դեպի ամենախոր ու բարդ ուսմունքները. սովորաբար այս ճանապարհն անցնում է սեփական բարձրագույն դպրոցով: Այս պրակտիկան հավանաբար առաջացել է հնդկական բուդդիզմից, իսկ Սույ և Թան դինաստիաների էկզեգետիկ համայնքները հատկապես հետաքրքրված էին դասակարգման սեփական համակարգ սահմանելու մեջ: Օրինակ, Թիանթայ դպրոցի «հինգ ժամանակաշրջաններն ու ութ ուսմունքները» ժամանակագրական առումով Բուդդայի հրահանգները բաժանում են հինգ շրջափուլի՝ (1) Հուայան կամ Ավատամասկա (Դրասանգ), (2) Ահան կամ Ազամա (Սուրբ գրեր), (3) Ֆանդեն կամ Վայփույյա (Լայն կամ հավասար ուսուցում Մահայա-

նայի օրինակով), (4) Դաբոյրե կամ Մահապրաժնապարամիտա (Իմաստության մեծ կատարելություն) և (5) Ֆահուա-Նիեփան կամ Սադդիարմապունդարիկա-Մահապարինիրվանա (Լոտոսի Սուտրա և Եզրափակիչ Նիրվանա), կամ մանկավարժական առումով չորս դասերի՝ հանկարծակի, աստիճանաբար, էզոթերիկ և անորոշ ուսուցում, կամ տեսական հակումների առումով՝ չորս կարգի՝ Տրիպիտակա, ընդհանուր, տարբեր և բազմակողմանի կամ կատարյալ ուսմունքներ: Այս սինթետիկ դասակարգումները բնորոշվում են հստակ տեղական խմբային միտումներով, հետևաբար խոր ազդեցություն ունեն Չինաստանում բուդդիզմի տարածման վրա:

Մեջբերում 弓|例.

Տարբեր բուդդիստական համայնքներ որդեգրում են ուսմունքների տարբեր դասակարգումներ: Ոմանք պնդում են, թե երբ Բուդդան կար այս աշխարհում, նա տարածում էր ոչ այլ ինչ, եթե ոչ հանկարծակի ու աստիճանական ուսուցում, և միայն փոքր-ինչ ավելի ուշ առաջացան յոթ փուլերն ու հինգ ժամանակաշրջանները, որոնք հետո փոխանցվեցին սերնդեսերունդ և լայնորեն կիրառվեցին: Մյուսները, սակայն, բարձրացնում են հետևյալ հարցը. ինչպե՞ս կարող ենք վստահ լինել, որ ժամանակաշրջանները հինգն են: Ըստ էության (կարող է լինել միայն երկու ժամանակաշրջան) Բուդդան մահից առաջ «նիրվանա մնացորդով» վիճակում էր, և այն, ինչ նա սովորեցնում էր, պարզ չէր, (նեյարթա, բառացի՝ մի բան, որի իմաստը դեռ պետք է վեր հանվի), իսկ նրանք, ում նա հռչակում էր «կրկնակի ծառի տակ» (Բուդդայի մահվան տեսարան), պարզ էին (նիթարթա, բառացի՝ մի բան, որի իմաստն արդեն վեր է հանվել (Մքանչեի դիարմայի Լոտուս սուտրայի խոր իմաստը):

Հավասարություն փինդեն 平等

Որպես սանսկրիտի «սամա» բառի չինարեն թարգմանություն՝ *փինդեն* (平等) նշանակում է նույն մակարդակի, առանց տարբերության: Որպես բուդդայականության հիմնարար գաղափար՝ ի սկզբանե այն նշանակում էր, որ տարբեր կաստաների միջև տարբերություն չկա: Ավելի ուշ՝ Մահայանա բուդդայականության և բուդդայականության մեջ, որը հարմարեցված էր չինական պայմաններին, ինչպես Չեն բուդդայականությունը, և բարձրագույն իմաստի տեսանկյունից համարվում էր, որ դիարմաների և բոլոր բանական արարածների միջև տարբերություն չկա: Բուդդայականությունը շեշտում է հավասարության արժեքը մի շարք առումներով, որոնցից ամենակարևորը բոլոր բանական արարածների հավասարությունն է (կենդանի արարածների միջև տարբերություն չկա): Սա ընդհանրապես համարվում է հավասարություն բոլորի համար: Արդի ժամանակներում հավասարության արևմտյան գաղափարը թարգմանվել է *փինդեն*, այն իմաստով, որ որպես հասարակության անդամ՝ բոլորն ունեն որոշակի կարգավիճակ, հնարավորություններ և իրավունքներ հասարակական հարաբերություններում և հասարակական գործունեության մեջ:

Մեջբերումներ 引例.

Ինչ վերաբերում է դրանց էությանը, բանական մարդկանց միջև տարբերություն չկա: Բոլորը բուդդաներ են (Շակյամունի վարպետ Հույնենի ուսմունքները, Չեն բուդդայականության վեցերորդ նահապետը):

Սա իմ ցանկությունն է՝ ուղղված բոլոր բանական էակներին: Չեր միջև չպիտի լինի տարբերություն՝ անկախ նրանից՝ մոտ եք իրար, թե ոչ: Դուք պետք է մշտապես զերծ լի-

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

ներ ազահությունից ու համառությունից (Ճաղկաշղթաների սուտրա):

Ես համընդհանուր սեր ու հավասար հարգանք եմ տա-
ծում բոլորի նկատմամբ և երգում եմ դասական երգեր՝
առանց սահմանափակման (Լիու Քեչուան. «Տասը բանաս-
տեղծություն, յուրաքանչյուր տողում՝ վեց փառանշան, յո-
թանասունուր փարեկանում»):

Բողիի փութի 菩提

Բողիին վերաբերում է իմաստության ազնվագույն ձևին,
որն ունակ է վերացնել անախորժությունները: Այս եզրույթի
բառացի իմաստը «լուսավորությունն է» կամ «արթնացու-
մը»: Սա այն իմաստությունն է, որը կարող է վերացնել անա-
խորժությունների բոլոր տեսակները, որոնք հավատացյալին
խանգարում են առաջ գնալ դեպի իր վերջնական լուսավո-
րություն: Ընդունված է, որ բողիին բոլոր բուդդայական ուս-
մունքների վերջնական հանգրվանն է, վերջնապատակը:
Բայց տարբեր մոտեցումները հանգեցնում են բողիի տար-
բեր մակարդակների: Չինական բուդդայականությունը հակ-
ված է պաշտպանել «բնածին գիտակցությունը» կամ «վե-
րագտնված ճշմարիտ լուսավորությունը»՝ պնդելով, որ ուս-
մունքի արդյունքը հիմնված է ոչ այլ ինչի, քան ներհատուկ
իմաստության վրա:

Մեջբերում 引例.

Ազահությունը, վիրավորանքն ու տգիտությունը որպես
օնթոլոգիական հիմք ընդունում են «մտքի էությունը»: Միայն
էությունը լիովին հասկանալու ու հետազոտելու դեպքում կա-
րելի է իսկապես ազատագրվել: Ուստի, ըստ սուրբ գրերի,
երբ սովորական մարդը դեռ Բուդդա չի դարձել, նրա բողիին

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

ի հայտ է գալիս չարչարանքների տեսքով. երբ ազնվական մարդը դառնում է Բուդդա, նրա չարչարանքները վերածվում են բողիիի (Հույյուան. «*Վիմալակիրի ուսմունքի մեկնաբանություններ*»):

**Չգացմունքներն արտահայտվում են
երաժշտական պոեզիայում
ցին ֆա յու շեն 情发于声**

Երբ զգացմունքները հորդում են մարդկանց սրտերում արտաքին առարկաներից առաջացած ոգեշնչման արդյունքում, արձագանք են գտնում պոեզիայում և երաժշտության մեջ: Այդ մասին գրված է «Երգերի գրքի Մաոյի տարբերակի առաջաբանում», ինչն արձագանքում է «պոեզիա գրել՝ սեփական ձգտումներն արտահայտելու համար» միտքը, որը վավերացված է «Պատմության գրքում»: Նախացին շրջանի Չինաստանում պոեզիան, երաժշտությունն ու պարերը սերտորեն կապված էին, նույնիսկ միաձուլված էին իրար: Այս գաղափարն արտացոլված է այդ դարաշարջանի առանձնահատկություններում: Ավելի ուշ պոեզիան դարձավ լեզվի անկախ արվեստ, որն առանձին էր երաժշտությունից ու պարից: Այսպիսով, գաղափարը դուրս եկավ գրական թատերաբեմից:

Մեջբերումներ 引例.

Պոեզիան մարդու զգացմունքների և ձգտումների արտահայտությունն է: Երբ թաքնված է սրտում, այն ուղղակի զգացմունքների ու ձգտումների միաձուլում է: Երբ արտահայտվում է բառերի միջոցով, դառնում է պոեզիա: Չգացմունքներն արտահայտվում են լեզվով: Ապա, եթե լեզուն բավարար չէ, մարդը սկսում է քթի տակ երգել ու հառաչել: Եթե նույնիսկ այդպես չի հաջողվում ինքնարտահայտվել, երգում է՝ երբեմն երգն ուղեկցելով մարմնի ռիթմիկ շարժումներով:

Երբ զգացմունքները բռնկվում են սրտում, բնականաբար արտահայտվում են հնչյունների միջոցով: Տարբեր բարձրության բոլոր հինգ նոտաներն, այսպիսով, ստեղծում են ներդաշնակ մեղեդի (Երգերի գրքի Մաոյի տարբերակի նախաբան):

Սովորաբար, երբ մարդը հուզվում է արտաքին երևույթներից կամ տեսարանից, զգացմունքը դուրս է հորդում սրտի խորքից՝ այդպիսով առաջացնելով բզզոցի կամ հառաչանքի ձայն: Այդ դեպքում նա զգացմունքներն արտահայտում է արտասանության միջոցով. այդպես էլ ծնվում է բանաստեղծությունը, որը կարելի է բարձրաձայն երգել (Բայ Չույի. *Լսեսների ժողովածու՝ կայսերական քննության վերջին փուլին պատրաստվելիս*):

Շնորհի և վշտի միաձուլում ցին ձիան յա յուան 情兼雅怨

Պոեզիան պետք է արտահայտի բանաստեղծի վիշտը՝ միևնույն ժամանակ չխախտելով պատշաճ վայելչության գեղագիտական օրենքը: Այս կարևոր չափանիշը, որն առաջին անգամ առաջադրել է Հարավային դինաստիաներից հայտնի գրականագետ Ջուն Ռունը (468?-518), գնահատում էր պոեզիայի արժանիքները: Գեղարվեստական տեսանկյունից Ջունը Ցաո Ջիի բանաստեղծությունները համարում էր «վայելչության ու վշտի համադրություն»: Նա շեշտում էր, որ բանաստեղծը պետք է խուսափի ավելորդ զգացմունքներից և ենթարկվի պատշաճ վարքի օրենքին: Ինչ վերաբերում է նրան, թե ինչպես հասկանալ «վայելուչ վիշտ» հասկացությունը, գոյություն ունի երկու տարբեր մեկնաբանություն: Առաջինի համաձայն՝ այս գաղափարի շեշտը վշտի վրա է. մասնավորապես, Ցաոյի բանաստեղծությունները ձգտում են բարձրաձայնել ճնշված վիշտը, չնայած արտահայտության զուսպ, ճիշտ ոճին: Երկրորդ մեկնաբանության համա-

Չինական ստորի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

ձայն՝ «վայելչությունն» ու «վիշտն» այստեղ հավասարաբար են՝ պնդելով, որ Ցաոյի բանաստեղծությունները միաժամանակ տխուր են ու վայելուչ: Անկախ ամեն ինչից, Ջունի տեսությունը զարգացրեց Լու Չիի (261-303) «պոեզիան՝ որպես զգացմունքների բնական արդյունք» գաղափարը՝ հասցնելով այն նոր մակարդակի և զարգացնելով այն ավանդական տեսության հիմքը, որ «զգացմունքները պետք է վերահսկել ծիսական վայելչությամբ»:

Մեջբերումներ 引例.

Ցաո Չիի բանաստեղծությունները «Երգերի գրքի» «Պետությունների բալլադների» ազդեցության տակ են: Դրանք ոճով մոզական են ու գեղեցիկ, որոնցում միախառնված են վայելչությունն ու վիշտը: Բովանդակությունն ու ձևն իդեալական համադրվում են: Ցաո Չին, այսպիսով, կշտամբում է անցյալի բոլոր պոետական փորձերը և պարծենում, որ զգալիորեն առաջ է իր ժամանակակիցներից (Ջուն Ռուն. «Պոեզիայի քննադատություն»):

«Պետությունների բալլադներն» արտահայտում են բուռն սեր՝ առանց զիջողատության, «Փոքր պալատական հիմները»՝ բողոք ու քննադատություն՝ առանց խնդիրներ հարուցելու: Ինչ վերաբերում է Ցի Յուանի Լի Սաոյին, այն համադրում է թե՛ «Պետությունների բալլադների», թե՛ «Պալատական մանր հիմների» գեղագիտական արժանիքները (Պատմաբանի արձանագրություններ):

Բարոյական խրատներ՝ ուղեկցված զգացմունքներով ցինձիաո 情教

Գրական երկի կրթական գործառույթը լավագույնս իրականացվում է զուսպ զգացմունքային ազդեցության միջոցով՝ հիմնվելով այն համոզմունքի վրա, որ գրական երկը կարող է

ազդել և մաքրագործել ընթերցողի հոգին տղամարդու և կնոջ սիրո և աշխարհի բոլոր անկեղծ զգացմունքների նկարագրությունների միջոցով. նպատակը հասարակության բարոյական նկարագրի վրա վերջնական ազդեցությունն ու դրա ձևափոխումն է: Այս եզրույթն առաջին անգամ կիրառել է ուշ Մին շրջանի հայտնի գրող Ֆեն Մենլունը (1574-1646): Ֆենն ընդգծում էր, որ «զգացմունքը» մարդկանց բնագոյն ու բնական հակումն է՝ սկսած տղամարդու և կնոջ կապվածությունից, որն ապա տարածվում է միապետի և նախարարների, հոր ու որդու կամ եղբայրների ու ընկերների հարաբերությունների վրա: Առանց անկեղծ զգացմունքների՝ գրական գործը չի կարող դիպչել սրտին ու բարոյապես խրատել մարդկանց: Բարոյական խրատներն անկեղծ զգացմունքներով պարուրելով՝ Ֆենը մտադրություն չունեի հրաժարվել էթիկական խորհրդածություններից: Ըստ էության, նա համարում էր, որ անկեղծ զգացմունքները շատ ավելի հիմնարար են ու հավաստի, ավելի սերտ են կապված մարդու էության հետ: Բարոյական կրթությունն անկեղծ զգացմունքներով տոգորելու տեսությունն առաջացավ անկեղծության և հավաստիության հանդեպ ընդհանուր հարգանքից, որն առաջացել է մոտավորապես Մին դինաստիայի կեսերին՝ արտացոլելով նաև Ֆենի գիտական տեսլականն ու աշխարհայացքը: Նա մի քանի տասնամյակ ծախսեց հայտնի գեղարվեստական ստեղծագործություններ ծրագրելու և գրելու համար՝ այդպիսով կյանքի կոչելով իր գաղափարները:

Մեջբերումներ 引例.

Եթե երկնքի ու երկրի միջև անկեղծ զգացմունքներ չլինեին, արարածները չէին կարողանա բազմանալ: Եթե արարածները չունենային իրական զգացմունքներ, կյանքի ցիկլը չէր շարունակվի: Կյանքը շարունակվում է բացառապես այն պատճառով, որ անկեղծ զգացմունքը դժվար է մեռնում... Ես ուզում եմ պաշտպանել ճշմարիտ զգացմունքների գաղափարը, որպեսզի իմ եղբայրներին ու քույրերին առաջնորդեմ

Չինական ստորի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

դեպի իմաստավորված կյանք (Ֆեն Մենլուն. «*Ռոմանտիկ սիրո պարմություններ*»):

Սերը կարող է ծագել անգիտակցաբար և ժամանակի ընթացքում խորանալ: Սիրո շնորհիվ ողջերը կարող են ընդունել մահը, իսկ մեռյալները՝ կյանք վերադառնալ (Թան Սիանցու. *The Peony Pavilion-ի նախաբան*):

**Բարեգութ մարդը փայփայում է իրեն
ռենջեցիայ 仁者自爱**

Այս գաղափարն առաջին անգամ բարձրաձայնել է Յան Հույը (մթա. 551-479թթ.)՝ Կոնֆուցիոսի աշակերտներից մեկը: Նա բարյացակամությունը բացատրելու սուբյեկտիվ հիմքեր էր առաջադրում: Կոնֆուցիական դպրոցի համաձայն՝ բարեգութ մարդն անպայման, նախ՝ փայփայում է ինքն իրեն, ապա իր սերը տարածում բոլորի նկատմամբ: Դրա դիմաց նա անպայման շահում է բոլորի սերը: Սա փոխադարձ է: Բազմաթիվ մարդիկ այն ժամանակներից ի վեր պաշտպանում էին այս գաղափարը, չնայած պարտադիր չէ, որ պատկանեին Կոնֆուցիական դպրոցին: Հիմնական գաղափարն այն է, որ մարդը չպետք է լինի եսասեր, բայց պիտի ունենա արժանապատվություն և հույսը դնի իր վրա՝ լավագույնս ծառայելով մարդկանց ու երկրին:

Սեջբերումներ 引例

Կոնֆուցիոսը հարցրեց Յան Հույին. «Ինչպիսի՞ն է իմաստուն մարդը, և ինչպիսի՞ն է առաքինի մարդը»: Յան Հույը պատասխանեց. «Իմաստուն մարդը գիտի իր ունակությունների մասին, իսկ առաքինի մարդն արժանապատիվ է ու փայփայում է իրեն»: Կոնֆուցիոսն ասաց. «Այդպիսի մարդիկ իսկապես խորաթափանց են» (Մունցի):

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

Միայն երբ մարդը փայփայի իրեն, ուրիշները կհարգեն: Միայն երբ հարգի իրեն, ուրիշներն ակնածանքով կվերաբերվեն (Յան Սյուն. «Ասույթներ»):

Գիտնականը գիտի, որ մի օր անպայման հաջողության կհասնի, հետևաբար շատ բծախնդիր է խոսքերի ու արարքների մեջ և ոչինչ չի անի ուրիշներին վնասելու համար (Հուն Մայ. «Ռունջայի ծանոթագրություններ»):

Տրաիդհատուկա / Գոյության երեք ոլորտ սանձիե 三界

Բուդդիզմում բանական արարածների տիեզերքը կազմված է երեք ոլորտից. (1) ցանկության ոլորտ (կամադհատու), որտեղ միտքը մոտիվացնում են զգայական ցանկությունները, (2) նուրբ ձևերի ոլորտ (ռուփադհատու), որտեղ միտքը դադարում է հետաքրքրվել զգայական օբյեկտներով, բայց դեռ զբաղված է կոնցեպտուալ մտավոր գործունեությամբ և (3) անձև ոլորտ (արուփյադհատու)՝ մտքի ավելի բարձր մակարդակ, որն ազատված է ցանկությունից և կոնցեպտուալիզացիայից: Բոլոր կենդանի արարածները ենթարկվում են անցյալի ու ապագայի արարքներին (կարմա), հետևաբար մնում են երեք ոլորտներում՝ վերածննդի ցիկլում: Այսպիսով, սա կոչվում է տառապանքների անիվ երեք ոլորտներում: Գոյության երեք ոլորտների գաղափարը մի կողմից բացահայտում է, թե բուդդիստներն ինչպես են հասկանում տիեզերքը, մյուս կողմից՝ ինչպես է այն հարաբերվում մեղիտատիվ ձեռքբերումների տարբեր փուլերի հետ:

Մեջբերում 引例.

Երեք ոլորտներում ամեն ինչ նման է երազի: Ես կձգտեմ աշխատասիրության: Ավելի լուսավորյալ դառնալով՝ իմ ուս-

Չինական ստրի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

մունքը կհասցնեն երեք ոլորտների բոլոր արարածներին
(«Իմաստության սուրբայի լուսափայլ կատարելությունը»):

**Սգո ծեսեր
սանլի 喪禮**

Հանգուցյալի թաղման և ողբի արարողությունը կարևոր ծես է չինացիների կյանքում: Հին Չինաստանում այդպիսի ծեսերի համար կային մանրամասն օրենքներ, որոնք հիմնված էին սգացողի և հանգուցյալի հարաբերությունների վրա, ինչպիսիք են սգի տևողությունը, հագուստի կանոններն ու հանգուցյալին հրաժեշտ տալու վերջին հատուկ արարողությունները: Այս արարողությունները պահպանելով՝ մարդիկ իրենց վիշտն ու սերն էին արտահայտում հանգուցյալի նկատմամբ: Միևնույն ժամանակ, սգո արարողությունները նաև ծառայում էին սգացողների չափից դուրս շատ վիշտը կարգավորելու համար, որպեսզի դա չազդի նրանց առողջության վրա:

Սգացողների համար նախատեսված ծեսերը տարբերվում էին՝ ըստ հանգուցյալի հետ նրանց հարաբերությունների, և արտացոլում էին հնագույն շրջանի ընկալումները մարդկային հարաբերությունները կարգավորող նորմերի վերաբերյալ: Այսօր թե՛ սգո ձևը, թե՛ այդպիսի ծեսերում արտացոլված մարդկային հարաբերությունները փոխվել են հասարակական սովորույթների փոփոխությունների հետ:

Սեջբերումներ 引例.

Լին Ֆանը Կոնֆուցիոսին հարցնում է ծիսական արարողությունների հիմնական իմաստի մասին: Կոնֆուցիոսը պատասխանում է. «Կարևոր հարց էք տալիս: Ծեսերի դեպքում միշտ ցանկալի է լինել պարզ, չափը չանցնել: Ինչ վերաբերում է սգին, այդ ծեսերը պետք է որոշվեն վշտի աստիճանով,

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

այլ ոչ թե ծեսերի հանդեպ չափից դուրս ուշադրությամբ»
(«Անալեկրներ»):

Ինչո՞ւ ծնողների մահվան սուգը պետք է տևի երեք տարի: Բանն այն է, որ այն պայմանավորված է սգացողի վշտի աստիճանով: Այս օրենքը, որը որոշում է մարդկային հարաբերությունների կարգը և տարբերում է մարդկանց և նրանց սոցիալական դիրքի մտերմության աստիճանը, չի կարող փոխվել, կրճատվել կամ ընդլայնվել ըստ ցանկության («*Ծեսերի գիրքը*»):

Բուփա / Նյութ սե 色

Բուդդիստական տերմինաբանությամբ *բուփա* եզրույթը նշանակում է ընկալել երևույթները, որոնք կազմված են նյութականությունից և ձևից: Բուփան ի սկզբանե ցույց է տալիս ձև ունեցող առարկաներ, որոնք կարելի է ճանաչել տեսողության օրգանով՝ աչքով: Բուփան ավելի ուշ գույգ կազմեց *մին* (名 - նաման) բառի հետ, որը նշանակում է անուն, որը մինսե (名色 նամարուփա) բառակապակցության կախյալ ծագման տասներկու կապերից մեկն է՝ անուն և ձև, որ ցույց է տալիս կենդանի մարդու մտքի ու մատերիայի ամբողջականությունը վերաբնակեցման (սամսարա) ընթացքում: Ընդհանրապես բուփա եզրույթը կարող է ցույց տալ ցանկացած նյութական ձև, շուտ փչացող նյութ, որը բաղկացած է ատոմներից: Բայց որոշակի հանգամանքների դեպքում բուդդիստական տերմինաբանությունն օգտագործում է նաև «ոչ ինֆորմատիվ նյութ» (ավիյնապտի-բուփա հասկացությունը, որպեսզի այն տարբերակի տեսանելի նյութից, այսինքն՝ նրանից, ինչն ունի ձև և պատճառահետևանքային կապ, բայց վիճակը ենթակա չէ արտահայտման:

Մեջբերում 引例.

(Մեն) Ջատն ասում է. «Չեն ինքնին դատարկ է: Դատարկությունը չի հաջորդում ձևի քայքայմանը: Հետևաբար, եթե մեկը պնդում է, որ ձևը տարբերվում է դատարկությունից, սխալմամբ տարբերություն է տեսնում դրանց մեջ» (Վիմալակիրտի ուսմունքի մեկնաբանությունները):

**Քաջալերիչ բարին ու պատժիչ չարը
շանչան-ֆան 赏善罚恶**

Հին չինացիները հավատում են, որ եթե պետությունն ու հասարակությունը լավ են կառավարվում, ապա այն, ինչ բարի է, կսիրվի, իսկ այն, ինչ չար է, կարհամարվի, որպեսզի դրական սոցիալական միջավայր ստեղծվի: Բարին ու չարը պետք է հստակ սահմանվեն, իսկ պարզև ու պատիժը՝ բաշխվեն օրենքի համաձայն: Հին ժամանակներում բարին նշանակում էր լինել բանական, արժանապատիվ և օրինապահ, իսկ չար նշանակում էր ոչ բանական, օրինազանց և հանցագործ: Պարզևատրումն ու պատիժը ռազմական ոլորտն ու պետությունը ղեկավարող կարևոր միջոցներն էին և կարևոր լիազորություններ, որ իրականացնում էին կառավարիչները: Պարզևատրումներն ու պատիժներն իրենց էությունը դեմոնստրատիվ են: Մրցանակներ տրվում են՝ բարին խրախուսելու, իսկ պատիժներ նշանակվում են՝ չարիքը պատժելու համար: Հետևաբար, պարզևատրումն ու պատիժը պետք է նշանակվեն պատշաճ ձևով ու ճիշտ մարդկանց համար՝ ըստ կանոնների: Միայն այս դեպքում կստեղծվի առողջ ու դրական հասարակական մթնոլորտ: Պարզևատրումն ու պատիժը մարդկանց օգնում են զարգացնել ազնվությունն ու բարին տարբերել չարից:

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

Մեջբերումներ 引例.

Եթե բարին պարզևատրվի, իսկ չարը պատժվի, պետությունն անպայման հրաշալի կկառավարվի (Մոցի):

Հարգեք լավ մարդկանց, օգտագործեք նրանց տաղանդը, գնահատեք նրանց, ովքեր արժանի արարքներ են կատարել, և պատժեք նրանց, ովքեր խախտում են օրենքը... Սրանք են բարիքը սիրելու և չարիքը պատժելու բոլոր դրսևորումները: Սա պետք է երկիրը լավ կառավարելու համար, և սա ճիշտ է թե՛ այսօր, թե՛ հին ժամանակներում (Մունցի):

Իմաստուն քաղաքորդ հաստատում է օրենքի իշխանություն, բավարար չափով պարզևատրում է՝ բարի գործերը քաջալերելու համար, և բավարար չափով պատժում է՝ չարիքը ճնշելու համար... Այդպես բարիքը կավելանա, ինչպես բուսականությունը գարնանը, իսկ զանցանքները կթառամեն ու կմեռնեն, ինչպես բուսականությունը աշնանը (Հանֆեյցի):

**Սգա հանգուցյալներին և հիշիր անցավորներին
շեն ջուն ջույ յուան 慎终追远**

Այս եզրույթը նշանակում է հավուր պատշաճի կատարել թաղման արարողությունները և հարգել հանգուցյալի հիշատակը: Յենցիի կարծիքով՝ այդպես պետք է վերաբերվել հանգուցյալներին: Երբ մարդը մահանում է, ժամանակի ընթացքում նրա մտերիմները մոռանում են այն սերն ու հոգածությունը, որ հանգուցյալը ցուցաբերել է իրենց հանդեպ: Այսպիսով, մարդիկ պետք է կատարեն անհրաժեշտ արարողությունները թաղման ընթացքում, որպեսզի արտահայտեն իրենց վիշտն ու անմահացնեն հանգուցյալի ալտրուիզմը, առաքինություններն ու ձեռքբերումները նրա մահից հետո

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

երկար ժամանակ: Յենցին հավատում էր, որ սրա շնորհիվ մարդկանց մեջ հոգատարությունն ու սերը կավելանան:

Սեջբերում 引例.

Յենցին ասում էր. «Եթե թաղման արարողությունը պատշաճ իրականացվի, և ողջերը մշտապես հիշեն մեռյալներին, մարդիկ ազնիվ ու անկեղծ կլինեն»: («Անալեկյոներ»)

Հնչյունային և ռիթմիկ օրինաչափություններ շենլու 声律

Այս եզրույթը վերաբերում է այն օրենքներին ու ուսմունքներին, որոնք հնչերանգային և ռիթմիկ գեղեցկություն են ստեղծում արձակ և չափածո ստեղծագործություններում՝ միաձուլելով հնչյունները, ռիթմերն ու հնչերանգները: Հարավային դինաստիաների Յի և Լյան շրջանների գիտնական Ջոու Յունը չինարենի ելևէջները բաժանում է չորս խմբի՝ հավասար տոն, բարձրացող տոն, մտնող տոն և իջնող տոն: Այդ հիմքի վրա մեկ այլ գիտնական Շեն Յունեն (441-513) առաջարկել է պոեզիա գրելու իր օրենքները, ըստ որոնց բարձր ձայնաստիճանը հանդիպում է ցածր ձայնաստիճանի, իսկ բարձրացող տոները՝ մտնող ու իջնող տոներին: Նա նաև վերլուծել է տոների, նախնական բաղաձայների ու հաջորդող ձայնավորների վատ համադրության ութ տեսակ: Նրա ամենահայտնի՝ «Գրական միտքն ու վիշապներ քանդակելը» ստեղծագործության մեջ Լիու Սյենն (465?-520) նշում է, որ պոեզիայի մեջ ռիթմիկ գեղեցկություն ստեղծվում է հաջորդաբար տարբեր տոներ օգտագործելու դեպքում (այսինքն՝ հարթ և բարձրացող տոները՝ մտնող և իջնող տոների հետ): Նույն կերպ նաև, արձագանքման գեղեցկություն կարելի է ստանալ՝ յուրաքանչյուր բանաստեղծական տողի վերջում օգտագործելով նույն ձայնավորը: Լիու Սյեն հնչյուն-

նային և ռիթմիկ ներդաշնակության այս օրենքը տարածեց գրական այլ ժանրերի վրա՝ այդպիսով արտահայտելով իր սերը բանաստեղծության կամ երգի գեղեցկության հանդեպ և անելով ամեն ինչ, որ ընթերցողը հեշտությամբ կարդա այն: Նրա ջանքերը վկայում են այն մասին, որ Հարավային դինաստիաների գիտնականները ձգտում էին ֆորմալ գեղեցկության, որը հետագայում Թան դինաստիայի գրական գործիքներին խրախուսում էր ստեղծել կոկիկ ու գեղեցիկ տաղաչափական պոեզիա: Տաղաչափական գեղեցկության առաջին տեսությունները, որոնք մեծապես հենված են ավանդական երաժշտական տերմինաբանության վրա, հետագայում զարգացան ու վերածվեցին չինարենի հնչակարգաբանական համակարգի:

Մեջբերումներ 引例.

Հինգ գույները սքանչելի լրացնում են իրար, իսկ ութ նյութերից պատրաստված երաժշտական գործիքները ստեղծում են ներդաշնակ ու սահուն հնչյուններ: Պետք է ամեն ինչ անել, որ բոլոր գույներն ու երաժշտական նոտաները գեղեցիկ համադրվեն: Պոեզիան նույնպես պետք է տարբերվի հնչերանգով՝ հաջորդաբար օգտագործելով հարթ ու բարձրացող տոներ և մտնող ու իջնող տոներ, ինչպես նաև ցածր ու բարձր հնչյուններ: Եթե ձայնաստիճանը սահուն բարձրանում է, դրան հաջորդող տոնը պետք է լինի բարձր ու կարճ («Հարավային դինաստիաներից Մունի պարմությունը»):

Տաղաչափության օրենքները հիմնված են մարդկային հնչյունների վրա: Մարդկային հնչյունների հիմքի վրա բնական ճանապարհով զարգացել է պենտատոնիկան: Հին թագավորներն ու կայսերերը ստեղծում էին մեղեդիներ ու երգեր՝ կրկնօրինակելով մարդկային հնչյունները, այլ ոչ թե հակառակը: Հետևաբար, լեզուն կարևոր նշանակություն ունի միտքն արտահայտելու համար: Ինչ վերաբերում է լեզուն տաղաչափական օրենքներին հարմարեցնելուն, դա արվում

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

է միայն, որ վերբալ արտահայտությունն ավելի հեշտ լինի (Լիու Սյե. «Գրական միտքն ու վիշապներ քանդակելը»):

Իմաստուն շենրեն 圣人

Եզրույթը վերաբերում է բացառիկ առաքինի մարդուն: Հին չինացիները համարում էին, որ իմաստուններն օժտված են սքանչելի բնավորությամբ և բացառիկ ազնվությամբ: Նրանք լավ գիտեին Երկնքի ճանապարհները և մարդկանց սրտերը, ուստի կարող էին օրենքներ սահմանել ու կարգավորել մարդկանց էթիկայի ոլորտը: Իրենց օրինակելի հայտարարություններով ու վարքագծով նրանք առաքինության կենդանի օրինակներ էին: Բայց գիտնականները տարբեր կերպ են մեկնաբանում իմաստուն ու առաքինի մարդկանց նշանակությունը: Ըստ կոնֆուցիական գիտնականների՝ իմաստունները նրանք են, ովքեր կատարելապես տիրապետում են այնպիսի առաքինությունների, ինչպիսիք են բարեհաճությունն ու արդարամտությունը, և զարգացնում են բարոյական առաքինություններն այլոց մեջ: Դառսիզմի տեսանկյունից, սակայն, կյանքում իմաստունները պետք է որդեգրեն «անգործության» մոտեցումը, մարդկանց ընդունեն այնպիսին, ինչպիսին նրանք կան, և վարվեն ինչպես ցանկանում են:

Մեջբերումներ 引例.

Մենցիուսն ասաց. «Ինչպես կողմնացույցն ու քանոնը գործիքներ են, որոնց օգնությամբ կարելի է քառակուսիներ ու շրջաններ նկարել, այնպես էլ իմաստուններն էթիկական վարքագծի վառ օրինակներ են» (Մենցիուս):

Հետևաբար, իմաստուններն աշխարհիկ գործերին վերա-

բերվում են՝ ելնելով անգործության սկզբունքից, մարդկանց սովորեցնում են առանց բառ արտաբերելու և թույլ են տալիս, որ իրադարձությունները զարգանան առանց միջամտության: Իմաստունները ստեղծում ու զարգացնում են, բայց չեն սեփականաշնորհում իրենց ստեղծածը, սնուցում ու փայփայում են, բայց հավակնություններ չեն ունենում դրանց նկատմամբ, ձեռքբերումներ են գրանցում, բայց չեն պարծենում դրանցով: Պատճառն այն է, որ նրանք չեն ձգտում ճանաչման իրենց ձեռքբերումների համար, որոնք երբեք չեն մոռացվում (Լաոցզի):

Պահպանիր ոսկե միջինը շիջուն 時中

Այս եզրույթը, որը ծագել է «Ծեսերի գրքից», նշանակում է, որ պետք է միշտ հետևել «ոսկե միջինի» սկզբունքին: Կոնֆուցիական գիտնականները սա համարում էին գերազույն սկզբունք, որն առաջնորդում էր մարդկանց վարքագիծը: Նրանք շեշտում էին, որ չի կարելի գործել ոչ չափից շատ, ոչ շատ քիչ: Սակայն պատշաճության կամ անպատշաճության չափանիշները նույնպես փոխվել են: Որոշակի գործողություններ ձեռնարկելիս պետք է մշտապես հիշել էթիկայի չափանիշներին ու ծեսերին հետևելու, մասնավորապես, ոսկե միջինի սկզբունքին հետևելու անհրաժեշտությունը:

Մեջբերում 引例.

Կոնֆուցիոսն ասում էր. «Առաքինի մարդը հետևում է ոսկե միջինին, իսկ մանրախնդիր մարդը զնում է դրա դեմ: Առաքինի մարդը մշտապես ձգտում է պահպանել միջինի օրենքը, իսկ մանրախնդիր մարդն ընդդիմանում է դրան և անսկզբունքայնություն է դրսևորում («Ծեսերի գիրքը»):

**Ուրիշների հետ վարվիր այնպես,
ինչպես քեզ հետ ես վարվում
չի բեն բու ձի 视人如己**

Չինաստանում հին ժամանակներից մտքի յուրաքանչյուր դպրոց սերը համարել է առանցքային արժեք: Բոլորն այն կարծիքի են, որ մարդիկ ընդհանրապես պետք է բարի կամք կամ կարեկցանք դրսևորեն այլոց հանդեպ, անկախ նրանից՝ լավ են ճանաչում իրար, թե ոչ, հարուստ են, թե աղքատ: Սա ոչ միայն միջանձնային հարաբերությունները կարգավորող կարևոր սկզբունք է. այն կարող է նաև ընդլայնվել և վերածվել բռնությունն ու բիրտ ուժը մերժող սկզբունքի: Ինչպես ինքդ քեզ ուրիշի փոխարեն պատկերացնելու կոնֆուցիական սկզբունքը, «վերաբերվիր ուրիշներին այնպես, ինչպես քեզ ես վերաբերվում» սկզբունքը պաշտպանում է բարյացակամությունը, հավասարությունն ու հանդուրժողականությունը:

Մեջբերումներ 引例.

Սիրող սիրտ ունեցող մարդիկ ուրիշներին վերաբերվում են այնպես, ինչպես իրենց են վերաբերվում, և իրենց հեռավոր ծանոթներին վերաբերվում են այնպես, ինչպես մտերիմներին (Գե Հուն, Բաոփուցի):

Եթե թշնամի երկիրն ազգային սզի մեջ է կամ տառապում է սովից կամ ժանտախտից, մենք չենք հարձակվի նրանց վրա. մենք պետք է սիրենք ժողովրդին այնպես, ինչպես մեր ժողովրդին ենք սիրում (Կայսերական քրեստոնմատիա Մուն դինաստիայի կայսր Թայցունի համար):

Պետք է կարեկցել նրանց, ովքեր դժբախտության մեջ են, կիսել ուրիշների երջանկությունը, օգնել, որ դուրս գան դժվար կացությունից, և օգնության հասնել նրանց, ովքեր փոր-

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

ձանքի մեջ են: Պետք է ուրիշի ձեռքբերումներն ու կորուստները քունը համարել (Լի Չանլին. «Թայշանլաոչունը՝ բարու և չարի հասրուցման մասին»):

Հետմահու տիտղոս

շիհաո 谥号

Հետմահու տիտղոսները հաճախ շնորհում էին կայսրերին, ազնվականներին, նախարարներին և այլ ականավոր պաշտոնյաների, որոնք քաղաքական ու սոցիալական բարձր կարգավիճակ ունեին: Տիտղոսները նախատեսված էին՝ դրանց հասցեատերերի կյանքը հակիրճ ամփոփելու համար: Դրանք հիմնականում լինում էին երեք ձևով՝ գովաբանող, նվաստացուցիչ կամ ցավակցական: Սրանք չինական ավանդական քաղաքականության ինստիտուցիոնալ մշակույթի կարևոր մասն էին: Տիտղոսները նպատակ ունեին ուղղորդել ապագա սերունդներին և նպաստել քաղաքական ու սոցիալական կայունությանը:

Մեջբերումներ 引例.

Հետմահու տիտղոսը մարդու կյանքի, այդ թվում և արժանիքների ու թերությունների ամփոփումն է («Հիշողություններ Չոուի գրքի մասին»):

Հետմահու տիտղոսներն արժանիքների և խայտառակությունն ընդգծելու և ազնվությունը գովերգելու համար են (Մալիտակ վագրի սրահի դեբատներ):

Հետմահու տիտղոսների համակարգը նախատեսված էր չարը պատժելու, բարի գործերի համար պարգևատրելու, վատ արարքներից խուսափելու, լավ գործերը գովաբանելու, հավատարիմ մարդկանց քաջալերելու և չարագործներին խանգարելու համար («Թանի հին գիրքը»):

**Մեծարում և զովաբանություն
սունցան 颂赞**

Մեծարման և փառաբանության մասին ակնարկներ գրվում էին՝ արժանի մարդկանց, երևույթները, արժանիքներն ու առաքինությունները հավուր պատշաճի գնահատելու համար՝ այդպիսով նպաստելով դրանց դրական ազդեցությանը: Թե՛ մեծարման ու զովեստի, թե՛ զովասանքի նպատակը լավ մարդկանց ու բարի գործերի մեծարումն է: Այսպիսի էսսեները կարճ են, կոկիկ ու հանգավորված: Լիու Սյեն (465?-520) հարավային դինաստիաներից գնահատում էր մեծարման ու զովեստի ինտելեկտուալ և կրթական արժեքը: Նրա կարծիքով՝ սկզբում զովաբանության արժանանում էին աստվածները, կայսրերն ու թագավորները, ապա այն տարածվեց սովորական մարդկանց վրա, իսկ զովաբանության մասշտաբներն այլևս չէին սահմանափակվում պետական գործերով. այն տարածվեց բոլոր գեղեցիկ երևույթների վրա: Գովասանքն ունի մեկ այլ գործառույթ. այն գնահատական է, իսկ դրական գնահատականը նպաստում է զովասանքի կարևորությանը: Չինական գրականության մեջ մեծարման կամ զովաբանության ստեղծագործությունները սովորական էսսե չեն. դրանք երբեմն կապված են տարբեր գրական ստեղծագործությունների կամ նույնիսկ նորությունների հետ: Այս գործերը մեծարման և դրական գնահատման միջոցով նպաստում են ավանդական չինական մտքի ու մշակույթի զարգացմանը:

Մեջբերումներ 引例.

«Մեծարման հիմներն» ուրվագծում են թագավորի ճանապարհի վերելքն ու անկումը և ներկայացնում են պոեզիայի բարձրագույն ոլորտը: Այս ամենից «Մեծարման հիմներն» ամենաշատ բանաստեղծական նշանակությունն ունեն: Մուն (公頌) բառի առաջին իմաստն է՝ վարք, պահելաձև, երկ-

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

րորդը՝ «վարքի միջոցով բարձր արժանիքների մեծարում» (Լիու Սյե. «*Գրական միտքն ու վիշապներ քանդակելը*»):

Ըստ սահմանման՝ մեծարման էսսեն բովանդակությամբ պետք է հղկված ու պատշաճ լինի, իսկ ոճով՝ թարմ ու նրբագեղ: Պատումը պետք է ռապսոդիկ արձակ հիշեցնի, բայց՝ առանց երկարաբանության: Հանդիսավոր և շրջահայաց ոճը պիտի նմանվի բնաբանի, բայց պարունակի որոշակի խրատ: Մեծարման էսսեն գրվում է՝ մարդու բարությունն ու առաքինությունը հավոր պատշաճի գնահատելու համար՝ կենտրոնանալով խոշոր ձեռքբերումների վրա և ընդգծելով դրանց կարևորությունը (Լիու Սյե. «*Գրական միտքն ու վիշապներ քանդակելը*»):

Ըստ սահմանման՝ գովեստի էսսեն ենթադրում է հիացմունք: Հին ժամանակներից գովեստի էսսեներն ունեն կարճ բանաստեղծական տողեր, որոնցից յուրաքանչյուրը կազմված է չորս տառանշանից, իսկ ամբողջ էսսեն պարունակում է ընդամենը մի քանի հանգավորված քառատող: Այն հակիրճ շարադրում է փաստերն ու ավարտվում է հստակ ու համոզիչ նոտայով: Սրանք են գովասանքի էսսեի հիմնական օրենքները (Լիու Սյե. «*Գրական միտքն ու վիշապներ քանդակելը*»):

**Պատրաստակամորեն բարեգործություն և
առաքինություն դրսևորիք
ուեյ թեն յոու ձի 为仁由己**

Բարիք գործելու և առաքինության գաղափարներն իր աշակերտներին բացատրելիս Կոնֆուցիոսն (մթա. 551-479) առաջադրեց այն գաղափարը, որ «պետք է պատրաստակամորեն բարի ու առաքինի գործեր անել»: Նա շեշտում էր, որ բարեգործության ու առաքինության ձեռքբերումը պայմանավորված չէ արտաքին նորմերով: Ավելին, պետք է ինք-

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

նազապում և ճիշտ վարքագիծ դրսևորել: Սա նշանակում է, որ պետք է հավատալ բարեգործությանն ու առաքինությանը և պատրաստակամորեն գործել ըստ դրանց:

Մեջբերում 引例.

Յան Յուանը հարցնում է բարեգործության մասին: Կոնֆուցիոսն ասում է. «Ինքնազապումն ու վայելուչ վարքագիծը բարյացակամության դրսևորումներ են: Երբ զսպես ցանկություններդ ու բարյացակամ վերաբերմունք դրսևորես, մարդիկ կգովեն քեզ: Բայց պետք է ինքդ էլ բարյացակամ լինես. ինչպե՞ս կարող են ուրիշներն անել դա քո փոխարեն» (*«Անալեկտներ»*):

Չգտիր գիտելիքի՝ զումարելով. հետևիր Գաոյին՝ հանելով ուեն սյուե րի յի, ուեյ դաո րի սուե 为学日益, 为道日损

Չգտիր գիտելիքի՝ ամեն օր ավելացնելով այն: Հետևիր Գաոյին՝ ամեն օր քեզնից վանելով ինչ-որ բան՝ կողմնակալություն և ցանկություններ: «Գիտելիքի ձգտել» արտահայտությունը ենթադրում է գիտելիքի ու իմաստության կուտակում, որն էլ ավելանալով լայնացնում ու հարստացնում է միտքը: «Հետևիր Գաոյին» արտահայտությունը նշանակում է հասկանալ համընդհանուր սկզբունքները. այսպիսով, ազատվել կողմնակալությունից և անհատական ցանկություններից, անառողջ գիտելիքներից, անցանկալի ցանկություններից, ինչն էլ իր հերթին հանգեցնում է «անգործության»: Հանելու միջոցով Գաոյին հետևելը կառավարման այն հիմնական սկզբունքն էր, որ պաշտպանում էր Լաոցզին: Այն է՝ սահմանված քաղաքականությունը պետք է լինի պարզ ու հեշտ իրագործելի և հնարավորինս քիչ միջամտի մարդկանց բնականոն կյանքին: Սա «անգործության» դառսական գաղափարի վառ օրինակ է:

Մեջբերում 引例.

Գիտելիքի ձգտելիս ամեն օր մի նոր հատիկ ավելացրու: Դառնի՞ն հետևելիս ամեն օր ազատվիր կողմնակալությունից և ցանկություններից: Հանիր ու հանիր այնքան, մինչև հասնես «անգործության»: Եթե կարողանաս հասնել «անգործության», ի վիճակի կլինես ցանկացած բան անել: Ովքեր կառավարում են հողը, երբեք չպետք է անեն մի բան, որը կխանգարի մարդկանց կյանքին, իսկ եթե խանգարեն կոշտ քաղաքականության միջոցով, ուրեմն հարմար չեն երկիր կառավարելու համար (Լաոցզի):

**Բովանդակությունն ավելի էական է,
քան հռետորաբանությունը
ուեն յի յի ուեյ ջու 文以意为主**

Գրավոր երկը ստեղծվում է իմաստ արտահայտելու համար: Հետևաբար, «իմաստը» հողվածի հիմնական բովանդակությունն է: Սա հին չինական գրականագիտության կարևոր գաղափար է: Այն հաճախ ընդգծվում էր Սուն, Չին, Յուան և Մին դինաստիաների էսսեներում և ընդունված էր հետագա սերունդների գիտնականների կողմից: Այս տեսության համաձայն՝ բովանդակությունը կամ իմաստն ավելի կարևոր է, քան հռետորաբանությունը, այն պետք է միշտ առաջին տեղում լինի: Տեսությունը սերտորեն կապված է «գրիր՝ լուսաբանելով Դաոն» և «գրիր՝ բացահայտելով ճշմարտությունը» գաղափարների հետ, որոնք առաջին անգամ հիշատակել են Թան և Սուն դինաստիաների գիտնականները: Այն հին Չինաստանի գրական տեսական ավանդույթի շարունակությունն է: Սակայն «իմաստ» բառն այստեղ ավելի լայն ներիմաստներ է ենթադրում, քան Դաոն կամ ճշմարտությունը:

Մեջբերումներ 引例.

Ես հաճախ ասում եմ, որ մարդու զգացմունքներն ու ձգտումներն ապրում են նրա գրավոր երկերում: Էստեները պետք է ավելի շատ կենտրոնանան բովանդակության վրա և հռետորաբանությունն օգտագործեն՝ բովանդակության ավելի լավ ծառայելու համար: Քանի դեռ էստեի հիմնական շեշտը բովանդակությունն է, ասելիքն ավելի պարզ է արտահայտվում: Երբ հռետորաբանությունն օգտագործվում է՝ ասելիքը հաղորդելու համար, անկանոնություն չի լինում (Ֆան Յե. «Բանորում գրված նամակ զարմիկներին»):

Անկախ նրանից՝ պոեզիա է թե ավելի երկար գրավոր երկ, հեղինակի խնդիրը պետք է լինի հիմնական ասելիքը: Հիմնական ասելիքը կարելի է նմանեցնել բանակի գլխավոր հրամանատարի: Առանց գլխավոր հրամանատարի զինվորները կվերածվեն անկազմակերպ ամբոխի (Ուան Ֆուչի. «Պոեզիայի մեկնաբանություններ Ginger Studio-ից»)

Անիտյա / Փոփոխականություն

ուչան 无常

Եզրույթը նշանակում է կայունության բացակայություն: Աշխարհում ամեն ինչ սկիզբ է առնում պատճառների ու պայմանների համադրությունից: Առանց դրա ամեն ինչ անհետանում է: Չկա հավերժական, անփոփոխ էություն, որը կարելի է դիտարկել որպես ինքնության հիմք: Բուդդիզմը տարբերակում է փոփոխականության երկու մակարդակ: Առաջին, հաջորդական երևույթների փոփոխականություն. բանական մարդը չունի որևէ էություն, օրինակ, հոգու էություն, որը չի փոխվում ծննդի ու մահվան հաջորդականության մեջ: Շարունակականությունն ու նմանությունը թվացյալ են, երևութական: Երկրորդ, յուրաքանչյուր միտք-դեպքի փոփոխականություն. սա ընդգծում է, որ ամեն ինչ, ինչ ծա-

գում է պայմաններից, փոխվում է, առաջանում ու անհետանում մտքի մի ակնթարթում:

Մեջբերում 引例.

Մեր մարմինը նույնն է: Այն կազմված է մաշկից ու ոսկորներից: Այն պտտվում է սեփական մտքերի քամուց: Ամեն վայրկյան այն ծնվում ու հանգչում է: Այն փոփոխական է ու դատարկ: Չկա ստեղծող, նեղացնող կամ զոհ, որովհետև այն միշտ ունայն է: Բայց սխալ ընկալման և լիարժեք շփոթմունքի պատճառով սովորական մարդը կառչում է նրանից, ինչն իրականում գոյություն չունի (Իմաստության մեծ կատարելության քննախոսություն):

Հինգ զսպող ուժ ուլուն 五伦

Հինգ զսպող ուժերը, որոնք հայտնի են նաև որպես հինգ մարդկային հարաբերություն, վերաբերում են հոր և որդու, միապետի և նախարարի, ամուսնու և կնոջ, քույրերի ու եղբայրների, ընկերների հարաբերություններին: Հին չինացիները հավատում էին, որ սրանք մարդկանց ամենահիմնական հարաբերություններն են: Յանկացած հարաբերության մեջ պետք է պահպանվեն համապատասխան նորմեր, մասնավորապես, հոր և որդու հարաբերություններում պետք է լինի կապվածություն, միապետի ու նախարարի միջև՝ արդարամտություն, կնոջ և ամուսնու հարաբերություններում՝ հարգանք առանձին դերերի հանդեպ, քույրերի ու եղբայրների միջև՝ պատշաճ կարգուկանոն, ընկերների միջև հարաբերություններում՝ պատիվ ու վստահություն: Համարվում էր, որ այս հինգ հարաբերությունների հավասարակշռությունը պետության և հասարակության կառավարման հիմքն է, և որ դրանք վկայում են այն մասին, որ չինական մշակույթը մարդակենտրոն է և կարևորում է կարգն ու կանոնը:

Մեջբերումներ 引例.

Մարդիկ օժտված են բարոյական էությամբ: Եթե նրանց լավ են կերակրում, տաք հագուստ են տալիս ու հարմար բնակեցնում, բայց չեն սովորեցնում, նրանք զազաններից ավելի լավ չեն լինում: Այս հարցն այնքան էր մտահոգում իմաստուն Շունին, որ նա Սիեին նշանակեց նախարար. վերջինիս պարտականությունը պետք է լիներ խրատել հանրությանը, սովորեցնել միջանձնային հարաբերություններ և համապատասխան նորմեր. հոր և որդու հարաբերություններում պետք է լինի կապվածություն, միապետի ու նախարարի միջև՝ արդարամտություն, կնոջ և ամուսնու հարաբերություններում՝ հարգանք առանձին դերերի հանդեպ, քույրերի ու եղբայրների միջև՝ պատշաճ կարգ ու կանոն, ընկերների միջև հարաբերություններում՝ պատիվ ու վստահություն: (Մենցիոս):

Միայն այն բանից հետո, երբ Շուն կայսրը սովորեցրեց հինգ միջանձնային հարաբերությունները, ստեղծվեցին այն հիմնական նորմերը, որոնց հետևեցին ողջ երկրում (Ուան Յունբին. «Գիշերային գրույցներ օջախի շուրջ»):

Ֆիզիկական առանձնահատկություններ ուսե 物色

Եզրույթը լայն իմաստով վերաբերում է բնության մեջ ամեն ինչի արտաքին տեսքին և օրինաչափություններին: Սկզբում այս եզրույթով նկարագրում էին կենդանիների մորթու գույները, հետագայում այն սկսեցին գուգորդել բոլոր ֆիզիկական երևույթների, օրինակ, բնապատկերի շքեղության և լանդշաֆտի գույների հետ: Լիու Սյեն (465?-520) իր «Գրական միտքն ու վիշապներ քանդակելը» գրքում ամենայն մանրամասնությամբ քննարկել է բնության առանձնահատ-

կությունների և գրական ստեղծագործության հարաբերությունները: Նրա կարծիքով՝ «գրական երկը ստեղծվում է միայն, երբ արտաքին երևույթները հուզում են գրողի խոր զգացմունքները»: Այսինքն, որպես գեղագիտական գնահատման օբյեկտներ՝ բնության առանձնահատկությունները կարող են մարդուն ոգեշնչել և մղել զգացմունքները վերածել բառերի: Լավ գրական ստեղծագործությունը պետք է «ամենայն մանրամասնությամբ բացահայտի կենսական էներգիան և արտաքին երևույթների էությունը»: Մինույն ժամանակ, «այդպիսի ստեղծագործությունը պետք է նաև ներառի կերպարներ և հնչերանգներ, որոնք համապատասխանում են գրողի զգացմունքներին»: Յանկալի է, որ այն միաձուլի զգացմունքներն ու բնապատկերը: Ստեղծագործության այս տեսակի մասին կարելի է կարդալ Ջաոնին արքայազնի գրական երկերի ժողովածուի «Ռապսոդիկ արձակ» բաժնում, որտեղ կան բնապատկերի ու լանդշաֆտի վառ նկարագրություններ:

Մեջբերումներ 引例.

Տարվա եղանակները փոխվում են: Յուրտ եղանակից մարդիկ ընկճվում են, իսկ արևի տաք շողերից՝ երջանկանում ու հանգստանում: Բնապատկերն ու առարկաները ժամանակի հետ փոխվում են՝ փոխելով նաև մարդու տրամադրությունը (Լիու Սյե. «Գրական միտքն ու վիշապներ քանդակելը»):

Մթնշաղի ժամանակ բնապատկերը տրտմություն է առաջացնում: Վաղ աշնանային առավոտվա սառնամանիքն ու ցողը սառեցնում են ծաղիկներն ու խոտը՝ ահազանգելով ձմռան գալստի մասին (Բաո Ջաո. «Աշնանային ներքող՝ իմ հարգարժան բուդդիստ ընկեր Հույսիտի հիշատակին»):

Դատապարտում և խրատ

սիյի 檄移

Այս եզրույթը նշանակում է կայսերական հրովարտակների երկու տեսակ հին ժամանակներում: *Մին* (檄) թշնամու պաշտոնական դատապարտումն էր և կովի պաշտոնական համախմբված կոչը, իսկ *յին* (移) զգուշացում էր հանրության համար, որի նպատակը մարդկանց սխալ խոսքից ու վարքագծից պաշտպանելն էր: Ինչպես Լիու Սյեն (465?-520) է նշել իր «Գրական միտքն ու վիշապներ քանդակելը» գրաքննադատական երկում, դատապարտման մասին կայսերական հրովարտակը թվարկում էր թշնամու գործած գազանությունները, բարձրացնում էր զինվորների բարոյահոգեբանական վիճակը, արժանանում համաժողովրդական աջակցության և բարոյալքում թշնամական գորքերը: Հետևաբար, այն համոզիչ էր, հզոր, ճիշտ ձևակերպված, բազմաթիվ խորհրդածություններով ու ապացույցներով զինված: Անհրաժեշտության դեպքում հրովարտակում կարող էին օգտագործվել չափազանցություններ կամ նույնիսկ թյուրիմացության մեջ զցող բառապաշար: Հորդորը կամ խրատը, մյուս կողմից, գրվում էր՝ կայսրության ներսում խնդիրները կամ արատները վեր հանելու, հանրությանը դրանց վնասակար ազդեցությունների մասին զգուշացնելու և ժամանակին դրանք շտկելու համար: Քանի որ խրատը կամ հորդորը ուղղված էր լինում ենթականերին, այն պետք է ավելի կարեկից ու ներողամիտ լիներ: Խրատը պետք է լինի փաստացի, առանց պերճախոսության ու ցուցադրական շքեղության: Այն պետք է մոտենա խնդրի էությանը, այլ ոչ թե «ջուր ծեծի» կամ թաքցնի ճշմարտությունը: Դատապարտումն ու հորդորը մի ընդհանրություն ունեն. դրանք խիստ դատապարտում են չարագործություններն ու պաշտոնեական հանցագործությունները:

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

Մեջբերումներ 引例.

Սի տառանշանը նշանակում է պայծառ ու պարզ, ինչպես «ցերեկվա լույսի պես պարզ» արտահայտության մեջ: Այն հստակեցնում է խնդիրները հանրության համար (Լիու Սյե. «Գրական միտքն ու վիշապներ քանդակելը»):

Դատապարտող հրովարտակի նպատակն է՝ ազդարարել, որ արդարությունը մեր կողմից է, և ցույց տալ թշնամու բրուտալ էությունը: Այն պիտի նկարագրի ռազմավարական միջավայրը, մեր ուժեղ և թույլ կողմերը համեմատի թշնամու ուժեղ և թույլ կողմերի հետ և թշնամուն զգուշացն իր մոտալուտ վախճանի մասին՝ մեջբերելով անցյալի օրինակները (Լիու Սյե. «Գրական միտքն ու վիշապներ քանդակելը»):

Յի (移) և յի (易). երկու չինարեն տառանշաններ՝ գրեթե նույն հնչողությամբ, այս համատեքստում կարող են փոխարինել միմյանց, բայց իմաստներով տարբեր են: Խրատի հրովարտակը նպատակ ունի փոխել ոչ ճիշտ սովորույթներն ու պրակտիկան: Ուր էլ որ հասնի այս հրովարտակը, մարդիկ կհնազանդվեն դրան ու կփոխեն իենց սովորույթները (Լիու Սյե. «Գրական միտքն ու վիշապներ քանդակելը»):

Պարկեշտ մարդ սյանրեն 贤人

Ազնիվ մարդն ունի իդեալական բնավորություն, որը խրախուսում էին հին չինացիները: Ազնիվ մարդը գործնականում կիրառում ու պահպանում է էթիկայի բոլոր կանոններն ու կյանքի բոլոր չափանիշները, իսկ նրա վարքագիծը համարվում է այդպիսի կյանքի վառ օրինակ: Մակայն մտքի տարբեր դպրոցներ տարբեր պատկերացումներ ունեն առ այն, թե ինչ որակներ պետք է ունենա ազնիվ մարդը: Կոն-

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

Ֆուցիական գիտնականների տեսանկյունից, ազնիվ մարդն ունի բարոյական բարձր առաքինություններ, օրինակ, բարյացակամություն և արդարամտություն, և ունի պաշտոնյա լինելու համար անհրաժեշտ բոլոր որակները: Մոհիստները, սակայն, հավատում են, որ ազնիվ մարդը պետք է տեսնի, որ իր կառավարության օրոք մարդիկ համընդհանուր սերը համարում են իրենց հիմնարար բարոյական ուղեցույց: Մինչդեռ մյուսները, օրինակ, դատասական գիտնականները, պնդում են, որ ազնիվ մարդուն մեծարելը կհանգեցնի անհիմաստ հակասությունների և, այդպիսով, կվնասի կառավարմանը:

Մեջբերումներ 引例.

Կոնֆուցիոսն ասում էր. «Երբ ազնիվ մարդ ես տեսնում, փորձիր նմանվել նրան. երբ անպարկեշտ մարդ տեսնես, մտածիր քո իսկ թերությունների մասին» (*«Անալեկյրներ»*):

Ազնիվ մարդուն հարգելը հիմնարար նշանակություն ունի կառավարման համար (Մոցի):

Չափավոր բարեկեցություն սյաոքան 小康

Հին ժամանակներից *սյաոքան* (小康) եզրույթն ընկալվում է որպես խաղաղության վիճակ և չափավոր բարեկեցություն: Որպես կոնֆուցիականության կարևոր քաղաքական կոնցեպտ` այն կիրառվում էր գովասանքի արժանի քաղաքական կլիմա ստեղծելու համար, որին կարելի է հասնել ականավոր կառավարիչների ջանքերի շնորհիվ, այնպիսի կառավարիչների, ինչպիսիք են Միա դինաստիայի Յու Մեծը, Շան դինաստիայի Թան արքան, Ջոուի Ուեն, Վու և Չեն քագավորները և Ջոուի դուքսը: Այս սոցիալական կլիման բնութագրվում էր երկրի կայունությամբ, կարգուկանոնով,

էթիկայի և օրենքի բարձր հանրային գիտակցությամբ և գոհ ժողովրդով: Այսպիսի հասարակությունը համարվում էր իդեալական, որը զիջում էր միայն Մեծ ներդաշնակությանը կամ *դաթունհին* (大同): Այսօր չինացիներին կոչ են անում կառուցել չափավոր բարեկեցիկ հասարակություն՝ հավասարակշռված տնտեսական, քաղաքական, մշակութային, սոցիալական և էկոլոգիական առաջընթացով: Ինչ վերաբերում է չինական ոճով արդիականացմանը, *սյաոքան* հասարակությունը նոր գաղափար է, որն ունի խոր պատմական ու մշակութային արմատներ:

Մեջբերումներ 引例.

Մարդիկ ծանր կյանք են ապրում և հույս ունեն, որ կարող են խաղաղություն և չափավոր բարեկեցիկ կյանք ունենալ («*Երգերի գիրքը*»):

Հիմա, երբ Մեծն դառն անտեսվածու լքված է, քազավորությունը վերածվել է ընտանեկան ժառանգության... Այսպիսով, սաղրանքներն ու ծրագրերն ավելանում են, և պատերազմներ են սկսվում: Միայի Յուն, Շանի Թանը, Ջոուի Ուեն, Վու և Չեն քազավորները և Ջոուի դուքսը հիշվում են՝ որպես ականավոր կերպարներ: Այս վեց մեծ մարդկանցից յուրաքանչյուրն ամենայն ուշադրությամբ հետևում էր վայելչության օրենքներին՝ ապահովելով արդարամտության, անկեղծության դրսևորումները, սխալների վերհանումը, բարյացակամությունը և նպատակների իրականացման ձգտումը՝ մարդկանց ցույց տալով բոլոր ակնկալվող նորմերը: Իշխանություն և դիրք ունեցողները, որոնք չէին հետևում այս ուղեցույցին, հեռացվում էին, իսկ մարդիկ վայելչության օրենքները խախտողներին համարում էին պատուհաս: Այսպիսի հասարակությունը կոչվում էր *սյաոքան* (չափավոր բարեկեցիկ) («*Ծեսերի գիրքը*»):

Փոխանցիր թե՛ այն, որ հավաստի է, թե՛ այն, որ անճշտելի է սին յի չուան սին, յի յի չուան յի 信以传信, 疑以传疑

Այս գաղափարը, որը ներառված է Գարնան և աշնան տարեգրքերի Գուլյանի մեկնաբանություններում, մարմնավորում է պատմական տվյալների հավաքագրման և պատմագիտության հին չինական ավանդույթը և կարևոր պատմական մեթոդաբանություն է: Այս գաղափարը նշանակում է, որ պատմության ուսումնասիրությունն ու պատմագրությունը պետք է հիմնված լինեն պատմական փաստաթղթերի վրա: Անհրաժեշտ է օբյեկտիվ և շրջահայաց վերաբերմունք դրսևորել պատմական փաստաթղթերում նշված և տարբեր պատմաբանների տրամադրած տարբեր տվյալների նկատմամբ: Պետք է հարգել պատմական տվյալներն ու ձեռնպահ մնալ կամայական դատողություններից: Գատողություններ չպետք է արվեն այնքան ժամանակ, քանի դեռ դրանք ստուգված չեն. եթե ստուգումն անհնար է, պետք է ստեղծել միջավայր կարծիքների փոխանակման համար: Այս մեթոդաբանությունը «լավ պատմության» չինական գաղափարի կոնկրետ դրսևորումն է և հավասարակշռված մոտեցում է պատմագրությանը:

Մեջբերում 引例.

Այն սկզբունքը, որով առաջնորդվել է հեղինակը Գարնան և աշնան տարեգրքերը գրելիս, ենթադրում է ինչպես վստահելի, այնպես էլ ստուգման ոչ ենթակա տվյալների փոխանցում (Գարնան և աշնան տարեգրքերի Գուլյանի մեկնաբանությունները):

Ազատիր միտքդ, որ վայելես աշխարհը սու ձի յի յուու շի 虚己以游世

Սա նշանակում է՝ ազատվել աշխարհիկ ցանկություններից:

րից, որպեսզի ազատ տեղաշարժվես աշխարհում: Այս արտահայտությունը Ջուանցիից է, որտեղ այն առաջարկվում է Շինան Յիլիաո անունով պաշտոնյայի և դուքս Լուի գրույցի միջոցով: Այդ գրույցում պնդում կա, որ մարդիկ կարող են իրենց անհանգստությունների առաջացման պատճառը գտնել արտաքին առարկաների հանդեպ իրենց ցանկության, ինչպես նաև ձեռքբերումների ու կորուստների վերաբերյալ մտահոգությունների մեջ: Հետևաբար, անհանգստությունից ու մտահոգությունից ազատվելու համար մարդիկ պետք է հաղթահարեն իրենց ազահությունը: Միայն արտաքին մտահոգություններից ազատվելով կարելի է հարմարվել կյանքի փոփոխականությանը՝ թույլ չտալով, որ որևէ արտաքին երևույթ բեռ դառնա կամ վնասի: Կյանքի հանդեպ այսպիսի մոտեցումն էլ նշանակում է մտքի ազատում՝ աշխարհը վայելելու նպատակով:

Մեջբերում 引例.

Շինանցին ասում էր. «Դատարկ նավակին հարվածելիս նավակով գետն անցնող մարդիկ չեն բարկանա, չեն բարկանա նույնիսկ նրանցից ամենանյարդայիները: Բայց եթե նավակում մարդիկ լինեն, կգոռան, որ հեռանան իրենց ճանապարհից: Եթե այդ նավակում նստած մարդը մեկ կամ երկու անգամ արհամարհի նրանց, զայրացած անեծքների բաժին կդառնա: Այսպիսի կատաղի արձագանքի պատճառը ոչ թե առաջին, այլ երկրորդ անգամ այն է, որ նավակն այլևս դատարկ չէ: Եթե միտքդ ազատես աշխարհիկ ցանկություններից ու անհոգ վայելես կյանքը, ոչ ոք չի կարողանա վնասել քեզ» (Ջուանցի):

Մեկնաբանություն և առաջարկ յիդույ 议对

Հին ժամանակներում պաշտոնյաները կայսրերին մեկ-

նաբանություններ ու առաջարկներ էին ուղարկում պետական գործերը քննարկելու և լուծումներ առաջարկելու համար: Յի (义- մեկնաբանություն) եզրույթը վերաբերում է կայսեր հետ պետական գործերի պաշտոնական քննարկմանն ու վերլուծությանը, որի ընթացքում ոմանք արտահայտում էին տեսակետներ, որոնք հաճախ տարբերվում էին կայսեր և այլ պաշտոնյաների կարծիքից, ինչպես նաև առաջարկում էին լուծումներ: Ռույ (对-առաջարկ) եզրույթը վերաբերում է ռազմավարություններ առաջարկելուն և կայսեր հարցերին պատասխանելուն: Այս երկու եզրույթները միասին քննարկվում են «Գրական միտքն ու վիշապներ քանդակելը» գրքի «Մեկնաբանություններ և առաջարկներ» բաժնում: «Մեկնաբանություն և առաջարկ» ընդհանուր եզրույթն ընդգրկում է պաշտոնական գրավոր երկի բոլոր տեսակները: Ըստ Հարավային դինաստիաներից Լիու Սյեի՝ լավ գրական ստեղծագործություն ստեղծելու համար պետք է գիտելիքներ ունենալ նախկին ու ներկա հաստատությունների, ինչպես նաև օրենսդրության ու հիմնական օրինակների մասին, վեր հանել խնդիրները, օբյեկտիվորեն և տրամաբանորեն վերլուծել դրանք ու առաջարկել հնարավոր լուծումներ: Այդպիսի նամակը չպետք է լինի պերճախոս կամ անտեսի փաստերը: Լիու Սյեն շեշտում էր, որ մեկնաբանություններն ու առաջարկները պետք է հիմնված լինեն հավաստի փաստերի վրա ու լինեն արդյունքակենտրոն, իսկ նա, ով գրել է դրանք, պետք է տեսլական ու տաղանդ ունենա: Հիանում էր նրանցով, ովքեր գիտելիք ունեին, համոզիչ էին և կարող էին բարդ խնդիրներ լուծել: Պաշտոնական փաստաթղթեր գրելու վերաբերյալ նրա տեսակետները մինչ օրս էլ արժեքավոր են, երբ խոսքը վերաբերում է կառավարական փաստաթղթեր, ակադեմիական հոդվածներ և մեկնաբանություններ գրելուն:

Մեջբերումներ 引例.

«Երգերի գրքում» հիշատակվում է, որ «քննարկումները

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

կազմակերպում են բազմաթիվ տարբեր կողմեր»։ Այդպիսի գործողությունը, որը կոչվում է «մեկնաբանություն» (յի), պետք է նպատակ ունենա հավուր պատշաճի լուծել խնդիրները (Լիու Սյե. «*Գրական միտքն ու վիշապներ քանդակելը*»)։

Գովասանքի է արժանի այն տեքստը, որը հակիրճ է ու հստակ, ճոխ չէ, կոկիկ է։ Հիացմունքի ու գովեստի արժանի հարցը պետք է վերլուծել հստակ ու վստահելի ձևով, այն չպետք է լինի երկիմաստ ու դժվարըմբռնելի։ Սա է մեկնաբանության առանցքային պահանջը (Լիու Սյե. «*Գրական միտքն ու վիշապներ քանդակելը*»)։

Թեթևություն և պարզություն

յիճիան 易简

Թեթևություն և պարզություն եզրույթն առաջացել է «Փոփոխությունների գրքի» «Սի Յի» (Կից տեքստեր) գլխի առաջին կեսից։ Ըստ Սի Յիի՝ տիեզերքի օրենքը, որը մարմնավորված է երկնքում ու երկրում, հեշտ է ու պարզ։ Հետևաբար, այն ընդգրկում է ամեն ինչ, հեշտ է հասկանալ ու հետևել դրան։ Ավելի ուշ որոշ գիտնականներ պնդում էին, որ «հեշտությունն ու թեթևությունն» անհրաժեշտ որակներ են կառավարիչների համար։ Դրանք ընդգծում էին, որ կառավարության քաղաքականությունը պետք է լինի հեշտ հասկանալի ու պարզ, կառավարությունը պետք է խուսափի մարդկանց կյանքում չափից դուրս շատ միջամտությունից։ Այլ գիտնականներ ինքնազարգացման համատեքստում շեշտում են հեշտության ու թեթևության անհրաժեշտությունը՝ սեփական ես-ը բացահայտելուն գիտակցելու և մարդու մեջ բարոյականության զգացումը զարգացնելու համար։

Մեջբերումներ 引例

Երկնային ճանապարհը հեշտ հասկանալի է իր թեթևու-

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

թյան շնորհիվ: Երկրային ճանապարհն արդյունավետ է իր պարզության պատճառով: Թեթևությունը ենթադրում է դյուրըմբռնելիություն, իսկ պարզությունը թույլ է տալիս հեշտությամբ հետևել դրան: Եթե ինչ-որ բան դյուրըմբռնելի է, այն դուր է գալիս մարդկանց, գրավում նրանց. եթե ինչ-որ բանի հեշտ է հետևել, դժվար չի լինի հասնել դրան: Գրավչությունը կլինի տևական, իսկ հասանելիությունը կհանգեցնի մեծ ձեռքբերումների: Տոկունությունն առաքինի մարդու արժանիք է, իսկ հեռուն հասնելու ունակությունը՝ առաքինի մարդու ձգտում (*«Փոփոխությունների գիրքը»*):

Ինքնակատարելագործման գործում հեշտության ու պարզության մոտեցումը կօգնի լինել դիմացկուն և հեռուն հասնել, իսկ հատվածական կրթության վրա կենտրոնանալը նման է ջրի հոսանքով աննպատակ լողալու (Լու Չիույուան. *«Սագերի լճի մասին եղբորս բանաստեղծության հանգստի վորված տարբերակ»*):

**Խիզախությունը ոչ մի գործողություն չձեռնարկելն է
յուն յու բու գան 勇于不敢**

Համարձակություն կա նաև թուլության կամ նահանջի հիմքում, երբ մարդը խիզախորեն ընտրություն է կատարում և վտանգի չի դիմում ինչ-որ քայլի գնալու համար: Սա բացահայտում է Լաոցզիի «թուլություն» և «անգործություն» հասկացությունների իմաստը: Ըստ Լաոցզիի՝ վտանգավոր է մշտապես համառորեն առաջ գնալ: Պետք է առաջ գնալ, երբ առաջ գնալն է ճիշտ, և նահանջել, երբ նահանջելն է պատեհ: Իսկական խիզախություն դրսևորվում է ոչ միայն երբ համարձակվում ես ինչ-որ քայլի դիմել, այլև՝ երբ նախընտրում ես կանգ առնել: Մարդը պետք է ոչ միայն դիմի կոնկրետ քայլերի, այլև հետ պահի իրեն հապճեպ քայլերից: Սա հիշեցնում է այն մասին, որ կան սկզբունքներ, որոնք պետք է հարգել և որոնց պետք է հնազանդվել: Բավականաչափ խի-

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

զախություն է պետք՝ նահանջելու և ինքդ քեզ հետ պահելու նրանից, ինչը խախտում է օրենքները, հակասում սկզբունքներին և աղավաղում նորմերը: Սա կիրառելի է ինչպես մանր, օրինակ՝ այլոց հետ հարաբերություններ հաստատել, այնպես էլ խոշոր հարցերում, օրինակ՝ երկրի կառավարման գործում:

Մեջբերում 引例.

Ովքեր համարձակվելու քաջություն ունեն, սպանվում են, ովքեր համարձակվելու քաջություն չունեն, ողջ են մնում (Լաոցզի):

Անկախ յուու 游

Եզրույթը նշանակում է ազատ ու անբռնազբոս մոտեցում մարդկանց ու երևույթների: Անկախ լինելու համար մարդկանց հետ հարաբերություններում պետք է թևի երկարության չափ հեռավորություն պահպանել նրանցից: Պետք չէ չափազանց մոտ լինել մարդկանց, սերտ շփում ունենալ մարդկանց ու առարկաների հետ և մոտիկից ճանաչել նրանց: Պետք չէ չափից դուրս շատ մոտենալ մարդկանց ու առարկաներին և ընկնել դրանց ազդեցության տակ: Պետք է մնալ հարմարավետ ու անկախ հեռավորության վրա այն մարդկանցից կամ առարկաներից, որոնց ուզում ես ուսումնասիրել, որպեսզի խորությամբ հասկանաս նրանց:

Մեջբերումներ 引例.

Կոնֆուցիոսն ասում էր. «Պետք է հետևել Դաոյին, հարել առաքինի մարդկանց, ընդունել բարյացակամությունը և ազատորեն հետևել վեց արվեստներին՝ ծեսեր, երաժշտու-

Չինական ստորի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

թյուն, աղեղով նետ արձակել, մարտակառք վարել, գրել և հանրահաշիվ» (*«Անայեկրներ»*):

Կարիք չկա որևէ բանի վրա հույս դնել, եթե ի վիճակի ես հետևել բնության օրենքներին, կառավարել եղանակի փոփոխություններն ու ազատորեն վայելել ամեն ինչ անսահման տիեզերքում (Ջուանցի):

**Տեսարան, որում ներառված է ես-ը. տեսարան,
որում ներառված չէ ես-ը
յոու ուո ջի յին, ու ուո ջի ձին 有我之境, 无我之境**

Այս եզրույթը վերաբերում է դասական չինական պոեզիայի գեղագիտական գնահատմանը արդի գիտնական Ուան Գուոուեյի (1877-1927) կողմից, ես-ի ու արտաքին աշխարհի միջև հարաբերությունների տեսանկյունից: Իր հայտնի գրական տեսական երկում՝ «Բանաստեղծական նոթեր մարդկանց աշխարհում» գրքում Ուանն առաջադրել է «տեսարանի» ձինձիե գաղափարը, այն է՝ լինելիության գեղարվեստական վիճակը՝ պնդելով, որ գերազանց կարելի է համարել միայն այն պոեզիան, որը գրվել է այդպիսի վիճակ արթնացնելու համար: Այս մթնոլորտը նա համարում էր ոչ միայն պոեզիայի ստեղծագործական սկզբունք, այլև պոեզիայի քննադատության չափանիշ: Բացի այդ, նա գաղափարն օգտագործում էր, որպեսզի պատմի պոեզիայի էվոլյուցիայի մասին և գնահատի բանաստեղծության և դրա հեղինակի ճաշակը կամ արժանիքները: Նա նաև մի շարք առաջարկներ է արել, որոնք վերաբերում էին լինելիության ստեղծարար վիճակին: Դրանցից ամենակարևորը «տեսարան, որը ներառում է/չի ներառում ես-ը» երկակի եզրույթն է: «Ես-ը ներառող տեսարան» նշանակում է, որ հեղինակն իր ստեղծած գրական պատկերի մեջ ներառում է անձնական զգացմունքներ՝ այդպիսով երկը լցնելով հսկայական զգացմունքային ուժով: «Ես-ը չներառող տեսարան», մյուս կողմից, չի նշա-

նակում զգացմունքների բացակայություն: Ավելին, հեղինակը զսպում է այս զգացմունքային ուժը՝ հասնելով անձնական զգացմունքների և գրական երևակայության կատարյալ ներդաշնակության: Նրա համար «առանց ինքս ինձ» սկզբունքն արարման կատարյալ բնական վիճակ է, երբ կեղծելու կամ փոփոխելու կարիք չկա. հետևաբար, այն ներկայացնում է գեղարվեստական արվեստի բարձրագույն մակարդակ: Ընդհանուր առմամբ, այդ եզրույթը նշանավորում է Ուանի գրաքննադատության մեկնարկային կետն ու նրա գրական մտքի վերջնական հանգրվանը:

Սեջբերումներ 引例.

«Լինելիության ստեղծարար վիճակը» ոչ միայն տեսարան է, այլև ուրախության, զայրույթի ու վշտի զգացողությունների ամբողջություն, որոնք ընկած են սրտի խորքում: Հետևաբար, գրական երկը, որը տոգորված է ճշմարիտ զգացմունքներով և ներկայացնում է ստույգ տեսարան, իսկապես ստեղծագործական է. հակառակ դեպքում այն զուրկ է ստեղծագործական որակից (Ուան Գուոուեյ. «*Բանաստեղծական նոթեր մարդկանց աշխարհում*»):

Պոեզիա կարելի է ստեղծել հեղինակի ներկայությամբ կամ առանց նրա... Առաջին դեպքում բանաստեղծը բնապատկերին նայում է անձնական տեսանկյունից, իր տեսած ամեն ինչ պարուրելով սուբյեկտիվ երանգավորմամբ: Մինչդեռ երկրորդ դեպքում բանաստեղծն արտաքին առարկաներն ու տեսարանը դիտարկում է այնպես, ասես բնության մաս է՝ այդպիսով հեռացնելով իր ու իր շրջապատի տարանջատումը: Հին ժամանակներում բազմաթիվ բանաստեղծներ կարողանում էին զրել լավ պոեզիա նաև իրենց մասնակցությամբ, բայց դա չի նշանակում, որ առանց ես-ի պոեզիա ստեղծելն անիրագործելի է: Իսկապես տաղանդավոր բանաստեղծներն այս իրավիճակում իրենց առանձնացնում են ընդհանուր հոսանքից (Ուան Գուոուեյ. «*Բանաստեղծական նոթեր մարդկանց աշխարհում*»):

**Ամուր կառչեք ոսկե միջինից
յուն ջի ձուե ջուն 允執厥中**

Երկրի կառավարիչները, հատկապես գլխավոր կառավարիչը, երբեք չպետք է կողմնակալություն դրսևորի հակասական կարծիքների, շահերի և ուժերի վերաբերյալ որոշումներ կայացնելիս, չպետք է անսկզբունքային մոտեցում ցուցաբերի, այլ պիտի անկեղծորեն փնտրի ոսկե միջինը՝ պատշաճ քաղաքականության և համապատասխան միջոցների օգնությամբ, և անկեղծորեն կառչի չեզոք և արդարացի դիրքորոշումից: Այլ կերպ ասած՝ պետք է պահպանի սկզբունքներն և արդար ու անկողմնակալ մնա: Այս համընդհանուր արժեքը նրանց կօգնի լավ կառավարել երկիրը:

Մեջբերումներ 引例.

Մարդու բանականությունն անհանգիստ է, հակված է վտանգի: Ճշմարիտ ուղին նուրբ է ու բարդ հասկանալու համար: Միայն ոսկե միջինն իսկապես պահելու դեպքում երկիրը կարող է լավ կառավարվել (*«Պատմության գիրքը»*):

Երբ Յաոն գահը հանձնեց Շունին, ասաց նրան. «Օ՛, դու, Շուն, Երկնքի կողմից հաստատված հաջորդականության կարգն այժմ հանձնում եմ քո եսին: Անկեղծորեն պահպանիր ոսկե միջինը: Եթե մարդիկ աղքատանան, կկորցնես քո՝ Երկնքի կողմից շնորհված եկամուտն ու դիրքը» (*«Անալեկյաններ»*):

**Կանոններ
դե 則**

Խոսքը վերաբերում է օրենքներին և սկզբունքներին: Եզրույթը ցույց է տալիս ոչ միայն բնության օրենքներ, որոնք կառավարում են տիեզերքում ամեն ինչի շարժումը, այլև մարդու կյանքն առաջնորդող էթիկական սկզբունքներ: Այս

կանոնները, օրենքներն ու սկզբունքները սահմանում են հիմնարար կարգուկանոնն այն աշխարհում, որտեղ ապրում ենք մենք, և այդ օրենքների խախտումը կհանգեցնի խառնաշփոթի ու աղետի: Ոմանք հավատացած են, որ տիեզերքն ու մարդկային հասարակությունը կառավարվում են նույն օրենքներով ու սկզբունքներով, և հասարակությունը ժառանգում է տիեզերքի կանոններն ու օրենքները կամ հետևում է դրանց: Մյուսներն էլ պնդում են, որ տիեզերքն ու մարդկային հասարակությունը հետևում են առանձին ու անկախ կանոնների և օրենքների:

Մեջբերումներ 引例.

Երկինքը ստեղծում է մարդկանց, նրանց ապահովում նյութական անհրաժեշտ պարագաներով և նրանց ենթարկեցնում կանոնների: Մարդիկ ենթարկվում են համընդհանուր օրենքների և զնահատում են առաքինությունները («Երգերի գիրքը»):

Երկինքը չի փոխում իր ճանապարհները, երկիրը չի փոխում իր օրենքները, տարվա եղանակները չեն փոխում իրենց շրջափուլերը: Այդպես է կառավարվել աշխարհը՝ հին ժամանակներից մինչև մեր օրեր (Գուանցի):

Երախտագիտության հուշագիր կամ խնդրագիր ջանբիաո 章表

Սա պաշտոնական հաղորդակցության հին ոճ էր, որով բարձրաստիճան պաշտոնյաներն իրենց երախտագիտությունն էին հայտնում կամ խնդրագիր էին ներկայացնում կայսերը: *Չանը* կամ երախտագիտության հուշագիրը և *բիսուն*՝ խնդրագիրը, ոճով փոքր-ինչ տարբերվում էին: Հարավային դինաստիաներից Լիու Սյեն (465?-520) իր «Գրական միտքն ու վիշապներ քանդակելը» գրականագիտական եր-

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

կում դիտարկում էր, որ իդեալական գրավոր ստեղծագործությունն իր բուն ասելիքը պետք է հայտնի հստակ ու խորությամբ, սահմանի կամ վերլուծի դեպքն ամենայն մանրամասնությամբ, ենթարկվի ծիսական պատշաճությանն ու գրավոր ստեղծագործության չափանիշներին:

Մեջբերումներ 引例.

Յին դինաստիայի սկզբում պաշտոնապես որոշում կայացվեց, որ կայսերն ուղղված նամակը պետք է վերանվանվի «հուշագիր գահին»: Հան դինաստիայում արքունիքն այս գրավոր ձևը բաժանեց չորս ենթատեսակի՝ ջան՝ երախտագիտության հուշագիր, ցուո՝ իմպիչմենտի հուշագիր, բյաո՝ խնդրագիր և յի՝ անհամաձայնության հուշագիր (Լիու Սյե. «Գրական միտքն ու վիշապներ քանդակելը»):

Երախտագիտության հուշագրի կամ խնդրագրի նպատակն է՝ երախտագիտություն հայտնել և գովաբանել կայսերական արքունիքն այն սիրո ու հոգատարության համար, որ նա դրսևորել է իր ենթակաների նկատմամբ, և ներկայացնել սեփական անկեղծ զգացմունքները: Այդպիսի հուշագրերը պետք է ներկայացնեն հեղինակի ինքնակատարելագործումը և՛ փառաբանեն կայսերը: Քանի որ այս հուշագրերը պետք է հանձնվեն արքունիքին, անհրաժեշտ է, որ լավ կառուցվածք ունենան և պերճախոս լինեն: Երախտագիտության հուշագիրը կամ խնդրագիրը պետք է հստակ ձևակերպված լինի (Լիու Սյե. «Գրական միտքն ու վիշապներ քանդակելը»):

**Տեքստային բաղադրիչներ / Չան ձու
(Ծանոթագրական աշխատանք)
ջանձու 章句**

Եզրույթն ունի երկու իմաստ: Առաջին, այն նշանակում է

բառեր, նախադասություններ, պարբերություններ կամ ամբողջական տեքստ: Իր «Գրական միտքն ու վիշապներ քանդակելը» գրաքննադատության մեջ Լիու Սյեն (465?-520) քննարկում էր ընդհանուր սկզբունքներ և կանոններ, որոնք կարգավորում են ձևակերպումները, շարադասությունը, պարբերությունների դասավորությունն ու տեքստի բովանդակությունը: Անհրաժեշտ նպատակի հասնելու համար գրելու կարևորությունը շեշտելով՝ նա նաև կոչ էր անում ամենայն մանրամասնությամբ կառուցել տեքստը ձևակերպումների և տեքստային կոմպոզիցիայի տեսանկյունից: Սա հետագա սերունդների գրողներին ոգեշնչում էր կատարելագործել քերականությունը, կիրառել գրաքննադատությունն ու տեսական քննարկումներ սկսել ստեղծագործելու մասին: Երկրորդ, այս եզրույթը նաև նշանակում է հին շրջանի ծանոթագրական աշխատանք, որը ցույց էր տալիս, թե ինչպես տեքստը բաժանել պարբերությունների և վերլուծել շարադասությունը: Այսպիսի ստեղծագործությունները քննարկում են պարբերությունների դասավորությունը կոնֆուցիական դասական երկերում, բացատրում բառերի և արտահայտությունների իմաստները և տալիս տեքստի ընդհանուր մեկնաբանությունը: Դրա վառ օրինակներն են՝ Արևելյան Հան դինաստիայից Ուան Յիի «Չուի ներքողի համառոտագրերը», ինչպես նաև Հարավային Սուն դինաստիայից Ջու Սիի (1130-1200) «Մեծ ուսմունքի» և «Ոսկե միջինի» համառոտագրերը:

Մեջբերումներ 引例.

Եթե կարող ես արտասանել միայն այն բառերն ու նախադասությունները, որոնք սովորեցրել է ուսուցիչը, ապա սովորածդ շատ փոքր արժեք կունենա իրական կյանքում խնդիրներ լուծելիս (Յան Ջիթույ. «Խրատներ Յան կլանի համար»):

Գրելիս սկսում են բառերից ու նախադասություններից,

ապա կառուցում պարբերություններ, մինչև որ ստեղծվում է ամբողջական տեքստը: Որպեսզի գրավոր ստեղծագործությունը լավը լինի, պետք է համոզվել, որ պարբերություններն անթերի են. որպեսզի պարբերությունը հստակ ու լավ կառուցված լինի, պետք է համոզվել, որ բոլոր նախադասություններն անթերի են. որպեսզի յուրաքանչյուր նախադասությունն թարմ ու գեղեցիկ լինի, պետք է զգուշորեն օգտագործել յուրաքանչյուր բառ կամ արտահայտություն: Նույն կերպ նաև, երբ ծառի արմատները ցնցվում են, բոլոր ճյուղերն ու տերևները դողդողում են: Այս օրենքը պահպանելու դեպքում հեշտ կլինի հրաշալի գրավոր ստեղծագործություն գրել (Լիու Սյե. «Գրական միտքն ու վիշապներ քանդակելը»):

Կայսերական հրովարտակներ ջաոցե 诏策

Կայսերական հրովարտակները կազմված են *ջաոյից* (诏) և *ցեից* (策): *Ջաոն* կայսեր տարածած հրամաններն էին, իսկ *ցեն* կայսրն օգտագործում էր պաշտոնատար անձանց պարզևատրելու, նրանց նշանակելու կամ հեռացնելու համար: Հարավային դինաստիաներից Լիու Սյեն իր «Գրական միտքն ու վիշապներ քանդակելը» գրաքննադատական երկում քննարկում էր պաշտոնական փաստաթղթերի մի քանի տեսակ, որոնք կայսրն օգտագործում էր իր նախարարների համար, իսկ ավելի բարձրաստիճան պաշտոնյաներն օգտագործում էին ավելի ցածրաստիճան պաշտոնյաների համար: Լիու Սյեն նշում էր, որ պաշտոնական փաստաթղթերի այս տեսակը խիստ ավտորիտար ու ազդեցիկ էր և սահմանում էր օրենքներ, որոնց պետք է ենթարկվեր ամբողջ երկիրը: Երախտագիտության արտահայտություններից էին, օրինակ, «լուսինն ու շողացող աստղերը» կամ «բարեպատեհ անձրև ու շաղ», որոնք ցույց են տալիս կայսեր հոգա-

ծությունն իր ենթակաների նկատմամբ: Հանդիմանանքի ու պատժի մասին էին այնպիսի արտահայտություններ, ինչպիսիք են «ամպրոպակերպ զայրույթ» կամ «աշնան սառնամանիքի սառը շունչ»: Պաշտոնական փաստաթղթերի այս տեսակները պետք է լինեն հստակ շարադրված, մանրամասն մտածված, հիմնված օրենքների ու կանոնների, ինչպես նաև առողջ դատողության ու փաստերի վրա, ինչպես նաև գրված լինեն ճիշտ բառամթերքով և շարադասությամբ: Այդպիսի պաշտոնական փաստաթղթերը պետք է լինեն հանդիսավոր, հղկված և չափավոր:

Մեջբերումներ 引例.

Արքայազնն արժանացավ Նորին մեծության կողմից հրովարտակ ստանալու պատվին, որով նրան շնորհվեց այս տիտղոսը: Հրաշալի հասկանալով կոնֆուցիական դասական գործերը՝ նա հասկանում էր, որ որպես ենթակա արքայազն՝ չի կարող լքել իրեն տրամադրված տարածքը (*Հան դինասարիայի պարսնությունը*):

Կայսրը թագավորում է հողերի վրա: Նրա խոսքը սրբազան է: Հանդիսավոր բազմած իր գահին՝ նա կարող է հրամաններ արձակել ամբողջ երկրում: Միայն կայսերական հրովարտակներն այդպիսի իշխանություն ունեն (Լիու Սյե. «Գրական միտքն ու վիշապներ քանդակելը»):

**Բնատեսարանի ուժը՝ դյույմերով
ջիջի յոու ուանի ջի շի 咫尺有万里之势**

Բնանկարչության վարպետները կարող են մի քանի սանտիմետր լայնությամբ թղթագլանի վրա պատկերել հսկայական լայնության և երկարության բնական տեսարան: Նկարիչը պարզապես չի կրկնօրինակում տեսարանը, այլ ստեղ-

ծում է արվեստի գործ, որը միավորում է նրա գեղարվեստական ձեռքբերումներն ու արտացոլում սիրտն ու միտքը: Նկարիչը բաց է թողնում ավելորդ մանրամասներն ու հեռու բնապատկերը մոտեցնում է լայն հեռանկարի միջոցով: Այս գաղափարը կիրառելի է նաև պոեզիայի քննադատության մեջ: Դրա ամենակարևոր տարրը «ուժն» է, ինչը նշանակում է, որ ընդհանուր ծրագիրն ու առանցքային ասելիքը դրամատիկ ազդեցություն, արտահայտչականություն և գրավչություն է հաղորդում բանաստեղծություններին, կտավներին և արվեստի այլ գործերին, բայց խիստ մեծ ուշադրություն չի դարձնում մանրամասներին: Սրան հասնելու համար նկարիչները ոչ միայն պետք է կրկնօրինակեն կամ պարզապես նմանակեն բնապատկերը, այլ պետք է անհատապես ունենան դրա փորձառությունը, ընդլայնեն իրենց մտահորիզոնը, զգան բնության հրաշքներն ու անդրանցեն աշխարհիկ մտահոգությունները:

Մեջբերումներ 引例.

Սյաո Բին նկարում է ուշադիր ու մանրամասն, իսկ հետագա սերունդները հագիվ թե կարողանան հավասարվել նրան: Երբ նա նկարում է մետաքսի վրա, յուրաքանչյուր վրձնահարված անում է իրական բնապատկերի ճիշտ և ճիշտ նմանությամբ: Մի անգամ նա կտր նրբագեղ հովհարի վրա նկարեց բնապատկեր, որտեղ կարող եք տեսնել մի քանի մղոն հեռավորության վրա երևացող տեսարանը: Կտավում քառակուսի դյույմ մակերեսի վրա կարելի է նշմարել սարերը, որոնք մի քանի հազար ոտնաչափ բարձրության վրա են (Յաո Յույ. «Գեղանկարչության քննադատության շարունակություն»):

Զննադատներն ասում են, որ թվում է՝ թղթի մի փոքր կտորի վրա արված բնանկարը ձգվում է տասը հազար լի: Այստեղ առանցքային հարցն այն է, թե արդյոք կտավը կարող է

տպավորություն թողնել: Առանց այդ տպավորության նույնիսկ ընդարձակ բնապատկերը կնեղանա ու կտեղավորվի չափազանց սահմանափակ տարածության մեջ, և արդյունքը կլինի երկրի ևս մի համապարփակ քարտեզ, որը կարելի է հեշտությամբ գտնել Աշխարհագրության ուղեցույցում: Հինգ տառանշանից կազմված քառաստորը, որ պետք է հնարավորինս քիչ բառերով նկարագրի ընդհանուր պատկերը, նախ և առաջ կարևորում է ազդեցությունը: Թան դինաստիայի ոսկե տարիների բանաստեղծները միայն կարող են իսկապես հասկանալ այս հրաշքը: Օրինակ, բանաստեղծական տողերում, ինչպիսիք են՝ «Կարո՞ղ եմ հարցնել, թե որտեղ եք ապրում, օտարական: Ես ապրում եմ Հենթանում, այստեղից ոչ շատ հեռու: Արի կանգնեցնենք նավակները, հարցուփորձ անենք միմյանց մասին, չէ՞ որ վերջիվերջո մենք գուցե և նույն քաղաքից ենք», հսկայական բանաստեղծական ներգործությունը շարունակում է թևածել, նույնիսկ երբ մանրամասներն անտեսվում են: Որքա՞ն սեր է հարողվում այնտեղ, որտեղ իրականում ոչ մի բառ չի ասվում (Ուան Ֆուջի. «Մեկնաբանություններ պոեզիայի մասին. *Ginger Studio*»):

Մտքի հարյուր դպրոց
ջուցի-բայձյա 诸子百家

Խոսքը մտքի տարբեր դպրոցների և դրանց կողմնակիցների մասին է Գարնան և աշնան շրջանի վերջից մինչև Հան դինաստիայի սկիզբն ընկած ժամանակահատվածում: Գարնան և աշնան ժամանակաշրջանում տեղի ունեցավ հին հասարակական կարգի, ինչպես նաև Ջոու դինաստիայի արժեքների քայքայման գործընթաց: Բախվելով սոցիալական ճգնաժամի՝ այն ժամանակների գիտնականները ողջ խորությամբ խորհրդածում էին խնդիրների շուրջ և ազատ էին ցանկացած սահմանափակումից: Նրանք առաջ էին տանում զանազան տեսություններ այն մասին, թե ինչպես

վերականգնել կարգուկանոնն ու զարգացնել արժեքները: Տեսության կառուցման այս ակտիվ գործընթացն ու ակադեմիական քննարկումները շարունակվեցին մինչև Արևմտյան Հան դինաստիայի վաղ շրջան: Հետագա սերունդները մեծ թվով գիտնականների և այդ ժամանակահատվածում ստեղծված նրանց ստեղծագործություններն անվանում էին «Մտքի հարյուր դպրոց» (անթիվ-անհամար փիլիսոփաներ և նրանց ստեղծագործությունները) և դրանք դասակարգում մտքի տասը դպրոցների՝ կոնֆուցիականություն, մոհիզմ, դաոսիզմ, լոգիկներ, լեզալիզմ, Ին-Յանի դպրոց, Դիվանագիտության դպրոց, Սինկրետիզմ (կամ Հավաքածուի դպրոց, ցա ձիա) և Փոքր գրույցների դպրոց (սյաոշուո ձիա): Առաջին ինը դպրոցները գիտական մոտեցում ունեին, հետևաբար հայտնի էին որպես «մտքի տասը դպրոցներից ինը հիմնական դպրոց»: Շնորհիվ մեծաթիվ կողմնակիցների և նրանց զանազան տեսությունների՝ նրանց ընդհանուր առմամբ անվանում են «Մտքի հարյուր դպրոց»:

Մեջբերում 引例.

Մտքի տասը դպրոցներից ինն արժանի է ուսումնասիրության: Այս դպրոցների բոլոր գիտնականները ստեղծագործել են այն ժամանակներում, երբ առաքինի կառավարումը քայքայվում էր, իսկ բազմաթիվ կառավարիչներ կառավարում էին ռազմական հզորությամբ: Որոշ թագավորներ բարի կառավարիչներ էին, իսկ մյուսները բռնակալներ էին: Մտքի ինը դպրոցների գիտնականները սիրահոժար առաջարկներ էին անում, քանի որ նրանց կարծիքով, թագավորներն ունեին նրանց հավանության ու աջակցության կարիքը (*Հան դինաստիայի պատմությունը*):

**Մտքի հարյուր դպրոցի ուսումնասիրություն
չուցիսյուե 诸子学**

Այս եզրույթը վերաբերում է թե՛ Գարնան և աշնան ժամա-

նակաշրջանի վերջից մինչև վաղ Արևմտյան Հան դինաստիա ընկած ժամանակահատվածի գիտնականների տարբեր խմբերի տեսություններին, թե՛ այդ տեսությունների ուսումնասիրությանը: Այս տարիների ընթացքում գիտնականներն ազատորեն ու խորությամբ խորհրդածել են սոցիալական կարգի և հասարակական արժեքների փուլման շուրջ և առաջադրել տարբեր տեսական առաջարկներ: Այս բոլոր տեսությունները հայտնի են որպես «Մտքի հարյուր դպրոցների ուսումնասիրություն»: Մտքի հարյուր դպրոցների ուսումնասիրությունը տևական ազդեցություն ունեցավ հետագա սերունդների վրա, որոնք հետագոտեցին և պարզաբանեցին դպրոցների տեսությունները և էլ ավելի զարգացրին դրանք: Մտքի հարյուր դպրոցների հետագա զարգացումը նույնպես ուսումնասիրվում է Մտքի հարյուր դպրոցի հետագոտության շրջանակներում:

Մեջբերում 引例.

Էրուդիտ գիտնականները հրաշալի տեղյակ են ոչ միայն դասական ստեղծագործությունների, այլև Մտքի հարյուր դպրոցի ուսումնասիրությունից: Նրանք ի վիճակի են օգտագործել իրենց արժանիքներն ու հրաժարվել կողմնակալ կամ կոշտ դիրքորոշումներից: Ահա թե ինչպես են նրանք յուրացրել բոլոր սկզբունքները (Դու Յոու. «Հասարակությունների հանրագիտարանային պատմություն»):

Օրհնություն և հավատարմության երդում ջումեն 祝盟

Ջու կամ օրհնությունը կարճ էսես է, որը նախատեսված է աստվածներին հարգանքի տուրք մատուցելու և նրանց օրհնությունը ստանալու համար: *Մեն* կամ հավատարմության երդում տալիս են աստվածների դաշնակիցները: Երկուսն էլ ցանկությունն ու նվիրվածությունն են արտահայտում աստ-

վածներին: Ըստ Լիու Սյեի (465?-520)՝ ջուն պետք է լինի անկեղծ, պարզ ձևակերպումներով, առանց ճոխության կամ պերճության: *Մեհը*՝ հավատարմության երդումը, նրա համար է, որ աստվածներն իմանան, որ կառավարիչները պատրաստակամ են դաշինք կնքել և կիսել երջանկությունն ու վիշտը: Հետևաբար, *մեհը* պետք է լինի անկեղծ ու ազնիվ, ամրապնդի համերաշխությունը դաշնակիցների միջև աստվածներին հղված աղոթքի միջոցով: Ըստ Լիու Սյեի՝ դաշինք կնքելու հաջողությունը վերջնական արդյունքում կախված է բոլոր շահագրգիռ կողմերի, այլ ոչ թե աստվածների անկեղծությունից: Բայց գեղեցիկ գրված ջուն կամ *մեհը* կօգնի ամրապնդել վստահությունն ու վեհանձնությունը ներգրավված բոլոր մարդկանց մեջ:

Մեջբերումներ 引例.

Երբ երկնքի ու երկրի դիրքերը սահմանվեցին, մարդիկ սկսեցին զոհեր մատուցել աստվածներին: Աղոթքներ էին ուղղվում երկնքին, երկրին ու տարվա չորս եղանակներին, հարգանքի տուրք էր մատուցվում հեռավոր սարերին, գետերին ու ծովին: Արդյունքում մեղմ քամիներն ու անգին անձրևները նպաստում էին բերրիությանը: Բոլոր մարդիկ հավատում էին աստվածային ուժին. նրանք լավագույն զոհն էին մատուցում աստվածներին՝ օրհնության համար վարձահատույց լինելու նպատակով: Լավագույն սնունդը մատուցվում էր աստվածներին: Չոհաբերության արարողությունների վարպետը ջուհ (օրհնություն) միջոցով արտահայտում էր զոհաբերելու մարդկանց ցանկությունը (Լիու Սյե. «*Գրական միտքն ու վիշապներ քանդակելը*»):

Այսպիսով, պարզ է դառնում, որ առանց անկեղծության հավատարմության երդումն անիմաստ է (Լիու Սյե. «*Գրական միտքն ու վիշապներ քանդակելը*»):

Հավատարմության երդում տալը դժվար չէ: Դժվար է

հարգել այն: Հետագա սերունդների մարդիկ սովորում էին հավատարմության երդման խախտումների պատմությունները, որոնք տեղի էին ունեցել անցյալում: Պետք է հավատարիմ մնալ խոսքին և չհեռվել միայն աստվածների բարեհաճության վրա: (Լիու Սյե. «Գրական միտքն ու վիշապներ քանդակելը»):

Հոլիստիկ ուսմունքներ ցունձիաո 宗教

Յունձիաո եզրույթն առաջին անգամ հանդիպել է բուդդիստական դասական գործերում, որտեղ *ձիաոն* (教) այն էր, ինչ քարոզում էր Բուդդան թե՛ իր ուղղակի ուսմունքի, թե՛ լուսավորության ավելի լայն ջանքերի շրջանակներում. *ցունը* (宗), մյուս կողմից, այն էր, ինչ ասել էին Բուդդայի աշակերտները, և *ձիաոյի* ենթաբաժին էր, որը ներառում էր սուբյեկտիվ, անձնական համոզմունքներ: Երբ այս երկուսը համադրվում են, եզրույթը ձեռք է բերում երկու իմաստ. 1) ընդգրկում է ընդհանուր առմամբ բուդդիզմի նպատակներն ու ուսմունքները և 2) վերաբերում է որոշակի ճյուղի կամ սեկտայի համոզմունքներին, որոնք հարում են ընդհանուր դոկտրինների: Հետագայում դատուհանը նույնպես սկսեց օգտագործել այս եզրույթը, և արդի դարաշրջանում *ցունձիաո* ն օգտագործվեց՝ չինարեն «կրոն» բառը թարգմանելու համար, որտեղ մարդիկ հավաքվում էին՝ գերբնականի, անդրանցիկի և բացարձակ գերագույն էության հետ հաղորդակցվելու, որպեսզի մտնեն փառքի ոլորտ ու արժանանան հավերժական երջանկության:

Մեջբերում 引例.

Երբ Շակյանունին մահանում էր, իր թիկնոցն ու գավաթը հանձնեց Մահա Կասյապային: Այսպիսով սկզբնավորվեց

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

բուդդիստական ուսմունքների՝ մեկ անհատի միջոցով սերնդեսերունդ փոխանցվելու ավանդույթը: Սա նշանակում է, որ բուդդիզմը չի կարող միաժամանակ ունենալ երկու առաջնորդ, ինչպես երկիրը չի կարող միաժամանակ ունենալ երկու կառավարիչ (Շի Դաոյուան. «Բուդդիստական ուսմունքների փոխանցումը Սուն դինաստիայի Ջենցուն կայսեր Չինդե թագավորության օրոք»):

Նախնյաց տաճար ցունմիաո 宗庙

Նախնյաց տաճարները կառուցվում էին հանգուցյալների հոգիների համար: Նախնիների անուններով ցուցանակներ էին տեղադրվում տաճարներում երկրպագության և գոհաբերության նպատակներով: Հին չինական տաճարների համակարգում նախնիների տաճարները հիմնականում հատուկ տաճարներ էին, որտեղ թագավորները, արքայազներն ու այլ գոհ էին մատուցում իրենց նախնիներին: Ըստ Ջոու դինաստիայի օրենքների՝ միապետ կառավարիչը կարող էր ունենալ ութ տաճար, արքայազնը կարող էր կառուցել հինգը, նախարարը՝ երեքը, իսկ շին՝ (士- ազնվականության ու հասարակ ժողովրդի միջև սոցիալական շերտի ներկայացուցիչ)՝ միայն մեկ: Հասարակ մարդկանց թույլ չէին տալիս տաճար ունենալ: Եթե պետությունը կամ դինաստիան պարտվում էր ու դադարում գոյություն ունենալ, նախնյաց տաճարները հաճախ ոչնչացվում էին: Հետևաբար, «գետեր և սարեր» կամ «հող ու հացահատիկ» եզրույթները, այնպես էլ «նախնյաց տաճարներ» եզրույթը հաճախ վերաբերում էր թագավորական ընտանիքին, արքունիքին կամ պետական իշխանությանը: Նախնյաց տաճարները նախնիների երկրպագության շարունակությունն էին և այն սկզբունքի դրսևորումը, ըստ որի ընտանիքն ու պետությունն ունեն նույն կառուցվածքը:

Մեջբերում 引例.

Երբ Երկնքի որդին չի հարգվում, պետությունը հայտնվում է անկայունության մեջ (Պատմաբանի արձանագրություններ):

Հուշագիր կամ հայտարարություն՝ կայսերը սեփական տեսակետն արտահայտելու համար 奏启

Գրական երկի այս ժանրն օգտագործում էին պաշտոնյաները՝ կարևոր հարցերի մասին հայտնելու կամ կայսերը սեփական տեսակետ ներկայացնելու նպատակով: Այստեղ *gou* (奏) նշանակում է հիշեցում գահի մասին, այսինքն՝ հաղորդում վարչական այս կամ այն խնդրի մասին, ինչպես նաև հստակ պատկերացում առ այն, թե ինչպես կարելի է լուծել այդ խնդիրը: *Shi* (启) այստեղ նշանակում է անկեղծ կարծիք պետական գործերի մասին: Առաջինը պետք է լինի շրջահայաց, իմաստալից և ոճով պարզ, իսկ երկրորդը, որն ունի թե՛ հուշագրի, թե՛ խնդրագրի գործառույթ, պետք է լինի հակիրճ և համեստ: Հարավային դինաստիաներից Լիու Սյեն (465?-520) դիտարկում էր, որ գրավոր ստեղծագործության այս տեսակը որևէ խնդրի շուրջ կայսերը տեղեկացնելու բանավոր ձև էր: Այն հաղորդում էր ինչ-որ հրատապ իրավիճակի մասին, բացահայտում օրինազանցներին, խոսողի կարծիքը ներկայացնում կառավարման խնդիրների շուրջ և առաջարկում դրանք լուծելու ուղիներ: Հետևաբար, ի տարբերություն երախտագիտության հուշագրի կամ խնդրագրի, սեփական տեսակետը կայսերը ներկայացնելու համար ստեղծված այս գրական երկը պետք է լինի օբյեկտիվ, զուսպ ու հակիրճ և կախված չլինի խոսողի տրամադրությունից: Այս դիտարկումը մինչ օրս էլ պաշտոնական հաղորդագրությունների պարտադիր պայմաններից է:

Մեջբերումներ 引例.

Յոուն կամ կայսերն ուղղված հուշագիրը պետք է լինի օր-յեկտիվ, անկեղծ ու ճշմարտացի: Առաջնային նպատակը հիմնախնդրի լիարժեք պարզաբանումն ու վերլուծությունն է: Կայսերն ուղղված այս պատգամը պետք է գրվի ամուր համոզմունքով, որպեսզի պսակվի հաջողությամբ: Գրողը պետք է ամբողջությամբ տիրապետի բուն նյութին, որպեսզի կարողանա ամենայն մանրամասնությամբ հետազոտել հարցը, խնդիրը տեղում լուծելու համար հղում անի անցյալի փորձառությանը և բազմաթիվ խնդիրների լուծման մեջ սահմանի առանցքային գործոնները: Սրանք են այն հիմնական տարրերը, որոնք կարևոր են լավ հուշագիր գրելու համար (Լիու Սյե. «Գրական միտքն ու վիշապներ քանդակելը»):

Մեփական տեսակետն արտահայտելու համար *ցիի* կամ հուշագրի կիրառումը տարածված երևույթ է դեռևս Չին դինաստիայի ժամանակներից: Տեսակետների արտահայտման ու պետական հարցերի քննարկման համատեքստում այս ժանրն ընդհանուր հուշագրերի (ցոու) ենթատեսակ է, որոնք հանձնում էին կայսերը: Այսպիսի հուշագրեր ներկայացվում էին նաև ազնվականի տիտղոսից հրաժարվելու կամ կայսեր կողմից շնորհված պարգևի համար երախտագիտություն հայտնելու նպատակով: Այս իմաստով դրանք ընդհանուր հուշագրերի (բիաո) ենթատեսակ են, որոնք հանձնվում էին կայսերը: Անկեղծ տեսակետ հայտնելու համար հուշագիր գրելիս պետք է զգույշ լինել բառամթերքի օգտագործման մեջ և պահպանել կանոններն ու օրենքները: Հուշագիրը պետք է լինի իմաստային առումով հակիրճ, ընդգծի առանցքային փաստերն ու փաստարկները և ունենա համոզիչ ոճ: Այն պետք է լինի պերճախոս, բայց ոչ չափազանց աչքի ընկնող: Սրանք են մարդու տեսակետը հայտնող լավ հուշագրի հիմնական պայմանները (Լիու Սյե. «Գրական միտքն ու վիշապներ քանդակելը»):

**Պատվիր ուսուցիչներին և հարգիր կանոնները
ցունչի-ջունդաո 尊师重道**

Եզրույթը նշանակում է պատվել ուսուցիչներին և հարգել կանոնները: Այստեղ կանոնները (ֆիզիկական) տիեզերքի օրենքներն են, ինչպես նաև աշխարհիկ ճշմարտություններն ու բարոյական սկզբունքները: Ուսուցիչներին հարգելն ավանդական չինական առաքինություն է, իսկ կանոններ հարգելը՝ չինական ավանդական մշակույթի կարևոր առանձնահատկություն: Ուսուցիչը կանոնները խթանող և տարածող է, հետևաբար ուսուցիչներին պատվելն ու կանոնները հարգելը նույն երևույթի երկու կողմն են: Հին ժամանակներից ի վեր սա համարվել է երկրի զարգացման ու բարգավաճման կարևոր նախապայման: Այն նաև լավ կառավարման կարևոր ցուցիչ է:

Մեջբերումներ 引例.

Եթե ուզում եք, որ պետությունը բարգավաճի, պետք է հարգել ուսուցիչներին... Եթե պետությունը քայքայվի, ուսուցիչներին կարհամարհեն (Սունցի):

Բոլոր լուսավորյալ կառավարիչները պատվում են ուսուցիչներին ու հարգում օրենքները («Ուշ Հան դինաստիայի պատմություն»):

Հասկացությունների ցանկ 术语表

英文	中文
Ազատի՞ր միտքը, որ վայելեն աշխարհը	虚己以游世
Ազնվականը գործիք չէ	君子不器
Ամուր կառչիր ոսկե միջինից	允执厥中
Անիտյա / Փոփոխականություն	无常
Անկախ	游
Անճոռնիություն / Չոու	丑
Արհեստավարժ բժիշկը պետք է գերազանց հմտություններ և անկեղծություն ունենա	大医精诚
Արհեստավորը պիտի սրի իր աշխատանքային գործիքները, որ աշխատի	工欲善其事, 必先利其器
Արտասանել զգացմունքներով	讽咏
Բարդություն՝ պարզության մեջ, և լարվածություն՝ լռության տակ	发纤秣于简古, 寄至味于淡泊
Բարեբախտությունն ու դժբախտությունը միախուսված են	福祸相倚
Բարեգութ մարդը փայլայում է իրեն	仁者自爱
Բարոյական խրատներ՝ ուղեկցված զգացմունքներով	情教
Բարություն	慈
Բենուու / Նախաստեղծ չ-ություն	本无
Բնատեսարանի ուժը՝ դյույմերով	咫尺有万里之势
Բնության կոնստանտ օրենքները	常
Բողիի	菩提
Բովանդակությունն ավելի էական է, քան հռետորաբանությունը	文以意为主

Բուդդիստիստություն / Բուդդա-էություն	佛性
Գործիր առանց տեսության ու տրամաբանության: Աշխատիր չընկնել լեզվի ծուղակները	不涉理路, 不落言筌
Դասականների իմացություն	经学
Դատապարտում և խրատ	檄移
Դատարկությունը՝ որպես աննյութականություն	
Բռնապետական կառավարում	不真空
Երախտագիտության հուշագիր կամ խնդրագիր	章表
Ձգացմունքներն արտահայտվում են երաժշտական պոեզիայում	情发于声
Ջոհաբերական արարողություն	祭礼
Ջոհաբերություն / Ներքող զոհաբերական արարողությանը	封禅
Ջորջերը պիտի առաջ շարժվեն հոսող ջրի պես	兵形象水
Էթիկա	伦理
Ընդհանուր որակների գնահատում	程器
Թագավորական տիտղոս	年号
Թեթևություն և պարզություն	易简
Իմաստուն	圣人
Լի. Կրակի խորհրդանիշը	离
Խիզախորեն գործիր հանուն արդար գործի	见义勇为
Խիզախությունը ոչ մի գործողություն չձեռնարկելն է	勇于不敢
Խնայողություն	俭
Կայսր	皇帝
Կայսրերի տաճարային տիտղոսներ	庙号
Հավասարություն	平等
Հեքսագրամներով տեքստեր	卦爻辞
Հնչյունային և ռիթմիկ օրինաչափություններ	声律
Ծեծված արտահայտությունները վերացնելու անհրաժեշտություն	陈言务去

Կայսերական հրովարտականեր	诏策
Կանոններ	则
Կարդա տասը հազար գիրք և ճամփորդիր տասը հազար լի	读万卷书，行万里路
Հետմահու տիտղոս	谥号
Հինգ զսարդ ուժ	五伦
Հոլիստիկ ուսմունքներ	宗教
Հուշագիր կամ հայտարարություն՝ կայսերը սեփական տեսակետն արտահայտելու համար	奏启
Ձգտիր գիտելիքի՝ գումարելով. հետևիր Ղաոյին՝ հանելով	为学日益，为道日损
Չևով տարբեր, բայց հոգով՝ նման	不似之似
Մաքրիր միտքը, որ վայելես պատկերը	澄怀味像
Մաքուր և անպաճույճ	纯素
Մեծ պետությունը չպետք է գոռոզանա	大国者下流
Մեծարում և գովաբանություն	颂赞
Մեկնաբանություն և առաջարկ	议对
Մոլեգնություն, չիմացություն, տարակուսանք	痴
Մտքի հարյուր դպրոց	诸子百家
Մտքի հարյուր դպրոցի ուսումնասիրություն	诸子学
Նախնյաց տաճար	宗庙
Ներդաշնակություն	和谐
Նիրվանա	涅槃
Շնորհի և վշտի միաձուլում	情兼雅怨
Ոչ նյութական էություն	恍惚
Չտարվել պատկերված առարկաներով, բայց և չանջատվել դրանցից	不黏不脱，不即不离
Սիրիր երկիրն այնպես, ինչպես ընտանիքն են սիրում	爱国如家
Սկսիր զգացմունքներով և վերահսկիր դրանք վայելչությամբ	发乎情，止乎礼义

Չափավոր բարեկեցություն	小康
Չենի տան դարպասի մոտ` ձյան տակ կանգնած	程门立雪
Պահպանիր ոսկե միջինը	时中
Պատերազմը մղում են` բռնությունը կանխելու և չարիքն արձատսելիլ անելու համար	兵者，所以禁暴除害也
Պատվիր ուսուցիչներին և հարգիր կանոնները	尊师重道
Պատրաստակամորեն բարեգործություն և առաքինություն դրսևորիր	为仁由己
Պարկեշտ մարդ	贤人
Պոեզիա գրիր` զգացմունքների ու ձգտումների արտահայտելու համար	陈诗展义
Պրածնապտի / Նշում	假名
Պրեֆեկտուրաներ և նահանգներ	郡县
Սգա հանգուցյալներին և հիշիր անցավորներին	慎终追远
Սգո ծեսեր	丧礼
Սուվսավաթիվուհա / Մաքուր երկիր	净土
Վշտալի տեսարան պատկերիր` երջանկություն արտահայտելու համար	哀景写乐
Տեսարան, որում ներառված է ես-ը. տեսարան, որում ներառված չէ ես-ը	有我之境，无我之境
Տեքստային բաղադրիչներ / Ջան ծու (Շանոթագրական աշխատանք)	章句
Տրաիդիատուկա / Գոյության երեք ոլորտ	三界
Ըուվա / Նյութ	色
Ուսմունքների դասակարգում	判教
Ուսումնասիրել պատկերները	观象
Ուրիշների հետ վարվիր այնպես, ինչպես թեզ հետ ես վարվում	视人如己
Փաստարկված և համոզիչ երկեր	论说
Փարթամ գեղեցկություն	丰腴
Փոխանցիր թե՛ այն, որ հավաստի է, թե՛ այն, որ անճշտելի է	信以传信，疑以传疑

Քան. ջրի խորհրդանիշը	坎
Քաջալերիչ բարին ու պատժիչ չարը	赏善罚恶
Քլեսա / Չարչարանք	烦恼
Օրհնություն և հավատարմության երդում	祝盟
Օրենքը բռնությունը դադարեցնելու և լավ վարքագիծը խրախուսելու համար է	法者，所以禁暴而率善人也
Ֆիզիկական առանձնահատկություններ	物色

**Չինաստանի պատմության
հակիրճ ժամանակագրություն 中国历史年代简表**

夏 Սիա դինաստիա		մթա 2070-1600
商 Շան դինաստիա		մթա 1600-1046
周 Ջոու դինաստիա		մթա 1046-256
周 Ջոու դինաստիա	西周 Արևմտյան Ջոու դինաստիա	մթա 1046-771
	东周 Արևելյան Ջոու դինաստիա	մթա 770-256
秦 Յին դինաստիա		մթա 221-206
汉 Հան դինաստիա		մթա 206 – մթ 220
汉 Հան դինաստիա	西汉 Արևմտյան Հան դինաստիա	մթա 206-մթ 25
	东汉 Արևելյան Հան դինաստիա	25-220
三国 Երեք թագավորություն		220-280
三国 Երեք թագավորություն	魏 Վեյ թագավորություն	220-265
	蜀 Շու թագավորություն	221-263
	吴 Ու թագավորություն	222-280
晋 Չին դինաստիա		265-420
晋 Չին դինաստիա	西晋 Արևմտյան Չին դինաստիա	265-317
	东晋 Արևելյան Չին դինաստիա	317-420
南北朝 Հարավային և Հյուսիսային դինաստիաներ		420-589

南北朝 Հարավային և հյուսիսային դինաստիաներ	南朝 Հարավային դինաստիաներ		420-589
	南朝 Հարավային դինաստիաներ	宋 Սուն դինաստիա	420-479
		齐 Ցի դինաստիա	479-502
		梁 Լյան դինաստիա	502-557
		陈 Չեն դինաստիա	557-589
南北朝	北朝 Հյուսիսային դինաստիաներ		386-581
Հարավային և հյուսիսային դինաստիաներ	北朝 Հյուսիսային դինաստիաներ	北魏 Հյուսիսային Վեյ դինաստիա	386-534
		东魏 Արևելյան Վեյ դինաստիա	534-550
		北齐 Հյուսիսային Ցի դինաստիա	550-577
		西魏 Արևմտյան Վեյ դինաստիա	535-556
		北周 Հյուսիսային Ջոու դինաստիա	557-581
		隋 Սույ դինաստիա	
唐 Թան դինաստիա			618-907
五代 Հինգ դինաստիաներ			907-960
Հինգ դինաստիաներ	后梁 Ուշ Լյան դինաստիա		907-923
	后唐 Ուշ Թան դինաստիա		923-936
	后晋 Ուշ Չին դինաստիա		936-947
	后汉 Ուշ Հան դինաստիա		947-950
	后周 Ուշ Ջոու դինաստիա		951-960

宋 Սուն դինաստիա		960-1279
宋 Սուն դինաստիա	北宋 Հյուսիսային Սուն դինաստիա	960-1127
	南宋 Հարավային Սուն դինաստիա	1127-1279
辽 Լյաո դինաստիա		907-1125
金 Չին դինաստիա		1115-1234
元 Յուան դինաստիա		1206-1368
明 Մին դինաստիա		1368-1644
清 Ցին դինաստիա		1616-1911
中華民國 Չինաստանի Հանրապետություն		1912-1949
中华人民共和国 Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն		հիմնադրվել է 1949 թվականի հոկտեմբերի 1-ին

Բովանդակություն 目录

Վշտալի տեսարան պատկերիր՝ երջանկություն արտահայտելու համար	7
այ ձին սիե լե 哀景写乐 Միրիր երկիրն այնպես, ինչպես ընտանիքն են սիրում	8
այ գոտ ոռու ձիա 爱国如家 Բռնապետական կառավարում	9
բադաո 霸道 Բենուու / Նախաստեղծ չ-էություն	10
բենվու 本无 Չորքերը պիտի առաջ շարժվեն հոսող ջրի պես	11
բին սին սիան շույ 兵形象水 Պատերազմը մղում են՝ բռնությունը կանխելու և չարիքն արմատախիլ անելու համար	12
բին ջե, սուոյի ձին բաո չու հայ յե 兵者，所以禁暴除害也 Չտարվել պատկերված առարկաներով, բայց և չանջատվել դրանցից	13
բու միան բու տուո, բու ջի բու լի 不黏不脱，不即不离 Գործիր առանց տեսության ու տրամաբանության: Աշխատիր չընկնել լեզվի ծուղակները	15
բու շե լիլու, բու լուո յանչուան 不涉理路，不落言筌 Չևով տարբեր, բայց հոգով՝ նման	16
բուսիջիսի 不似之似 Դատարկությունը՝ որպես աննյութականություն	18
բուջենկուն 不真空 Բնության կոնստանտ օրենքները	18
չան 常 Պոեզիա գրիր՝ զգացմունքներդ ու ձգտումներդ արտահայտելու համար	19
չեն շի ջան յի 陈诗展义 Ծեծված արտահայտությունները վերացման անհրաժեշտություն	21
չեն յան վու ցու 陈言务去	

Չենի տան դարպասի մտտ` ձյան տակ կանգնած	22
չենմեն-լիսյուե 程门立雪	
Ընդհանուր որակների գնահատում	23
չենցի 程器	
Մաքրի միտքը, որ վայելես պատկերը	24
չեն հուայ վեյ սյան 澄怀味像	
Մոլեգնություն, չինացություն, տարակուսանք	25
չի 痴	
Անճոռնիություն / Չոու	26
չու 丑	
Մաքուր և անպաճույճ	28
չունսու 纯素	
Բարություն	29
ցի 慈	
Մեծ պետությունը չպետք է գոռոզանա	29
դա գուո ջե սյա լիու 大国者下流	
Արհեստավարժ բժիշկը պետք է գերազանց	
հմտություններ և անկեղծություն ունենա	31
դա յի ձինչեն 大医精诚	
Կարդա տասը հազար գիրք և ճամփորդի	
տասը հազար լի	32
դա ուան ջուան շու, սին ուան լի լու 读万卷书, 行万里路	
Սկսիր զգացմունքներով և վերահսկիր դրանք	
վայելչությամբ	33
նա հու ցին, ջի հու լիյի 发乎情, 止乎礼义	
Բարություն` պարզության մեջ, և լարվածություն`	
լուրջան տակ	34
Ֆա սյաննուն յու ձիանգու, ձի ջիուեյ յու դանբո 发纤秣于简古,	
寄至味于淡泊	
Օրենքը բռնությունը դադարեցնելու և լավ	
վարքագիծը խրախուսելու համար է	35
Ֆա ջե, սուոյի ձին բաո էր շուայ շանրեն յե 法者, 所以禁暴而	
率善人也	
Բլեսա / Չարչարանք	36
Ֆաննաո 烦恼	
Փարթամ գեղեցկություն	37
ֆենյու 丰腴	

Չոհաբերություն / Ներքող զոհաբերական արարողությանը	38
ֆենշան 封禪 Արտասանել զգացմունքներով	40
ֆենյուն 讽咏 Բուրբիադիատու / Բուրդա-էություն	41
ֆոսին 佛性 Բարեբախտությունն ու դժբախտությունը միահյուսված են	42
ֆու հուո սյան յի 福祸相倚 Արհեստավորը պիտի սրի իր աշխատանքային գործիքները, որ աշխատի	43
գուն յու շան ցի շի, բի սիան լի ցի ցի 工欲善其事, 必先利其器 Հեքսագրամներով տեքստեր	44
գուայաոցի 卦爻辞 Ուսումնասիրել պատկերները	45
գուանսյան 观象 Ներդաշնակություն	47
հեսիե 和谐 Կայսր	48
հուանդի 皇帝 Ոչ նյութական էություն	49
հուանհու 恍惚 Չոհաբերական արարողություն	49
ձիլի 祭礼 Պրաժնապտի / Նշում	50
ձիամին 假名 Խնայողություն	51
ձիան 俭 Խիզախորեն գործիր հանուն արդար գործի	52
ձիանյի-յունուեյ 见义勇为 Դասականների իմացություն	53
ձինսյուե 经学 Սուխավաթիվյուհա / Մաքուր երկիր	54
ձինթու 淨土 Ազնվականը գործիք չէ	56
ձունցի-բուցի 君子不器	

Պրեֆեկտուրաներ և նահանգներ	57
ձունսիան 郡县	
Քան. Ջրի խորհրդանիշը	58
քան 坎	
Լի. Կրակի խորհրդանիշը	59
լի 离	
Էթիկա	60
լունլի 伦理	
Փաստարկված և համոզիչ երկեր	61
լունշուո 论说	
Կայսրերի տաճարային տիտղոսներ	62
միահատ 庙号	
Թագավորական տիտղոս	64
նյանհատ 年号	
Նիրվանա	65
նիեփան 涅槃	
Ուսմունքների դասակարգում	66
փանձիաո 判教	
Հավասարություն	68
փինդեն 平等	
Բողիի	69
փուփի 菩提	
Չգացմունքներն արտահայտվում են	
երաժշտական պոեզիայում	70
ցին ֆա յու շեն 情发于声	
Շնորհի և վշտի միաձուլում	71
ցին ձիան յա յուան 情兼雅怨	
Բարոյական խրատներ՝ ուղեկցված զգացմունքներով	72
ցինձիաո 情教	
Բարեգութ մարդը փայփայում է իրեն	74
ռենջեցիայ 仁者自爱	
Տրախիդիատուկա / Գոյության երեք ոլորտ	75
սանձիե 三界	
Սգո ծեսեր	76
սանլի 丧礼	
Բուփա / Նյութ	77
սե 色	

Քաջալերիլ բարին ու պատժիլ չարը	78
շանչան-ֆան 赏善罚恶	
Սգա հանգուցյալներին և հիշիլ անցավորներին	79
շեն ջուն ջույ յուան 慎终追远	
Հնչյունային և ռիթմիկ օրինաչափություններ	80
շենլու 声律	
Իմաստուն	82
շենրեն 圣人	
Պահպանիլ ոսկե միջինը	83
շիջուն 时中	
Ուրիշների հետ վարվիլ այնպես, ինչպես	
քեզ հետ ես վարվում	84
շի րեն րու ձի 视人如己	
Հետմահու տիտղոս	85
շիհաո 谥号	
Մեծարում և գովաբանություն	86
սունցան 颂赞	
Պատրաստակամորեն բարեգործություն	
և առաքինություն դրսևորիլ	87
ուեյ րեն յուու ձի 为仁由己	
Չգտիլ գիտելիքի՝ գումարելով.	
հետևիլ Դաոյին՝ հանելով	88
ունեն սյուն րի յի, ուեյ դաո րի սուն 为学日益, 为道日损	
Բովանդակությունն ավելի էական է,	
քան հռետորաբանությունը	89
ունեն յի յի ուեյ ջու 文以意为主	
Անխոյա / Փոփոխականություն	90
ուչան 无常	
Հինգ զապող ուժ	91
ուլուն 五伦	
Ֆիզիկական առանձնահատկություններ	92
ուսե 物色	
Դատապարտում և խրատ	94
սիյի 檄移	
Պարկեշտ մարդ	95
սյանրեն 贤人	

Չափավոր բարեկեցություն	96
սյաոքան 小康	
Փոխանցիր թե՛ այն, որ հավաստի է,	
թե՛ այն, որ անճշտելի է	98
սին յի չուան սին, յի յի չուան յի 信以传信, 疑以传疑	
Ազատիր միտքդ, որ վայելես աշխարհը	98
սու ձի յի յուու շի 虚己以游世	
Մեկնաբանություն և առաջարկ	99
յիդույ 议对	
Թեքնություն և պարզություն	101
յիձիան 易简	
Խիզախությունը ոչ մի գործողություն չձեռնարկելն է	102
յուն յու բու գան 勇于不敢	
Անկախ	103
յուու 游	
Տեսարան, որում ներառված է ես-ը. տեսարան,	
որում ներառված չէ ես-ը	104
յուու ուո ջի յին, ու ուո ջի ձին 有我之境, 无我之境	
Ամուր կառչիր ոսկե միջինից	106
յուն ջի ձուե ջուն 允执厥中	
Կանոններ	106
ցե 则	
Երախտագիտության հուշագիր կամ խնդրագիր	107
ջանբիաո 章表	
Տեքստային բաղադրիչներ / Չան ձու	
(Ծանոթագրական աշխատանք)	108
ջանձու 章句	
Կայսերական հրովարտականեր	110
ջանցե 诏策	
Բնատեսարանի ուժը՝ դյույմերով	111
ջիչի յուու ուանլի ջի շի 咫尺有万里之势	
Մտքի հարյուր դպրոց	113
ջուցի-բայձյա 诸子百家	
Մտքի հարյուր դպրոցի ուսումնասիրություն	114
ջուցիսյուե 诸子学	
Օրհնություն և հավատարմության երդում	115
ջումեն 祝盟	

Հովիտիկ ուսմունքներ	117
ցունձիառ 宗教	
Նախնյաց տաճար	118
ցունմիառ 宗庙	
Հուշագիր կամ հայտարարություն՝ կայսերը սեփական տեսակետն արտահայտելու համար	119
ցուցի 奏启	
Պատվիր ուսուցիչներին և հարգիր կանոնները	121
ցունչի-ջունդառ 尊师重道	
Հասկացությունների ցանկ 术语表	122
Չինական պատմության հակիրճ ժամանակագրություն 中国历史年代简表	127

**ՉԻՆԱԿԱՆ ՄՏՔԻ
ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ
ՀԻՄՆԱԿԱՆ
ՀԱՄԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

հատոր 8

Անգլերենից թարգմանությունը՝
Աստղիկ ԱԹԱԲԵԿՅԱՆԻ

Հրատ. խմբագիր՝ Հ. Ալեքսանյան
Սրբագրիչ՝ Թ. Մաթեոսյան
Էջադրումը՝ Թ. Հարությունյանի
Կապի ձեռավորումը՝ Ա. Բաղդասարյանի

Թուղթը՝ օֆսեթ, չափսը՝ 60x84 1/16: Ծավալը՝ 8,75 տպ. մամուլ
Տպարանակը՝ 500:

Տպագրվել է «Դիպակ պրես» հրատարակչության տպարանում
ԼՂՀ, Ստեփանակերտ, Հ. Հակոբյան

«ԳԵՂarm» հանդեսի մատենաշարով լույս են տեսել

- «Թատերախաղեր Արեւմտյան գրականությունից» - 2010
Իոսիֆ Բրոդսկի. «Տեղատարափի շաշունը» - 2011
Մ. Բախտին. «Դաստոնեակու պոետիկայի խնդիրները» - 2012
«Միրիուսի սրնգահարները»/Վ.Խլերնիկով, Ն. Գումիլյով,
Վ.Խոդասեիչ/ - 2012
Սերգեյ Դովլաթով. «Միայնակների երթը» - 2012
Յուրի Լոտման. «Միֆ.Անուն.Մշակույթ» - 2012
Վառլամ Շալամով. «Կոլիմյան պատմվածքներ»- 2012
Ժարկո Միլենիչ. «Լեոնը՝ հրաշագործի աշակերտը»- 2013
Պավել Ֆլորենսկի. «Իկոնոստաս» - 2014
Ռուս կոնցեպտուալ պոեզիա/ Դ.Պրիգով, Վ.Նեկրասով,
Լ.Ռուբինշտեյն/ - 2014
Հենրիխ Մապգիր. «Ձուգահեռ մարդը» - 2014
Վասիլի Գրոսման. «Կյանք եւ ճակատագիր» - 2014
«Կամուրջների խռովությունը.
մետամետաֆորիստներ» - 2015
Ալեքսանդր Սոլժենիցին. «Մատրյոնայի կավածքը»- 2015
Անդրեյ Պլատոնով. «Չեւենգուր. Գուրը.
Պատմվածքներ» - 2015
Արդի ռուսական վերլիբո (անթոլոգիա) - 2015
Չինաստանի մշակույթի քրեստոմատիա - 2015
Ջիդի Մաջիա. «Հրեղեն խոսքեր» - 2015
Մա Բայ. «Սրտի արձագանքներ» - 2015
Եվգենի Վոդյազկին. «Լավր» - 2015
Քայ Տյանսին. «Խաղաղ կյանքի երգը» - 2015
Ռուս այլախոհական պոեզիա (անթոլոգիա) - 2015
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 1) - 2016

Յու Ջիան. «Անձրեից պատսպարվող թռչունը» - 2016
 Պավել Բասինսկի. «Լեւ Տոլստոյ.
 Փախուստ դրախտից» - 2016
 Չժան Յզի-յան. «Երազ ծովի մասին» - 2016
 Վան Ջենչկի. «Երիտասարդ վանականի սիրո
 պատմությունը» - 2016
 Լյուդմիլա Պետրուշեւսկայա. «Սեր. երջանկություն.
 ռեպլիեմ» - 2016
 Անդրեյ Բելի. «Պետերբուրգ» - 2016
 «Դիկոռոսներ. Անհայտ պոետների ապաստան»
 (անթոլոգիա) - 2016
 Ռուս մինիմալիստներ (անթոլոգիա) - 2016
 Իձյե Թան. «Կոնֆուցիականությունը, ուղղալականությունը,
 դաոսիզմը, քրիստոնեությունը եւ շինական
 մշակույթը» - 2016
 Սյուն Շի-ի. «Երկնային կամուրջը» - 2016
 Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
 հասկացություններ (հատոր 2 եւ 3) - 2016
 Դոնգ Քիանգ. «Ամուսնություն» - 2017
 Դոնգ Քիանգ. «Կացարաններ» - 2017
 Ինգերորգ Բախման. «30-րդ տարին» - 2017
 Ջիդի Մաջիա. «Ընձառյուծից մինչեւ Մայակովսկի» - 2017
 Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
 հասկացություններ (հատոր 4) - 2017
 Անդրեյ Վոլոս. «Վերադարձ Փանջիռուղ» - 2017
 Դոնգ Քիանգ. «Թաղում» - 2017
 Դոնգ Քիանգ. «Փառատոներ» - 2017
 Դոնգ Քիանգ. «Ուտեստներ» - 2017
 Սյաո Յյան. «Վիշապի մորուքներն ընդդեմ
 նախագծերի» - 2017

Ուան Յուդիան. «Մերձակցության աստիճաններ» - 2017
Ֆյոդոր Սոլոգուր. «Չնչաղելը» - 2018
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 5) - 2018
Ու Չուն. «Չինական մշակույթ. փիլիսոփայություն» -2018
Մարտիրոս Ռբն. «Մոմերն իզուր են այրվել
մեղքերիս համար» - 2018
Ռեյսին Սյուրն. Սյուն ճու. «Չինաստանի յուրահատկու-
թյունները: Չինաստանի համաշխարհային
ժառանգությունը»- 2018
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 6) - 2018
Ադի ձայնը (20-րդ դարի հետաքստնական թվականների
սերնդի չին գրողների պատմվածքներ) -2019
20-րդ դարի ռուսական պատմվածք (անթոլոգիա) - 2019
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 7) - 2019
Գվինեթ Լյուիս. «Քառսի հրեշտակները» - 2020
Պավել Բասինսկի. «Լեւ Տոլստոյ. Ազատ մարդը» - 2020
Ցերինգ Նորբու. «Փրկված գառը» - 2020
Չժան Յավեն. «Դարերի կանչը» (Մտորումներ Հոնկոնգի
մասին. իրական պատմություն) - 2020
Կոնֆուցիոս. «Չրույցներ» - 2020



Էլ. հասցե՝ vogi.nairi@mail.ru
հեռ.՝ +37497252323